«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2019

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության Ոստիկանության կրթահամալիրի ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է հաստատության կողմից ներկայացված դիմումի համաձայն: Հավատարմագրման գործընթացը կազմակերպվում և համակարգվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և Լեհաստանից ժամանած 1 փորձագետից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, եվրոպական և հայաստանյան փորձագետների առջև դրված էր երկու խնդիր՝

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,
2) իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու բուհի հավակնությունների տեսանկյունից:

Սույն զեկույցն անդրադառնում է ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննության արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԵԲԿՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 14

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 23

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 23

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 23

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 27

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 27

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 30

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 39

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 46

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 51

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 56

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 61

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 65

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 69

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 73

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 79

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ 79

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 81

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 83

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 827

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 838

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 849

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի (այսուհետ՝ Կրթահամալիր կամ ՄՈՒՀ) փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Կրթահամալիրը, 2011թ.-ից գործող պետական հավատարմագրման չափանիշների և կարգի համաձայն, և մինչ այդ էլ հավատարմագրում չի անցել: Հավատարմագրման ներկա գործընթացին Կրթահամալիրը մասնակցել է իր դիմումի համաձայն:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ Կրթահամալիրն ունի առանցքային դերակատարություն ու պատասխանատվություն, որպես հանրապետությունում ոստիկանական կարդեր պատրաստող միակ գերատեսչական ուսումնական հաստատություն, ՀՀ Ոստիկանության համակարգում գործող ստորաբաժանումների համար կադրերի պատրաստման, վերապատրաստման, որակավորման բարձրացման, ոստիկանության ծառայողների մասնագիտական պատրաստվածության, անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձևավորման գործընթացում: Կրթահամալիրն իր առաքելությունն է համարում «բարձրագույն (իրավաբանական կրթությամբ (բակալավր և մագիստրոս), ինչպես նաև՝ հետբուհական մասնագիտական (իրավաբանական ուղղությամբ գիտամանկավարժական կադրերի պատրաստումը, ոստիկանության գործունեության հետ կապված հիմնախնդիրների գիտական մշակումը, իրավագիտության բնագավառում հետազոտությունների իրականացումը), նախնական, միջին մասնագիտական (ոստիկանական կրթությամբ մասնագետների պատրաստումը) և լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացումը, նշված կրթական ծրագրերով կրթության զարգացման ոլորտում պետական և հանրային անհրաժեշտությամբ պայմանավորված ռազմավարական ծրագրերի շրջանակներում գիտելիքների ստեղծումը, փոխանցումը և տարածումը»:

Կրթահամալիրը շնորհում է հետևյալ որակավորումները՝ ոստիկան (նախնական մասնագիտական կրթություն), ոստիկանության սպա (միջին մասնագիտական կրթություն), իրավագիտության բակալավր և իրավագիտության մագիստրոս (բարձրագույն կրթություն):

2017-2021թթ. ռազմավարական պլանում (այսուհետ՝ ՌՊ) ձևակերպված են Կրթահամալիրի առաքելությունը, հեռապատկերը, ռազմավարական ուղղությունները, նպատակները և խնդիրները: Փորձագիտական խումբը ՌՊ-ի նպատակների և խնդիրների զգալի մասը հավակնոտ է գնահատում՝ հաշվի առնելով նաև մինչ այժմ Կրթահամալիրի զարգացման դինամիկան: ՄՈՒՀ-ն ինքն էլ նման եզրահանգման է եկել և սկսել է ռազմավարության վերանայման գործընթաց:

---

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1. Փորձագիտական խմբի անդամների համառոտ ինքնակենսագրականները:

Կրթահամալիրը բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցման ձևերով իրականացնում է իրավագիտության մասնագիտության կրթական ծրագրեր՝ վճարովի և անվճար հիմունքներով: Վերջիններս տարբերվում են ինչպես կրթության բովանդակությամբ, այնպես էլ ուսանողներին տրվող արտոնություններով: Այդ մասնագիտությունների համար չկան հաստատված պետական կրթական չափորոշիչներ: Միջին մասնագիտական ծրագրի հիմքում դրված է ԿԳ նախարարի կողմից հաստատված պետական կրթական չափորոշիչը: Ծրագրերը կառուցված են կրեդիտային հենքով: Կրթական ծրագրերի մշակումը վերջնարդյունքահեն մոտեցմամբ իրականացվել է 2019թ-ին, իսկ առարկայական ծրագրերը կրթական վերջնարդյունքներով նկարագրվել են դեռ 2017թ-ին: Կրթահամալիրի ակադեմիայի և քոլեջի կրթական ծրագրերն ըստ էության միայն բարդության աստիճանով են տարբերվում և առարկաների ժամաքանակներով, նաև ոչ մասնագիտական որոշ առարկաներ են ավելացված: Փորձագիտական խմբի գնահատմամբ այդ ծրագրերի բովանդակային տարբերակման անհրաժեշտություն կա՝ պայմանավորված ՈԱՇ-ի տարբեր մակարդակներում որակավորումների շնորհմամբ: Դրական են գնահատվում ուսանողակենտրոն ուսուցմանն ուղղված ՄՈՒՀ-ի ջանքերը՝ մեթոդների բազմազանեցման, կրթական գործընթացում ՏՏ կիրառման և ուսումնառությանը նպաստող անմիջական մթնոլորտի ձևավորման տեսանկյունից: Միևնույն ժամանակ, գնահատման քաղաքականության, պրակտիկայի կազմակերպման մեթոդաբանության հստակեցման կարիք կա:

Ուսանող-դասախոս (հաստիքային) հարաբերակցությունը 2018-2019 ուստարում կազմել է 21, ուսանող-վարչակազմը՝ 33: Պրոֆեսորադասախոսական կազմի (ՊԴ կազմ) միջին տարիքը 44 է: Բացի ոստիկանության ծառայող հիմնական դասախոսներից, հրավիրվում են նաև պայմանագրային հիմունքներով քաղաքացիական անձինք: Փորձագիտական խումբը բարձր է գնահատում Ոստիկանության փորձառու ծառայողների ներգրավումը դասախոսական կազմում, ինչը հնարավորություն է տվել նրանց պրակտիկ գիտելիքներն ու փորձը փոխանցել ուսանողներին: Բացի այդ Կրթահամալիրի շրջանավարտների մեծ տոկոսը ՊԴ կազմում նպաստում է անձնակազմի կայունությանն ու երիտասարդացմանը: ՊԴ կազմի մասնագիտական և մանկավարժական որակների գնահատման միջոցառումների ոչ ամբողջական և ոչ համակարգված իրականացումը հնարավորություն չի տալիս վերհանել հիմնական խնդիրները և վերապատրաստումները կազմակերպել՝ հիմնվելով գնահատման արդյունքների վրա: Դա վտանգվում է վերապատրաստումների նպատակայնությունը և ծախսերի արդյունավետությունը: Ուսանողները և շրջանավարտները գոհ են ՊԴ կազմից:

Կրթահամալիրում առկա ենթակառուցվածքներն ու ռեսուրսները ձևավորում են ուսումնառության արդյունավետ միջավայր և բավարար են մասնագիտական կրթության տրամադրման համար: Ուսանողների պրակտիկ հմտությունների զարգացման համար ոստիկանության ստորաբաժանումների ռեսուրսները ևս անուղղակի կերպով օգտագործվում են պրակտիկաների ժամանակ: Միաժամանակ, որակի շարունակական բարելավման և կայունության համար մասնագիտական կաբինետները, լաբորատորիան և լսարանները արդիական տեխնիկական միջոցներով վերազինման կարիք ունեն: Հատկանշական է, որ արդեն իսկ միջոցներ են ձեռնարկվել նորացնելու ու վերազինելու մարզական գույքը և կրիմինալիտիկայի լաբորատորիան: Ֆինանսական մուտքերը

ձևավորվում են առավելապես պետական ֆինանսավորումից, նաև ուսանողների վարձավճարներից և այլ աղբյուրներից: Ֆինանսական միջոցների բաշխման և վերահսկման կենտրոնացված քաղաքականությունն իրականացվում է ՀՀ Ոստիկանության կողմից: Փորձագիտական խումբը որոշ ռազմավարական ուղղություններում (օրինակ՝ հետազոտություն, միջազգայնացում) ֆինանսական ներդրումների խիստ անհրաժեշտություն է տեսնում՝ ռազմավարական նպատակներն իրատեսական դարձնելու համար:

Ուսանողների հավաքագրման և ընդունելության գործող մեխանիզմները Կրթահամալիրին թույլ են տվել ապահովել ուսանողների կայուն համակազմ: Ուսանողների կրթական կարիքների վերհանման համար կիրառվող հարցումները դեռ նոր են ներդրվել և բավարար արդյունավետությամբ չեն գործում: Փոխարենը, հատկանշական է Կրթահամալիրի ՊԴ և ղեկավար կազմի անմիջական կապը ուսանողների հետ, նրանց հուզող հարցերն ու խնդիրները լսելու և լուծում տալու պատրաստակամությունը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ուսանողներին լրացուցիչ խորհրդատվությունների և օժանդակությունների տրամադրման գործող մեխանիզմները և անձնակազմի հասանելիությունը ուսանողներին: Կրթահամալիրի թերևս ամենաուժեղ կողմերից է պետպատվերով սովորողների կարիերային նպաստող ծառայության առկայությունը, որը թույլ է տալիս 100% զբաղվածություն ապահովել ավարտելուց հետո: Սակայն մտահոգիչ է վճարովի համակարգի շրջանավարտների (բացի առաջադիմությամբ աչքի ընկնող մի քանի ընտրվածներից) կարիերային աջակցելու գործընթացների բացակայությունը, ինչը բացասաբար է ազդում նրանց հետ հետագա կապի պահպանման և որակավորման շնորհման պատասխանատվության վրա:

Հետազոտական հետաքրքրություններն ու առաջնահերթությունները Կրթահամալիրի կողմից հստակեցվել են ոլորտային թեմաների միջոցով: Սակայն դրանք չեն դրվել Կրթահամալիրի գիտահետազոտական (ԳՀ) աշխատանքների առանցքում, և արդյունքները շոշափելի չեն այդ ոլորտներում: ԳՀ ոլորտի սահմանված տեսլականի իրականացման համար ՄՈՒՀ-ի զարգացման իրատեսական քաղաքականության և համապատասխան ընթացակարգերի բացակայությունը չի ապահովում նպատակների և փաստացի գործունեության միջև կապը: Չնայած Կրթահամալիրի գիտական ամսագրում անվճար տպագրվելու հնարավորությանը՝ ստեղծված չեն խրախուսման մեխանիզմներ, որոնք կնպաստեին ԳՀ ոլորտի զարգացմանը: Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման համար գործող ուսանողական գիտական խմբակները իրենց ուսումնական բնույթով չեն նպաստում ուսանողների մոտ հետազոտական կարողությունների զարգացմանը: ՊԴ կազմի հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածությունը շատ թույլ է:

Չնայած, որ Կրթահամալիրն իր ռազմավարական փաստաթղթերով պլանավորում է ընդլայնել արտաքին կապերը և զարգացնել միջազգայնացման գործընթացները, սակայն գործողությունները չեն համապատասխանեցվել դրանց պլան-ժամանակացույցներում նախատեսված միջոցառումներին և ժամկետներին: Միջազգային համագործակցության ազդեցությունը ՄԿԾ-ների և կրթական գործընթացի վրա գրեթե բացակայում է, ուսանողների ու դասախոսների շարժունության ծրագրերը դեռևս հեռանկարում են՝ չնայած դրա հնարավորությունը ընձեռող համաձայնագրեր կան: Փորձագիտական խումբը գտնում է, որ

Կրթահամալիրը լիարժեքորեն չի օգտագործում ստեղծված արտաքին կապերն իր ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման, կրթական և հետազոտական ծրագրերի զարգացման համար: Օտար լեզվի իմացության ցածր մակարդակը միջազգայնացման գործընթացներին խոչընդոտող հիմնական պատճառներից մեկն է:

Գործող կառավարման համակարգը հաստատված կառուցվածքով ընդհանուր առմամբ համապատասխանում է Կրթահամալիրի ռազմավարական նպատակներին և խնդիրներին: Կառավարման համակարգի կանոնակարգվածությանը նպաստում է նաև ոստիկանական ստորաբաժանման կարգավիճակը, ինչն իր հերթին ապահովում է որոշումների կայացման և ենթակայության հստակ աստիճանակարգում: Կառավարման թափանցիկությունն ապահովվում է փաստաթղթերի հասանելիության, տեղեկատվական ներքին համակարգի և ինտերնետային կայքի միջոցով: Կառավարման համակարգը թույլ է տալիս թե՛ դասախոսներին և թե՛ ուսանողներին ներկայացնելու իրենց շահերը կառավարչական գործընթացներում: Որակի ամբողջական կառավարման սկզբունքի ներդրման տեսանկյունից գործընթացների վարչարարության մեջ դեռևս առկա են միայն պլանավորման և մասամբ իրականացման փուլերը:

Կրթահամալիրի որակի ապահովման (ՈԱ) համակարգը դեռ նոր է ներդրվում, բավականաչափ ինտեգրված չէ գործընթացներում և համակարգված չի գործում: Կրթության որակի ապահովման բաժանմունքը (ԿՈԱԲ) դեռևս չի հավաքագրում բավարար տվյալներ ծրագրերի և այլ մատուցվող ծառայությունների արդյունավետության գնահատման և դրանց որակի մասին հաշվետվողականության համար: Փաստացի իրականացվող գործընթացները դեռևս չեն ապահովում Կրթահամալիրի կողմից հաստատված ՈԱ քաղաքականության և հայեցակարգի իրականացումը: Ներկայումս իրականացվող ՈԱ գործընթացները էական ազդեցություն չունեն ՄԿԾ-ների և Կրթահամալիրի գործունեության բարելավման վրա:

ԿՈԱԲ-ն ապահովված է անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներով: Սակայն գործունակ թիմ ստեղծելու համար ԿՈԱԲ անձնակազմը և ՈԱ պատասխանատուները մասնագիտական վերապատրաստումների խիստ կարիք ունեն: Բաժանմունքը դեռևս չի ձևավորել շահակիցների մոտ վստահության մթնոլորտ ՈԱ գործընթացների անհրաժեշտության առումով:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1) ՄՈՒՀ-ի ռազմավարության և պլան-ժամանակացույցի, կրթական և այլ գործընթացները կանոնակարգող փաստաթղթային հենքի առկայությունը,
2) Ուժային կառույցի բնույթով պայմանավորված՝ կառավարման համակարգի հստակ գործարկումը՝ աստիճանակարգային ենթակայության և հաշվետվողականության հստակ մեխանիզմով,
3) Ներքին շահակիցների (ուսանողների և դասախոսների) և ՀՀ Ոստիկանության՝ որպես գլխավոր պատվիրատուի, ներգրավվածությունը կառավարման կոլեգիալ մարմնում,
4) Կրթական ծրագրերի կառուցվածքային ամբողջականությունը, ՀՀ Ոստիկանության պահանջներին համահունչ առարկայական ծրագրերի շարունակական վերանայումները,
5) Ծառայողական հարուստ փորձ, մասնագիտական պրակտիկ կարողություններ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմը,

6) Անվճար համակարգի բոլոր սովորողների համար հետագա ծառայողական կարիերայի ընձեռնման հնարավորությունը,
7) Միջազգային գիտաժողովների կազմակերպումը և անձնակազմի հետազոտական արդյունքների հրապարակումը ԲՈՀ-ի կողմից հաստատված ՄՈՒՀ-ի գիտական ամսագրում,
8) Ուսումնական գործընթացը կազմակերպելու համար լսարանային, տեխնիկական, մասնագիտական կաբինետային, գրադարանային, ծրագրային և այլ անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը,
9) Հասարակությանը գիտելիքի և արժեքների փոխանցման, լրացուցիչ մատուցվող ծառայությունների ուղղությամբ ցուցաբերած մեծ ավանդը և դերակատարությունը,
10) Միջազգային ոլորտային կառույցներին և ասոցիացիաներին անդամակցությունը, միջազգային կապերի հաստատման հնարավորությունները,
11) Որակի ապահովման հաստատված քաղաքականության և հայեցակարգի առկայությունը:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1) ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակների և խնդիրների ձևավորման մեջ ներքին և արտաքին շահակիցների ոչ բավարար մասնակցությունը, աշխատաշուկայի վերլուծության բացակայությունը,
2) Ռազմավարական պլանից բխող միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման, առաջընթացի գնահատման ցուցիչների կիրառման բացակայությունը,
3) ՄՈՒՀ-ի վրա ազդող արտաքին և ներքին գործոնների միասնական համակարգված ուսումնասիրության պակասը,
4) Որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի ոչ ամբողջական կիրառումը ՄՈՒՀ-ի գործընթացներում, բարելավման գործընթացների՝ գնահատման արդյունքների հետ փոխկապակցման, վերհանված խնդիրների հաջորդիվ քայլերի բացակայությունը,
5) Կրթական ծրագրերի մշտադիտարկման և բարելավման մեխանիզմների, բենչմարքինգի իրականացման փորձի բացակայությունը,
6) Ուսանողների թույլ ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում,
7) Դասախոսական կազմի գնահատման արդյունքների ամբողջական համակարգի, և կատարելագործման իրականացվող միջոցառումների այդ գնահատումների հետ կապի բացակայությունը,
8) Այլ բուհերի հետ համագործակցության շրջանակներում համատեղ հետազոտական ծրագրերի բացակայությունը, առաջնահերթ սահմանված թեմատիկ ոլորտներում դասախոսական կազմի հետազոտության շոշափելի ձեռքբերումների պակասը,
9) Ֆինանսական պլանավորման բացակայությունն ըստ ռազմավարական նպատակների և խնդիրների,
10) Կրթահամալիրի հաշվետվությունների ոչ վերլուծական բնույթը և հասարակությանը հասանելի չլինելը,
11) Կրթական գործընթացում միջազգայնացմանը նպաստող միջավայրի և կրթական ծրագրերի վրա միջազգային համագործակցության ազդեցության բացակայությունը,

12) Այլ կրթական հաստատությունների հետ նմանատիպ ծրագրերի շրջանակներում ուսանողների և դասախոսական կազմի շարժունության բացակայությունը,
13) Որակի ներքին ապահովման համակարգի թույլ ազդեցությունը ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերի և այլ գործընթացների որակի բարելավման վրա, ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության պակասը որակի ապահովման գործընթացներում:

ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Առաքելությունը և նպատակները

1) Վերանայել հաստատության հավակնությունները, ռազմավարական նպատակները և խնդիրները՝ առկա հնարավորությունների և ոլորտային առանձնահատկությունների վերլուծության հիման վրա, մշակման աշխատանքներում ներգրավել շահակիցներին,
2) Վերամշակել ՌՊ իրականացման պլան-ժամանակացույցը՝ կատարելով միջոցառումների և դրանց համար անհրաժեշտ ռեսուրսների (այդ թվում՝ նյութական և ֆինանսական) հստակ բաշխում,
3) Սահմանել ՌՊ առաջընթացի գնահատման հստակ ցուցիչներ և իրականացնել ռազմավարական նպատակների և խնդիրների իրականացման արդյունավետության վերլուծություն՝ այդ ցուցիչների կիրառմամբ,
4) Ներդնել առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավմանն ուղղված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Կառավարումն ու վարչարարությունը

5) Իրականացնել կառավարման համակարգի և դրա առանձին օղակների գործունեության արդյունավետության գնահատման կանոնակարգված գործընթաց՝ ռազմավարական նպատակներին համապատասխանության և անհրաժեշտ ռեսուրսներով ապահովվածության տեսանկյունից,
6) Ապահովել ռազմավարական նպատակներից բխող կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների հստակ տարանջատումը, համապատասխան կանոնակարգերով դրանց ամրագրումը և ամբողջական իրականացումը,
7) Իրականացնել ՄՈՒՀ-ի վրա ազդող արտաքին և ներքին գործոնների միասնական համակարգված ուսումնասիրություն և արդյունքները ներդնել ռազմավարական ծրագրերի մշակման հիմքում,
8) Իրականացնել ՌՊ-ին համապատասխան ֆինանսական պլանավորում՝ բյուջեն կապակցելով ռազմավարական նպատակների և խնդիրների հետ՝ պլանի իրագործման ձախողումից խուսափելու համար,
9) Կազմել ռազմավարական պլանից բխող միջնաժամկետ և կարճաժամկետ հստակ պլաններ ստորաբաժանումների համար և արդյունքների վերլուծական հաշվետվություններ,
10) Վերանայել ՄՈՒՀ-ի քաղաքականության և ընթացակարգերի վարչարարությունը՝ ներդնելով որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքը բոլոր գործընթացներում,

11) Ստեղծել ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերի և այլ գործընթացների կառավարման և արդյունավետության գնահատման ու վերլուծության համար հավաքագրվող անհրաժեշտ տեղեկատվական բազա, այն հասանելի դարձնել շահակիցներին,
12) Մշակել շահակիցների տեղեկացվածության գնահատման մեխանիզմներ՝ տրամադրելով տեղեկատվություն ոչ միայն կրթական ծրագրերի բովանդակության, այլև դրանց որակի մասին:

Մասնագիտության կրթական ծրագրերը

13) Ձևակերպել ավելի չափելի վերջնարդյունքներ ՄԿԾ-ների համար՝ կատարելով շրջանավարտների կոմպետենցիաների համար պատվիրատուի պահանջների և աշխատաշուկայի վերլուծություններ,
14) Կազմակերպել կրեդիտային համակարգի վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացման միջոցառումներ՝ համակարգի ամբողջական ներդրմանը նպաստելու համար,
15) Իրականացնել ակադեմիայի և քոլեջի կրթական ծրագրերի բովանդակությունների հստակ տարանջատում՝ ՈԱԾ-ին համապատասխան որակավորումների շնորհման տարբերակում և արժանահավատություն երաշխավորելու համար,
16) Բարձրացնել գործնական և պրակտիկ պարապմունքների կազմակերպման արդյունավետությունը՝ ուսանողներին կարողությունների և հմտությունների ձևավորման վերջնարդյունքներին հասնելու նպատակով,
17) Հստակեցնել գործող գնահատման համակարգի մեթոդաբանությունը՝ ապահովելով կիրառվող մեթոդների համապատասխանությունը վերջնարդյունքներին,
18) Իրականացնել բենչմարքինգ համագործակից բուհերի հետ ՄԿԾ-ների բովանդակային համահունչության ապահովման և շարժունությանը նպաստելու համար,
19) Իրականացնել ՄԿԾ-ների մշտադիտարկում հաստատված կարգի համաձայն և ներդնել համապատասխան բարելավման մեխանիզմներ:

Ուսանողները

20) Կատարել ուսանողների հավաքագրման և ընդունելության գործընթացների որակական ուսումնասիրություններ՝ գնահատելու կիրառվող քաղաքականության արդյունավետությունը և գործընթացների օբյեկտիվությունը,
21) Մշակել ուսանողների՝ վարչակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույցեր,
22) Վերանայել ուսանողների կրթական, խորհրդատվական և ուսումնառությանը վերաբերող այլ կարիքների վերհանմանն ուղղված գործողությունները՝ դրանք դարձնելով ավելի նպատակային և հիմնված ուսանողների կարիքների վրա,
23) Քայլեր ձեռք առնել վճարովի համակարգի սովորողների կարիերային աջակցելու ուղղությամբ՝ ստեղծելով կարիերայի կենտրոն և շրջանավարտների տվյալների բազա,
24) Մշակել ուսանողների՝ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելու հստակ մեխանիզմներ: Ապահովել գիտական խմբակների գործունեության գիտահետազոտական ուղղվածությունը,

25) Բարելավել ուսանողներին մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմները:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

26) Ներդնել ՊԴ և ՈՒՀՕ կազմի ընտրության մրցութային կարգ՝ թափանցիկություն և հրապարակայնություն ապահովելու, ինչպես նաև լավագույն կադրեր ներգրավելու նպատակով,
27) Հստակեցնել կրթական ծրագրերի նպատակներին համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները,
28) ՊԴ կազմի կայունություն ապահովելու նպատակով ներդնել նոր մեխանիզմներ՝ ոստիկանական ծառայող հիմնական ՊԴ կազմի գիտական աստիճանաշնորհմանը նպաստելու և այդ ուղղությամբ առաջընթացի ապահովման համար,
29) Փոխկապակցել ՊԴ կազմի գնահատման գործող մեխանիզմները, իրականացնել դրանց արդյունքների ընդհանուր որակական վերլուծություններ և դրանց հիման վրա մշակել բարելավման քաղաքականություն,
30) ՊԴ կազմի վերապատրաստման ծրագրերի հիմքում դնել ներքին և արտաքին գնահատման արդյունքները՝ ելնելով կրթական ծրագրերի առաջնահերթ կարիքներից, իրականացնել վերապատրաստումների արդյունավետության գնահատում:

Հետազոտությունը և զարգացումը

31) Վերանայել գիտահետազոտական ռազմավարությունը՝ առավել հասանելի նպատակների սահմանմամբ, հետազոտական կարողություններով ՊԴ կազմի ներգրավման և ֆինանսական ներդրումների հնարավորությունների հաշվառմամբ,
32) Զարգացնել հաստատված ոլորտային թեմատիկ առաջնահերթությունների ուղղությամբ ամբիոնների գիտահետազոտական աշխատանքների իրականացումը՝ ներդնելով ՊԴ կազմի խրախուսման մեխանիզմներ,
33) Տեղական և միջազգային համագործակից բուհերի, կառույցների հետ մշակել համատեղ հետազոտական ծրագրեր, ակտիվացնել կիրառական բնույթի հետազոտությունների իրականացումը որպես եկամուտ բերող գործունեություն՝ նպաստելով հետազոտության առևտրայնացմանը,
34) Մշակել հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցվածության հստակ մեխանիզմներ՝ ներգրավելով հետազոտական աշխատանքներում նաև ուսանողներին:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

35) Իրականացնել ֆինանսական միջոցների բաշխում ըստ ռազմավարական առաջնահերթությունների,
36) Համալրել լաբորատոր բազան և գրադարանային ֆոնդը՝ կրթական ծրագրի պահանջներին համապատասխան,

37) Իրականացնել ՄՈՒՀ-ում ուսանողներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների գնահատում՝ ՄԿԾ-ների և ռազմավարական պլանի իրականացման պահանջներին համապատասխան:

Հասարակական պատասխանատվությունը

38) ՄՈՒՀ-ի հաշվետվությունների կազմման հիմքում դնել վերլուծական մոտեցումը՝ դրանք կապելով ՌՊ-ի (ինչպես նաև այլ ռազմավարական ծրագրերի) խնդիրների հետ և դիտարկելով որպես ռազմավարական նպատակների կատարողականի գնահատման մեխանիզմ,
39) Համալրել կայքը անհրաժեշտ տեղեկատվությամբ, այդ թվում՝ ՄԿԾ-ների և շնորհվող որակավորումների որակի վերաբերյալ վերլուծություններով, նաև ապահովել կայքի տեղեկատվության հրապարակումը օտար լեզուներով,
40) Ներդնել հասարակության հետ հետադարձ կապի, հրապարակայնության կարիքների ուսումնասիրման գործող մեխանիզմներ,
41) Մշակել ընթացակարգեր՝ հասարակության հետ կապերի ձևավորման ուղղությամբ ՄՈՒՀ-ի կիրառած մեխանիզմների արդյունավետության և ձեռքբերումների գնահատման համար:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

42) Համապատասխանեցնել ՄՈՒՀ-ում գործող արտաքին կապերի ընթացակարգերն ու գործընթացները հաստատված ռազմավարությանն ու հավակնություններին,
43) Վերանայել միջազգայնացման համար պատասխանատու բաժնի գործառույթները՝ առաջնահերթ նպատակաուղղելով միջազգային համագործակցության ազդեցությունը ՄՈՒՀ-ի ՄԿԾ-ների և այլ գործընթացների բարելավման, միջազգայնացմանը նպաստող միջավայրի ստեղծման վրա,
44) Տեղական և արտասահմանյան բուհերի, գիտակրթական կենտրոնների հետ համագործակցության արդյունքում ներդնել համատեղ ծրագրեր, իրականացնել փորձի փոխանակում, համեմատական վերլուծություններ և արդյունքների տեղայնացում ՄՈՒՀ-ի կրթական և հետազոտական ծրագրերի զարգացման նպատակով,
45) Ապահովել ՄՈՒՀ-ի միջազգային պայմանագրերով և համաձայնագրերով ամրագրված համագործակցության ծրագրերի իրականացումը՝ խթանելով միջազգային ճանաչումը,
46) Միջազգային համագործակցության շրջանակներում քայլեր ձեռնարկել ուսանողների ու դասախոսների փոխանակման, շարժունության հնարավորությունների ստեղծման ուղղությամբ,
47) Միջազգային շարժունությանը նպաստելու համար ապահովել անձնակազմի և ուսանողների օտար լեզվի իմացության բավարար մակարդակ:

Որակի ներքին ապահովման համակարգը

48) ՄՈՒՀ-ի որակի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը, հայեցակարգը, կիրառվող մեխանիզմները ինտեգրել մեկ ամբողջական որակի

ապահովման համակարգում՝ դրանից բխեցնել աշխատանքային պլաններն ու սահմանել պլանների իրականացման քանակական և որակական ցուցիչներ,

49) Ակտիվացնել փոխգործակցությունը ՄՈՒՀ-ի որակի ապահովման բաժնի և այլ ստորաբաժանումների միջև՝ իրականացնելով լավագույն փորձի հայտնաբերում և տարածում,

50) Որակի ապահովման գործընթացներում ներգրավել ներքին և արտաքին շահակիցներին՝ պասիվ մասնակցությունից անցնելով գործընկերային ներգրավվածության,

51) Իրականացնել որակի ապահովման ստորաբաժանման անձնակազմի և որակի պատասխանատուների մասնագիտական վերապատրաստումներ՝ որակի ապահովման համակարգի ներդրման աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար,

52) Ստեղծել որակի ապահովման տվյալների հավաքագրման հստակ մեխանիզմներ և այդ մեխանիզմների կիրառման արդյունքում ստացված հավաստի տվյալների հիման վրա իրականացնել բովանդակային վերլուծություններ՝ ուղղված ՄԿԾ-ների և այլ գործընթացների բարելավմանը,

53) Իրականացնել ՄՈՒՀ-ի որակի ապահովման համակարգի արդյունավետության, այլ բուհերի փորձի համեմատական վերլուծություններ, դրանց արդյունքների տեղայնացմամբ համակարգը վերանայել և համապատասխանեցնել ՄՈՒՀ-ի առանձնահատկությանը,

54) Ներդնել որակի ապահովման գործընթացների վերաբերյալ թափանցիկություն և հրապարակայնություն ապահովող հուսալի մեխանիզմներ ներքին և արտաքին շահակիցների համար:

Գագիկ Քթրյան
Փորձագիտական խմբի ղեկավար

26 նոյեմբերի 2019թ.

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Միջազգային փորձագետը հուսով է, որ այս ամբողջական զեկույցի այս մասը կօգտագործվի կառուցողական կերպով՝ զեկույցին համահունչ՝ ի շահ ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի զարգացման:

Դիտարկումներ

I. Առաքելությունը և նպատակները

Կրթահամալիրի առաքելությունը, հեռանկարային և մնայուն արժեքները ներկայացված են ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ռազմավարական ծրագրում, որը վավերացվել է Գիտխորհուրդի կողմից 24.11.2017թ.: Ըստ այդ ծրագրի՝ կրթահամալիրը պետական բարձրագույն կրթության հաստատություն է, որը գործում է ՀՀ ոստիկանական համակարգում և տրամադրում է **բարձրագույն կրթություն** (բակալավրի և մագիստրատուրայի աստիճաններ իրավաբանության ոլորտում, ինչպես նաև մանկավարժական կրթություն ունեցող հրամանատարական կազմի մասնագետներ է պատրաստում) և **հետբուհական կրթություն** (իրավական կրթություն ունեցող մասնագետների պատրաստում, ոստիկանական հարցերին առնչվող գիտական ուղղվածություն, իրավունքի ոլորտի հետազոտություններ), ինչպես նաև **նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթություն** (ոստիկանական կրթություն ունեցող մասնագետների պատրաստում) և այլ կրթական ծրագրեր: Կրթահամալիրի առաքելությունն է ստեղծել, փոխանցել և տրամադրել գիտելիք ռազմավարական ծրագրերի միջոցով՝ պայմանավորված պետական և հանրային կարիքներով: Կրթահամալիրի առաքելությունը համապատասխանում է ՀՀ որակավորումների ազգային շրջանակին՝ հաստատված ՀՀ Կառավարության կողմից 2016թ. հուլիսի 7-ին:

Մասնավորապես, Կրթահամալիրի առաքելությունից բխող կրթական գործողությունները համապատասխանում են որակավորումների ազգային շրջանակի 3րդ, 5րդ, 6րդ, 7րդ և 8րդ մակարդակներին: Կրթահամալիրը կարևորում է որակավորումների շրջանակի համապատասխանությանը որակավորումների ազգային և եվրոպական համակարգերին՝ 6-րդ և 7-րդ մակարդակներում: Կրթահամալիրը, լինելով ոստիկանությանը կողմնորոշված կրթական հաստատություն, ներկայացրել է մեխանիզմներ և ընթացակարգեր՝ կիրառման արդյունավետությունը և ռազմավարական նպատակների առաջընթացը գնահատելու նպատակով, որոնք հաշվի են առնում ինչպես արտաքին, այնպես էլ ներքին շահակից կողմերի կարծիքը: Ինչևէ, այս մեխանիզմները խարսխվում են միայն հաշվետվությունների վրա, այլ ոչ՝ առաքելությանը հասնելու իրական և արդյունավետ գնահատականի: Հետագա զարգացման համար կենսականորեն անհրաժեշտ է, որ Կրթահամալիրի ողջ հանրությունը (ակադեմիական և վարչական) կիսի այն արժեքները, որոնք սահմանված են առաքելության մեջ, այլ ոչ միայն դյուրահավատորեն ընդունի այդ սահմանումը որպես հրաման: Այս առումով կարիք կա դասընթացների և դասավանդման, որոնք հասցեագրված կլինեն ակադեմիական և վարչական անձնակազմին:

21-րդ դարում տարբեր երկրների ներքին անվտանգության իրավիճակի վերլուծությունը ապացուցում է, որ ժամանակակից աշխարհում և ոչ մի պետական մարմին ինքնուրույն չի

կարող ապահովել անհրաժեշտ անվտանգությունը: Սա հնարավոր է ոչ կառավարական և միջազգային համագործակցության շրջանակներում:

II. Կառավարումը և վարչարարությունը

Կրթահամալիրի վարչարարության նպատակն է բարելավել և զարգացնել կառավարման համակարգը, որն անհրաժեշտ է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների ռազմավարական պլաններն իրականացնելու համար:

Ներկայացված ռազմավարական պլանները շատ հավակնոտ են ու անհանգստության առիթ են տալիս իրենց իրականացման հնարավորության տեսակետից: Չնայած Կրթահամալիրի կառավարման մարմինները վստահեցնում են, որ կառավարման չափանիշները ապահովված են բոլոր մակարդակներում, թվում է, թե Կրթահամալիրի ակադեմիական թևը տուժում է խիստ ոստիկանական շրջանակների առկայությունից, որոնք խաթարում են ժողովրդավարական կառավարման մեխանիզմների զարգացումը: Ղեկավարությունը պետք է մեծացնի շահակիցների ներգրավվածությանը Կրթահամալիրի կառավարման մեջ:

Կրթահամալիրի կառավարման համակարգի որակի բարելավումը, իր թափանցիկությունը, հաշվետվողականությունը և հսկողությունը պետք է բխեն կառավարման ժողովրդավարությունից, քանի որ այս գործոնը կարևոր դեր է խաղում համալսարանների զարգացման մեջ՝ հատկապես գիտության և հետազոտության առումով: Ոստիկանական օրենսդրությամբ նշված խիստ սահմանափակումները թույլ են տալիս կառավարող ղեկավարությանը գործել ըստ հստակ սահմանված ընթացակարգերի, սակայն մյուս կողմից սահմանափակում են ժողովրդավարական համալսարանական մարմինների անկախությունը, որոնց դերը կայանում է համալսարանների կրթական, գիտական և հետազոտական գործողությունների կոորդինացման և կարգավորման մեջ: Ինքնակառավարման և գիտական անկախության դրական կողմերից է ֆակուլտետների դեկաններին կրթական և հետազոտական գործընթացների անմիջական ղեկավարման հանձնարարումը: Քանի որ ֆակուլտետի դեկանի ընտրությունները կատարվում են բաց մրցակցությամբ, այն դրդում է հետազոտողներին զբաղվել ինքնազարգացմամբ և որակի ապահովմամբ:

PDCA կառավարման ցիկլի հետ համահունչ պատշաճ որակի ապահովումը և շարունակական բարելավումը հնարավոր է ողջ անձնակազմի մասնակցության դեպքում միայն, որը հնարավոր դարձնելու համար անհրաժեշտ են օժանդակ անձնակազմի համար հետագա դասընթացներ և դասավանդում՝ կառավարման թույլ կողմերի շտկման ուղղությամբ: Անհրաժեշտ է նաև Կրթահամալիրի գործելաոճի որակի վրա ազդող ներքին և արտաքին գործոնների մեջ փոփոխությունների կանոնավոր մշտադիտարկում իրականացնել: Փաստաթղթերի էլեկտրոնային շրջանառության ներմուծումը կարող է այս առումով օգտակար լինել: Արդյունքում վարչարարական մակարդակում տեղեկատվության անընդհատ հոսք կլինի, և կբարելավվի Կրթահամալիրի վերաբերյալ տեղեկատվության տարածման մեխանիզմը:

III. Մասնագիտության կրթական ծրագրերը

Կրթահամալիրում ներդրված կրթական ծրագրերը ընդգրկում են շատ տարբեր մակարդակներ՝ որակավորումների ազգային շրջանակի 3-րդ մակարդակից մինչև 8-րդը:

Ցավոք, շատ դեպքերում տարբեր մակարդակների դասընթացների և վճարովի ու անվճար ուսման միջև եղած տարբերությունները դժվար է մատնանշել (բացառությամբ՝ ժամաքանակի):

Ակադեմիական ծրագրերը նկարագրվում են կրթական չափորոշիչներով, որոնք հիմնվում են գիտելիքի, հմտությունների և կոմպետենցիաների ոլորտներում չափելի վերջնարդյունքների վրա՝ հասցեագրված հիմնականում մի հաճախորդի՝ Ոստիկանությանը: Այս վերջնարդյունքները պետք է փոխկապակցված լինեն երեք մակարդակով՝ որակավորումների ազգային շրջանակ - ակադեմիական ծրագրեր - դասընթացների նկարագիր, որը հետագա բարելավման կարիք ունի:

Ակադեմիական ուսումնական ծրագիր, ինչպես նաև ուսուցման և ուսումնառության մեթոդներ մշակելիս անհրաժեշտ է առաջնահերթություն տալ ուսանողների շրջանում աշխատաշուկայում պահանջված առավել արդյունավետ կոմպետենցիաներին: Ցավոք, այժմ այդպիսի մեխանիզմներ չկան, որոնք թույլ կտային ստուգել հմտությունների և կոմպետենցիաների համապատասխանությունը որակավորումների ազգային շրջանակին ըստ մակարդակների որակավորումների առումով: Կարևոր են ժամանակ առ ժամանակ կատարվող արդիականացումը և ուսումնական ծրագրի վերանայումը՝ դրանց համար տրամադրված գործնական և ակադեմիական տարրերի ճիշտ համադրությամբ:

Կրթահամալիրի ակադեմիական ծրագրերը մշտադիտարկման են ենթարկվում փորձագետների գնահատականների, շահագրգիռ կողմերի հետ անցկացվող քննարկումների, ուսանողների բավարարվածության ստուգման միջոցով, սակայն վճռորոշ է միայն մի հաճախորդի կարծիքը՝ ՀՀ Ոստիկանության: ՀՀ Ոստիկանության պահանջները, որոնցից բխում են ակադեմիական ծրագրերը, թույլ չեն տալիս ճկունություն և անկախություն ուսումնական ծրագրերի պատրաստման հարցում: Ինչևէ, կարևոր է վստահեցնել, որ ակադեմիական ծրագրերի հեղինակը Կրթահամալիրն է, որպեսզի դրանք չընկալվեն սոսկ միայն որպես արտաքին հանձնարարություն կամ առաջադրանք:

Ի հավելումն, փոփոխվող աշխատաշուկայի պահանջների վերլուծությունից ելնելով անհրաժեշտ է մշակել հավելյալ այլընտրանքային մոդուլներ, որոնք ուսանողներին հնարավորություն կընձեռեն ընտրել մոդուլներ ավելի մեծ քանակից և, այսպիսով, համահեղինակ դառնալ իրենց ուսումնառության կրթական ծրագրի:

Ակադեմիական ծրագրերի թույլ կողմն է միջազգայնացման և ուսանողական շարժունության պակասը, որն անհրաժեշտ է ավելի լայնամասշտաբ և համակարգված կազմակերպել: Համալսարանների և ոստիկանական կրթական հաստատությունների առումով միջազգային համագործակցության ոլորտում զգալի է Ռուսաստանի գերակշիռ դերը:

Հատկապես միջսահմանային հատվածի և կազմակերպված հանցանքի պարագայում ուշադրություն է պետք դարձնել համագործակցության մեծ ներուժին Եվրոպական Միության գործակալությունների հետ՝ մասնավորապես Եվրոպոլի, Եվրոջասթի և Եվրոպական ոստիկանական քոլեջի: Սա հնարավորություն կընձեռնի Կրթահամալիրին զարկ տալ իր կրթական ծրագրերին:

Ինչ վերաբերում է ուսանողների գնահատմանը, Կրթահամալիրը ունի գիտելիքների, հմտությունների և կոմպետենցիաների գնահատման համակարգ՝ միտված դասընթացի նկարագրիչներում նշված ուսանողների կողմից նախանշված արդյունքներին հասնելուն («ՀՀ

Ոստիկանության կրթահամալիրի ուսանողների գիտելիքների, հմտությունների և կոմպետենցիաների գնահատման կարգավորում» և համապատասխան կրթական գործընթացի կազմակերպման կարգավորումներ՝ ըստ կրթական ծրագրերի): Գնահատման արդյունավետությունը ստուգվում է Որակի ապահովման ձեռնարկում նշված գործիքների միջոցով: Սա ընդունված պրակտիկա է՝ համահունչ ընդհանուր եվրոպական ստանդարտներին:

IV. Ուսանողները

Կրթահամալիր ուսանողների ընդունելության, ընտրության և կրթության կազմակերպման համար գոյություն ունեն հստակ մեխանիզմներ: Կրթահամալիրը ուսանողներին հնարավորություն է ընձեռում դիդակտիկ աջակցության, հավելյալ դասերի և խորհրդատվության ու ապահովում է ուսանողների իրավունքների պաշտպանությունը:

Ինչևէ, չկան մեխանիզմներ, որոնք կաջակցեին ուսանողներին հետազոտական ոլորտում: Կրթահամալիրի ուսանողների՝ հետազոտություններին ունեցած մասնակցությունը փաստացի սահմանափակվում է մագիստրոսի թեզով (ըստ ձևանմուշի, սակայն հետազոտություն կատարելու համար նախատեսված սահմանափակ մեթոդոլոգիայով): Կրթահամալիրի ընդհանուր գիտական և հետազոտական գործունեությունը թույլ է, այդ իսկ պատճառով ուսանողների ներգրավվածությունը նույնպես ցածր է և պասիվ: Այդ նպատակով անհրաժեշտ է կապել հետազոտական գործունեությունը կրթական ծրագրերի հետ, փոխել ուսանողական հետազոտական խմբերի գործողությունների բնույթը (հետազոտական մեթոդոլոգիայի հետևողական կիրառում) և աջակցել ուսանողության միջազգային շարժունությանը (որպեսզի վերջիններս կարողանան սովորել այլ հետազոտական խմբերի գործելաոճից):

Ուսանողական հետազոտությունների թույլ լինելը առաջ է քաշում առաջնահերությունների ավելի խորքային փոփոխության կարիքը և անցումը խիստ գործնական ուղղվածություն ունեցող կրթական ծրագրից դեպի ավելի ընդհանուր ակադեմիական ուղղվածություն, ինչպես, օրինակ, երկակի (հիբրիդային) ակադեմիական համակարգը: Ուսանողների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ նրանք անկարող են առաջարկել խնդիրներ լուրջ գիտական հետազոտության համար. փոխարենը ներկայացնում են քննություն առնվող իրականության ընդհանուր նկարագիր:

Ընդհանուր առմամբ, Կրթահամալիրը ուսանողներին աջակցում է և ապահովում ուսումնառության արդյունավետությունը:

V. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

Գոյություն ունեն աշխատանքի ընդունելու համար գործող ընթացակարգային կանոններ, սակայն, ցավոք, դրանք այնքան էլ հստակ չեն: Դրանք իրենց բնույթով ոստիկանական են, այլ ոչ՝ ակադեմիական, որը չի ապահովում աշխատողներին աշխատանքի ընդունելու որակը (ՈՉ մրցակցային կարգով): Ֆակուլտետների և ամբիոնների դասախոսներն ու ղեկավարները ՀՀ Ոստիկանության բազմամյա մասնագիտական փորձ ունեցող սպաներ են, որը, անշուշտ անձնակազմի պարագայում դրական ձեռքբերում է: Ինչևէ, անհատական դասախոսներին տրված դասավանդման ժամերի հսկայական քանակը

հանգեցնում է գիտական ծրագրերում և նախաձեռնություններում նրանց ոչ բավարար մասնակցության:

Ակադեմիական անձնակազմի ղեկավարման հարցում կարևոր գործոն է այնպիսի մեխանիզմների առկայությունը, որոնք թույլ կտան գնահատել կրթական և գիտական գործունեության որակը՝ ինչպես խթանիչ, այնպես էլ տուգանային ընթացակարգով: Ինչևէ, դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական հմտությունները գնահատելիս չարժե գերագնահատել «ուսանողներին ներկայացված հարցաշարի դերը դասավանդման որակի և արդյունավետության մեջ»: Կրթական և հետազոտական աշխատանքի գնահատման չափանիշները պետք է հստակ սահմանված լինեն:

Դասախոսների աշխատանքի որակի գնահատումը պետք չէ շփոթել իրենց՝ սիրված լինելու հետ:

Միջազգային զարգացումը և համագործակցությունը խաթարող կարևոր գործոն է օտար լեզուների հմտությունների պակասը համալսարանի անձնակազմի շրջանում (բացառությամբ ռուսերենի):

Շահագրգիռ կողմերի և արտաքին փորձագետների (օր.՝ իրավաբանների) ներգրավվածությունը դիդակտիկ գործընթացներին դրական է գնահատվում, սակայն այս գործընթացը պահանջում է կանոնավոր և արդյունավետ գործունեություն: Ժամանակ առ ժամանակ հրավիրվող հյուրերի կողմից կարդացվող դասախոսությունները Կրթահամալիրի ուժեղ կողմը չեն:

VI. Հետազոտությունը և զարգացումը

Կրթահամալիրի գիտական ներուժը շատ սահմանափակ է: Որպես հետազոտական գործունեության նախաձեռնողներ են հանդես գալիս միմիայն դասախոսները, որոնց մեջ գիտնականներ չկան. այդ հետազոտությունների մեծ մասը նույնիսկ շատ լավն են, սակայն դիդակտիկ բնույթ են կրում: Բացի այդ, նրանց աշխատանքին խոչընդոտում է ֆինանսական ռեսուրսների բացակայությունը: Հետազոտական աշխատանքի առաջխաղացման համար հստակ մեխանիզմներ ևս չկան: Կրթահամալիրը հայտարարում է իր հետազոտական գործունեության մասին՝ կազմակերպելով դասախոսություններ և գիտաժողովներ, ինչպես նաև մեթոդոլոգիական գիտաժողովներ: Սրանք միտված են միայն թվացյալ հետազոտական գործունեության հանրային զեկուցմանը, և մասնակիցները անկարող են գնահատել արդյունքները կամ հետազոտական աշխատանքներում գիտական նորությամբ հանդես գալ: Կրթահամալիրը խաղում է հետազոտական արդյունքների հիմնական սպառողի դերը (չնայած անցկացվող հետազոտության և կրթական գործընթացի միջև կապեր չկան), կամ լավագույն դեպքում այդ դերը ստանձնում է ոստիկանության շտաբը: Գիտահետազոտական արդյունքների առևտրայնացում տեղի չի ունենում:

Ուսանողների մասնակցությունը գիտահետազոտական գործունեությանը սահմանափակվում է միայն մագիստրոսի թեզով, որը իրականացվում է դիդակտիկ գործընթացի համադրությամբ, որը հետազոտական բնույթ չի կրում, այլ որակավորումների հաստատման գործընթաց է: Կրթահամալիրը չի մասնակցում գիտահետազոտական միջազգային կամ տեղական որևէ դրամաշնորհների: Քաղաքացիական շուկայի հետ համագործակցության շրջանակների լայնացումը, որը կարող է հետազոտական արդյունքների հիմնական սպառողը լինի, կարող է բարելավել դրանց որակը, սակայն

հավանական է, որ գտնվում է Կրթահամալիրի կոմպետենցիաներից դուրս: Հիմք ընդունելով այլ եվրոպական ոստիկանական հաստատությունների փորձը՝ այսպիսի շուկայական համագործակցությունը միշտ հանգեցնում է ավելի լավ բարձունքների ընդհանուր գիտահետազոտական շուկայում:

Գոյություն ունեցող ուսանողական գիտական խմբերը ավելի շատ ուսուցողական խմբեր են, քան գիտական խմբեր (չնայած կան բացառություններ), որի պատճառ կարող են լինել սխալ դրված նպատակները և հետազոտությանը առնչվող խնդիրները:

VII. Ենթակառուցվածքը և ռեսուրսները

Կրթահամալիրը, լինելով ՀՀ ոստիկանության համակարգի պետական հաստատություն, չունի իր սեփական ֆինանսական ռեսուրսները (եկամուտները կախված են ուսման վճարից, որի տոկոսային հարաբերակցությունը ընդհանուր եկամուտների մեջ մոտ 10% է, այլ եկամուտներինի մեջ՝ 0,7%) և, այսպիսով, չի կարող վարել ֆինանսական կամ տնտեսական անկախ գործունեություն: Կրթահամալիրը ստանում է պետական ֆինանսավորում պետական բյուջեից ՀՀ Ոստիկանության միջոցով: Սա շատ կարևոր գործոն է, որը թույլ չի տալիս Կրթահամալիրին ինքնուրույն լինել: Մասնավորապես, երկարաժամկետ ֆինանսական պլանավորումը բարձր՝ ոտիկանության շտաբի կամ նախարարությունների մակարդակներով զարկ չի տալիս նորարարությանը: Կրթահամալիրի կողմից տնօրինվող և Ոստիկանության կողմից վերահսկվող ֆոնդերի հատկացումը, թվում է, լուրջ առնչություն չունի անարդյունավետության հետ, սակայն մյուս կողմից այն չափազանց ոչ ճկուն է, որպեսզի կարողանա աջակցություն ցուցաբերել ակադեմիական գործունեությանը:

Ռեսուրսները՝ հատկապես ֆինանսական ռեսուրսները, կենտրոնական դեր են խաղում Կրթահամալիրի՝ իր առաքելությանը և նպատակներին հասնելու հարցում: Այսպիսով, կրթական նյութական բազայի հարստացման և բարելավմանը միտված մի շարք ֆինանսներ պահանջող գործողությունների լուրջ անհրաժեշտություն կա՝ ներառյալ, օրինակ, շենքերի վերանորոգումը, դասարանների արդիականացումը, տեղեկատվական համակարգերի և գրադարանային ենթակառուցվածքների զարգացումը:

SS, հատուկ դասարանների, հանցագործությունների, քրեականագիտություն, հրաձգության դասընթացներ, հանցագործության վայրի սիմուլյացիայի, իրավական լաբորատորիայի, մարտարվեստի և այլ սենյակների առկայությունը Կրթահամալիրում էապես կարևոր է (վերջին 3 տարվա ընթացքում պայմանները բավականին բարելավվել են): Ինչևէ, ենթակառուցվածքների ոլորտում հետագա ներդրումների կարիք կա:

Նույն կերպ անհրաժեշտ է ներդրումներ կատարել գրադարանում, որտեղ կա հետազոտական մեթոդոլոգիայի, 21-րդ դարում տպագրված մասնագիտական գրքերի և ամսագրերի՝ հատկապես օտարերկրյա, ակնհայտ կարիք:

Դրական կողմ է Կրթահամալիրի կողմից ռեսուրսների ձեռք բերումը արտաքին աղբյուրներից, օր.՝ նորվեգական ֆոնդ, ԱՄՆ դեսպանատուն և այլն:

VIII. Հասարակական պատասխանատվությունը

Հանրության համար Կրթահամալիրի ներքին գործընթացները հեռու են թափանցիկ լինելուց, չնայած Կրթահամալիրը կամենում է ստեղծել հանրությանը իր գործունեությունների մասին տեղեկացնելու նոր ուղիներ: Կրթահամալիրի թափանցիկությունը ինչ-որ տեղ

արտահայտվում է իր կայքում հանրության համար տեղեկատվության տեղադրմամբ և սեփական ամսագրի առկայությամբ (ներառյալ՝ հակակոռուպցիոն և ռազմավարական պլանները): 2019թ. նաև մշակվել է գործողությունների պլան, որի նպատակն է բարձրացնել Կրթահամալիրի հեղինակությունը:

Կրթահամալիրի գործողությունների տարեկան զեկույցները ներկայացվում են ՀՀ Ոստիկանության գրասենյակ, և ակնհայտ է, որ Կրթահամալիրը ամբողջովին հաշվետու է ոստիկանական միջավայրին:

Նկատվում է Կրթահամալիրի ավելի ակտիվ մասնակցությունը հանրային և սոցիալական կյանքի, սակայն առանց հետադարձ կապի մեխանիզմի (ֆեյսբուքյան մեկնաբանությունները հետադարձ կապի թույլ միջոց են):

IX. Արտաքին կապերը և միջազգայնացումը

Կրթահամալիրը բոլորովին վերջերս է սկսել զարգացնել իր արտաքին կապերը և փոխանակվել լավագույն փորձով՝ քայլեր ձեռնարկելով միջազգայնացման զարգացման ասպարեզում: Կրթահամալիրը դասում է միջազգայնացումը իր առաջնահերթությունների թվին: Սրա վառ ապացույցն է՝ ի թիվս այլոց, 2017թ. միջազգային համագործակցության ռազմավարությունը 2017-2021թթ. համար:

Այս առաջնահերթությունները ընդգրկում են ինչպես ավելի հեշտ իրագործելի նպատակներ (օր.՝ օտարերկրյա հյուրերի այցի կազմակերպում, անձնակազմի և ուսանողների շարժունություն) այնպես էլ շատ հավակնոտ նպատակներ (գիտական հետազոտությունների միջազգայնացում, միջազգային փորձի ներառումը կրթական ծրագրերում):

Վերջինս կպահանջի հետազոտության որակի բարելավում և մի շարք կրթական ծրագրերի ստեղծում օտար լեզուներով (անգլերեն, ռուսերեն): Երկու դեպքում էլ անհրաժեշտ է հավատարիմ մնալ ճանաչում ստացած մեթոդաբանություններին և լավագույն փորձին: Ճանաչված հետազոտական մեթոդաբանությունների օգտագործումը թույլ կտա Կրթահամալիրին դառնալ միջազգային հետազոտական ծրագրերի գործընկեր:

Այս ուղղությամբ լավ կլինի ձեռք բերել և տարածել տեղեկատվություն հրատարակման հնարավորությունների և գիտաժողովների մասնակցության վերաբերյալ: Յուրաքանչյուր այսպիսի մասնակցություն կհանգեցնի նոր գիտելիքների և փորձի ձեռքբերմանը: Նաև կարևոր է կազմակերպել միջազգային գիտաժողովներ: Դրականն այստեղ այն է, որ Կրթահամալիրի ուսանողներն ու դասախոսները մասնակցում են արտասահմանյան գիտական և կրթական միջոցառումներին, սակայն նրանց փոքրաթիվ լինելը բավարար հիմք չէ այպիսի գործողությունների մասին լուրջ խոսելու համար: Շատ լավ գաղափար է Կրթահամալիրի այլ աշխատակիցներին ձեռք բերված գիտելիքը փոխանցելու պարտավորվածությունը, որը մաս է կազմում միջազգային փոխանակման մանրամասն ներկայացված պլանի: Նախընտրելի է, որպեսզի այսօրինակ բազմաշերտ դասընթացը համալրվի փոխանակման վերաբերյալ համակարգչային տվյալների բազայում զետեղված գիտելիքի բազայով: Ցավոք, միջազգային համագործակցության ազդեցությունը կրթական գործընթացի վրա շոշափելի չէ:

Առանց կասկածի տակ առնելու ԱՊՀ երկրների և ԱՄՆ-ի հետ ունեցած կապերը՝ միևնույն է, ուշադրություն է պետք դարձնել Եվրոպական ոստիկանական քոլեջի և Եվրոպոլի

հետ համագործակցությանը, քանի որ վերջիններս տալիս են ոչ միայն գործառնական այլև ակադեմիական գիտելիք:

Ընդգծելով Եվրոպական ոստիկանական քոլեջի կոնտակտային անձի կողմից կատարված գերազանց աշխատանքը՝ հարկ է նշել, որ քոլեջն իր գործընկերներին առաջարկում է շատ ավելին քան փոխանակումը:

Օգտագործելով Եվրոպական ոստիկանական քոլեջի համակարգը՝ Կրթահամալիրի աշխատակիցները և ուսանողները կարող են առցանց ծանոթանալ ամենավերջին գիտական նորություններին և միևնույն ժամանակ բարելավել իրենց լեզվական հմտությունները: Բացի այդ, նրանք դա կարող են անել ցանկացած ազատ պահի:

Ռազմավարության մեջ նշվում է մի շատ լավ գաղափար, այն է՝ կապեր հաստատել Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների հետ: Այսպիսի կապերը առանձնապես ծախսատար չեն և կարող են նորագույն գիտելիքի աղբյուր հանդիսանալ (օր.՝ մարդու իրավունքների, մտավոր սեփականության իրավունքների և այլ ոլորտներում):

Բազմաթիվ երկկողմանի համագործակցության ստորագրված համաձայնագրերը պետք է օգտագործվեն ի շահ Կրթահամալիրի անձնակազմի կողմից հրատարակությունների և գիտական պարբերականների թվի աճի այն օտար լեզուներով, որոնք հասանելի են գրադարանում: Արժե նաև խթանել գրականության այդօրինակ ձեռքբերումը՝ ՀՀ Ոստիկանության շտաբի հետ համատեղ:

Կրթահամալիրի՝ միջազգային կապերի զարգացման կարևոր խոչընդոտ է պաշտոնական կայքում տեղեկատվության սակավությունը (www.edupolice.am)՝ բացառությամբ ենթաէջերի վերնագրերի, որոնք ներկայացված են ռուսերեն ու անգլերեն: Ֆեյսբուքյան էջը հայերեն է: Միջազգային ծրագրերի և համագործակցության վերաբերյալ տեղեկատվության պակասը միջազգայնացման համար խոչընդոտ է և նվազեցնում է Կրթահամալիրի ճանաչումը ակադեմիական, գիտական և միջազգային ինստիտուտների ու կազմակերպությունների կողմից, որոնք կարող են Կրթահամալիրի ապագա գործընկերները լինել:

Վերջին կետը շատ ընդհանրական է: Միջազգային համագործակցությունը թանկ է, սակայն եթե Կրթահամալիրի ցանկանում է ուսանողներին ապահովել բարձրորակ կրթությամբ և հետազոտություն կատարել նույն՝ բարձր մակարդակի վրա, այն չի կարող գումար տնտեսել այս հարցում:

X. Որակի ներքին ապահովման համակարգը

Վերջին տարիների ընթացքում Կրթահամալիրը մեծ քայլ է կատարել ընդհանուր բարելավման առումով: Ազգային և եվրոպական որակի ապահովման ստանդարտների պահանջներին համահունչ որակի ապահովման համակարգի ներդրումը Կրթահամալիրում սկսվել է 2016թ.՝ որպես որակի ապահովման խումբ, իսկ 2017թ. հունիսին ստեղծվեց կրթության որակի ապահովման բաժինը՝ որպես վարչական միավոր: Կրթահամալիրը որակի ապահվման ոլորտում ունի հստակ քաղաքականություն և ընթացակարգեր՝ նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերով՝ հատկապես որակի ապահովման ձեռնարկով: Կարելի է վստահաբար պնդել, որ ներքին որակի ապահովման գործողությունների կառավարման համար Կրթահամալիրը բավարար մարդկային ռեսուրսներ ունի: Որակի ապահովման մեխանիզմը չի կիրառվում Կրթահամալիրի բոլոր գործընթացներում, և ոչ բոլոր

աշխատակիցներն են ընկալում որակի մշակույթը: Նաև որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների իրական ներգրավման մեխանիզմների կարիք կա:

Առաջարկություններ

1. Կրթահամալիրի՝ որպես բարձրագույն ուսումնական հաստատության առջև ծառացած հիմնական խնդիրները վերաբերում են դասավանդման և հետազոտության պատշաճ մակարդակի ապահովմանը:

2. Անհրաժեշտ է ակադեմիական դասախոսների ինքնագնահատման և գնահատման մեխանիզմներ մշակել, որոնք թույլ կտան առաջխաղացում ապահովել այն դասախոսների համար, ովքեր ապահովում են բարձրորակ դասավանդում և գիտական բարձր որակ: Այս մեխանիզմները պետք է լինեն չափելի և քաջ հայտնի:

3. Անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել հետազոտությունների անցկացման պատշաճ մեթոդոլոգիային՝ ինչպես ակադեմիական աշխատակազմի, այնպես էլ ուսանողների կողմից:

4. Կրթահամալիրը պետք է ներդրում կատարի և խթանի որակի ապահովման գործընթացները:

5. Կրթահամալիրի ողջ հանրությունը (ակադեմիական և վարչական) պետք է կանոնավոր կերպով ծանոթանա Կրթահամալիրի առաքելությանը և տեսլականին ու դասընթացներ ստանա Կրթահամալիրի առաքելության և տեսլականն ըմբռնելու նպատակով:

6. Անհրաժեշտ է սահմանել արդյունավետության հիմնական ցուցանիշները /KPI/, որոնք պետք է գնահատել, որպեսզի պարզ դառնա՝ արդյոք ռազմավարական նպատակները իրականացվել են, թե՝ ոչ, և անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչու են ընտրվել հենց այս ցուցանիշները:

7. Պետք է մշակել ու ներդնել խրախուսման տարբեր մեխանիզմներ ակադեմիական և կրթական անձնակազմի համար՝ կապված նրանց որակի թափանցիկ գնահատման հետ:

8. Կրթահամալիրի ներկայացուցիչները պետք է ակտիվ մասնակցություն ցուցաբերեն ՀՀ Ոստիկանության ռազմավարության ձևավորմանը, որի արդյունք է Կրթահամալիրի առաքելությունը:

9. Ակադեմիական ծրագրերի մշակումը պետք է խարսխվի Ոստիկանության հետ համագործակցության վրա, այլ ոչ միայն՝ նրանց կողմից դրված պահանջների համապատասխանության վրա:

10. Միջազգային ակադեմիական փոխանակման ծրագրերը պետք է ներկայացվեն կանոնավոր կերպով, այլ ոչ միայն ԱՊՀ երկրների շրջանակներում՝ ընձեռելով ինչպես դասախոսներին, այնպես էլ ուսանողներին ներգնա և արտագնա շարժունության հնարավորություններ:

11. Պետք է խթանվի կրթական գործընթացների և ակադեմիական ծրագրերի միջազգային համագործակցությունը՝ ինչպես ոստիկանական կառույցների և կազմակերպությունների, այնպես էլ այլ համալսարանների հետ:

12. Անհրաժեշտ է շատ ավելի լայն օգտվել այն հնարավորություններից, որոնք ընձեռվում են գործընկեր կազմակերպությունների կողմից (օր.՝ Եվրոպական ոստիկանական քոլեջ, Եվրոպոլ) առցանց դասավանդելու համար:

13. Անհրաժեշտ է սկիզբ դնել սեփական գիտական ամսագրին, որը կինդեքսավորվի միջազգային տվյալների շտեմարանում (օր.՝ Scopus, Web of Science):

14. Անգլերենին տիրապետելու իրենց հմտությունները պետք է կատարելագործեն և՛ պրոֆեսորադասախոսական կազմը, և՛ ուսանողները:

15. Կոլեգիալ խմբերի դերը պետք է աճի, և կախվածությունը Ոստիկանությունից պետք է ակադեմիական ոլորտում նվազագույնի հասցվի:

16. Պետք է ներդնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ:

17. Որակի համակարգը պետք է գնահատվի՝ օգտագործելով կատարված հավատարմագրումը:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է փորձագիտական խմբի հետևյալ անդամների կողմից (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ 1՝ փորձագետների ինքնակենսագրականները).

- **Գագիկ Քթրյան** - ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ-վարչության պետի տեղակալ, ֆիզ.մաթ. գիտությունների թեկնածու,
- **Եժի Կոշինսկի**– Լեհաստանի ռազմածովային ակադեմիայի պրոֆեսոր, ռազմական գիտությունների դոկտոր,
- **Հակոբ Հովհաննիսյան** – Արտաշատի տարածաշրջանային պետական քոլեջի Որակի կենտրոնի պատասխանատու,
- **Տիգրան Խաչիկյան** - ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս, իրավաբական գիտությունների թեկնածու, ԵՊԲՀ Իրավաբանական կլինիկայի տնօրեն,
- **Ելենա Հարությունյան** – Երևանի պետական համալսարանի քաղաքագիտության բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ-ի Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ղեկավար Անուշավան Մակարյանը:

Թարգմանությունը կատարել է Մարիամ Հարությունյանը:

Արձանագրությունները կազմել է ՈԱԱԿ-ի տնօրենի օգնական Տաթև Մովսիսյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում թարգմանիչն ու համակարգողը, ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ՀՀ Ոստիկանության կրթահամալիրը դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը և հաստատության կողմից լրացված ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը:

Դիմում-հայտի ընդման մասին որոշում կայացնելուց հետո (18.01.2019թ.) ՈԱԱԿ-ի և ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր (15.02.2019թ.): Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն և անգլերեն լեզուներով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

Կրթահամալիրի ինքնավերլուծությունն իրականացրել է հատուկ այդ նպատակով Կրթահամալիրի պետի հրամանով ձևավորված խումբը:

Նախապատրաստական փուլ

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Այնուհետև քարտուղարությունն ինքնավերլուծությունն ուղարկել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է Կրթահամալիրի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել է հինգ վերապատրաստում հետևյալ թեմաներով.

1. ՀՀ հավատարմագրման կարգը, չափանիշները և չափորոշիչները,
2. Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
3. Նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները,
4. Փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրության մեթոդաբանությունը,
5. Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի «Փորձաքննության իրականացման ձեռնարկով»՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելություններ հաստատության ստորաբաժանումներ և այլն:

ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ինքնավերլուծությունը

Կրթահամալիրը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, 10.05.2019թ. ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն և անգլերեն լեզուներով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը: Ինքնավերլուծության զեկույցը

հիմնականում պարունակում էր ընդհանրական և նկարագրական տեղեկատվություն, որպես հիմքեր ներկայացված փաստաթղթերի մեծ մասը հաստատված չէին, չնայած որ պարունակում էին տեղեկատվություն հաստատման ժամկետների և հաստատող անձի կամ կառույցի մասին, քիչ էր հավաքագրված քանակական տեղեկատվությունը և դրա վերլուծությունները:

Նախապատրաստական այց

Նախապատրաստական այցը տեղի է ունեցել փորձագիտական այցից երկու շաբաթ առաջ փորձագիտական խմբի ղեկավարի և գործընթացի համակարգողի մասնակցությամբ: Նախապատրաստական այցի ընթացքում Կրթահամալիրի հետ համաձայնեցվել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Դիտարկվել են ֆոկուս խմբային քննարկումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված սենյակները, հստակեցվել են դրանց կահավորման ու տեխնիկական միջոցներով հագեցման խնդիրները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2019թ. սեպտեմբերի 16-ից 20-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական խմբի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ՝ այցից մեկ օր առաջ, որի նպատակն էր միջազգային փորձագետի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերն ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Այցին ներկա են գտնվել փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է Կրթահամալիրի պետի հետ հանդիպմամբ: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս և սովորող մասնակիցները, ֆակուլտետների և ամբիոնների պետերը, գործատուներն ու շրջանավարտներն ընտրվել են պատահականության սկզբունքով՝ նախօրոք տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, այդ թվում բաց հանդիպումը, որին մասնակցել են հետբուհական կրթություն ստացող հետազոտողներ: Այցի ընթացքում փորձագիտական խումբը փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում և ֆոկուս խմբային հանդիպումներ է իրականացրել Կրթահամալիրի տարբեր ստորաբաժանումներում:

Տարբեր հանդիպումների ընթացքում ձեռքբերված տեղեկատվությունն, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության և դիտարկումների հիմնական արդյունքներն ամփոփվել են ամեն օրվա վերջում և այցի ավարտին կազմակերպված ամփոփիչ հանդիպման ժամանակ: Փորձագիտական խումբը քննարկել է հիմնական արդյունքները և եկել ընդհանուր համաձայնության նախ հավատարմագրման առանձին չափորոշիչների, հետո նաև չափանիշների պահանջների բավարարման վերաբերյալ: Չափանիշների բավարարման

վերաբերյալ վերջնական եզրակացությունները ձեռք են բերվել խմբի բոլոր անդամների կողմից բաց քննարկման միջոցով՝ կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:
Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների և ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում, որով նախատեսվում է գնահատման երկաստիճան սանդղակ՝ **անբավարար և բավարար:**

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը զեկույցի նախնական տարբերակը պատրաստել է կրթահամալիրի ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրսբերված դիտարկումների հիման վրա խմբի ղեկավարը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Միջազգային փորձագետը պատրաստել է գործընկերային գնահատման առանձին կարծիք: Փաստաթուղթը թարգմանվել և տրամադրվել է փորձագիտական խմբի ղեկավարին: Միջազգային փորձագետի կարծիքի և մոտեցումների զեկույցում ներառելու պատասխանատվությունը դրվել է խմբի ղեկավարի և համակարգողի վրա: Գործընկերային գնահատման կարծիքն ամբողջությամբ ներառվել է զեկույցի տեքստում:

Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ Ոստիկանության կրթահամալիրը իր արձագանքը ուղարկել է ՈԱԱԿ 8.11.2019թ.-ին՝ առանց ներկայացնելու դիտողություններ և առաջարկություններ: Փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 26.11.2019թ.-ին:

Անուշավան Մակարյան

Համակարգողի ստորագրություն

26 նոյեմբերի 2019թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. ՄՈՒՀ-ի սկիզբը դրվել է 1966թ., երբ հիմնվել է Երևանի միլիցիայի միջին մասնագիտական դպրոցը: Այն 1991թ. վերանվանվել է ՀՀ ՆԳՆ միլիցիայի բարձրագույն դպրոց, իսկ 1995թ.՝ ՀՀ ՆԳՆ բարձրագույն դպրոց: 2000թ. ՀՀ կառավարության որոշմամբ՝ ՆԳՆ բարձրագույն դպրոցը վերանվանվեց «ՀՀ ՆԳՆ ակադեմիա»: ՀՀ կառավարության որոշմամբ 2003թ. հաստատվեց «Ոստիկանության ուսումնական հաստատությունում ուսման մասին կանոնագիրքը»: 2011թ. ՀՀ կառավարության որոշմամբ «ՀՀ ոստիկանության ակադեմիա» ՊՈԱԿ-ը վերակազմակերպվեց «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի, որի կանոնադրությունը ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է 2006թ.: Կանոնադրության համաձայն՝ Կրթահամալիրի գործունեության առարկան կրթական, գիտական, փորձագիտական, խորհրդատվական, ուսումնագիտաարտադրական, հրատարակչական գործունեության իրականացումն է:

Կրթահամալիրն իր առաքելությունն է համարում «կրթության զարգացման ոլորտում պետական և հանրային անհրաժեշտությամբ պայմանավորված ռազմավարական ծրագրերի շրջանակներում գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումը»:

Գործունեությունն իրականացնելիս Կրթահամալիրն առաջնորդվում է իր 2017-21թթ. Ռազմավարական պլանով (այսուհետ՝ ՌՊ) և դրա իրականացման պլան-ժամանակացույցով: Ինքնավերլուծության, ռազմավարական պլանի և այլ փաստաթղթերի մեջ սահմանված են դրույթներ, որոնք արտացոլում են Կրթահամալիրի ձգտումներն ու հավակնությունները գործունեության տարբեր ոլորտներում:

Կրթություն. Կրթահամալիրն իրականացնում է նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական բարձրագույն և հետբուհական մասնագիտական և լրացուցիչ կրթական ծրագրեր: Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունը իրականացնում է Կրթահամալիրի ակադեմիան, որի կազմում գործում են իրավագիտության, հեռակա ուսուցման ֆակուլտետները, 6 ամբիոն և մագիստրատուրայի բաժանմունքը:

Միջին մասնագիտական կրթությունն իրականացնում է Կրթահամալիրի քոլեջը, որի կազմում գործում են ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետը և 5 ամբիոն: Իսկ նախնական մասնագիտական կրթությունը իրականացնում է ուսումնական կենտրոնը, որի կազմում են նախնական մասնագիտական պատրաստականության բաժինը և 2 կրթաճյուղ: Լրացուցիչ կրթությունը իրականացնում է վերապատրաստման և ատեստավորման ֆակուլտետը, որտեղ ՀՀ կառավարության 2003թ. որոշմամբ սահմանված կարգով վերապատրաստում են անցնում ՀՀ ոստիկանության ծառայողները, ինչպես նաև, գերատեսչությունների ղեկավարների փոխադարձ համաձայնությամբ, քրեակատարողական վարչության և ռազմական ոստիկանության ներկայացուցիչները:

Կրթահամալիրն իր կրթական ծրագրերի նպատակն է համարում «այնպիսի կադրերի պատրաստումը, որոնք կկարողանան առավելագույնս նպաստել ՀՀ իրավական և հասարակական անվտանգության ամրապնդմանը, կկարողանան նախականխել, կանխել և

խափանել հանցագործություններն ու վարչական իրավախախտումները, հայտնաբերել և բացահայտել դրանք, մատուցել որակյալ իրավաբանական օգնություն, հանրային ծառայություններ»:

Կրթության ոլորտի համար ՌՊ-ում ռազմավարական նպատակ է սահմանվել. «Տրամադրել ուսանողի կրթական կարիքներին և աշխատաշուկայի բավարարվածությանը համահունչ կրթական ծրագրեր՝ հագեցած կրթական արդիական մեթոդաբանությամբ և տեխնոլոգիաներով»:

Նպատակի իրականացման համար ձևակերպվել են հետևյալ խնդիրները.

- կազմել մասնագիտական կրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը արտահայտող փաստաթղթերը՝ ՀՀ որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին համապատասխան,
- ապահովել ուսումնական գործընթացի, հետազոտական և ստեղծագործական գործունեության միասնականությունը,
- ներդնել նորարարական կրթական գործընթաց՝ ապահովելով բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստում առցանց, էլեկտրոնային ուսուցման տեխնոլոգիաների լայն կիրառման հիման վրա՝ կիրառելով կրթական տեղեկատվական տեխնոլոգիաները բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում,
- կրթության որակի ու արդյունավետության շարունակական բարձրացման նպատակով բարելավել դասավանդման և ուսումնառության կազմակերպման, գիտելիքների գնահատման տեխնոլոգիաները:

Հետազոտություն. Այս ոլորտում որպես ռազմավարական նպատակ Կրթահամալիրը սահմանել է. «Զարգացնել Կրթահամալիրի գիտահետազոտական գործունեությունը, ձևավորել մրցունակ գիտական և նորարարական ներուժ, աստիճանաբար անցում կատարել Կրթահամալիրի հետազոտական կարգավիճակին»:

Նպատակի իրականացման համար ձևակերպվել են հետևյալ խնդիրները.

- նախատեսել հետազոտական բաղադրիչի ներմուծումը և զարգացումը բարձրագույն կրթության բակալավրի և մագիստրոսի աստիճաններում՝ կայուն և չափելի հետազոտական և նորարարական կարողությունների ձևավորման միտումով,
- ապահովել Կրթահամալիրի գիտական ներուժի կայուն զարգացումը ասպիրանտուրայի հեռանկարային պլանավորման, կազմակերպական կատարելագործման և հետազոտողի կրթական ծրագրի արմատական վերանայման ու բարելավման ճանապարհով,
- նպաստել Կրթահամալիրում գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը,
- աջակցել մտավոր գործունեության արդյունքների փոխանցմանը և առաջանցիկ կրթափորձի տարածմանը:

Միջազգայնացում. Այս ոլորտում որպես ռազմավարական նպատակ Կրթահամալիրը սահմանել է՝ «Ապահովել Կրթահամալիրի արտաքին կապերի համակողմանի զարգացումը, խթանել հաստատության գործունեության միջազգայնացումը»:

Նպատակի իրականացման համար ձևակերպվել են հետևյալ խնդիրները.

- ընդլայնել և բազմազանեցնել Կրթահամալիրի միջազգային կապերը, խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում,
- ընդլայնել Կրթահամալիրի միջազգային գիտական համագործակցությունը, ձգտել հաստատության ներգրավմանը եվրոպական հետազոտական տարածքին:

Որակի ապահովում. Այս ոլորտում Կրթահամալիրն առանձին ռազմավարական նպատակ չի սահմանել, բայց խնդրի տեսքով անդրադարձել է «Բարձրորակ կրթության նորագույն մոտեցումները» ուղղության ներքո, այն է՝ «բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների և գործընթացների արդյունավետությունը»: Որակի ներքին ապահովման քաղաքականության խնդիրներն են.

- որակի ներքին ապահովման ընթացակարգերի մշակման և ներդրման նպատակով Կրթահամալիրի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը,
- միջազգային չափանիշներին համապատասխան որակի ներբուհական ապահովման գործընթացի մշակման նպատակով անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը,
- որակի մշակույթի ստեղծման նախադրյալների ապահովումը,
- կրթության բանագավառում առկա ձեռքբերումների, ազգային առանձնահատկությունների հիման վրա իրականացնել պետության, հասարակության և անհատի տվյալ ժամանակահատվածին համահունչ որակյալ կրթություն՝ մասնագիտական կրթության բոլոր մակարդակներում, այդ թվում՝ հետբուհական և լրացուցիչ կրթության,
- կրթության որակի ապահովման ճկուն ընթացակարգերի և մեխանիզմների միջոցով ապահովել Կրթահամալիրի գրավչությունն ու ինտեգրումը ԵԲԿՏ-ին,
- նպաստել և խթանել հետազոտության արդյունքների ներդրումը ուսուցման և ուսումնական գործընթացներում, ապահովել վերջիններում սովորողների ներգրավվածությունը,
- նպաստել և խթանել որակի շարունակական բարելավման մշակույթի ներդրումը:

Փորձագիտական խումբը, գնահատում կատարելիս, առաջնորդվել է «համապատասխանություն նպատակներին» սկզբունքով և վերոնշյալ տեղեկատվությունը դիտարկել է որպես ՄՈՒՀ-ի հիմնական հավակնություններ և նպատակներ:

Ι. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

Կրթահամալիրի առաքելությունը, հեռապատկերը և մնայուն արժեքները ամրագրվել են գիտական խորհրդի կողմից հաստատված 2017-2021թթ. ռազմավարական պլանում: Համաձայն որի՝ Կրթահամալիրը ՀՀ կառավարությանն առընթեր Ոստիկանության համակարգում գործող պետական բարձրագույն ուսումնական հաստատություն է, որն իրականացնում է բարձրագույն (իրավաբանական կրթությամբ (բակալավր և մագիստրոս), ինչպես նաև՝ հետբուհական մասնագիտական (իրավաբանական ուղղությամբ գիտամանկավարժական կադրերի պատրաստումը, ոստիկանության գործունեության հետ կապված հիմնախնդիրների գիտական մշակումը, իրավագիտության բնագավառում հետազոտությունների իրականացումը), նախնական, միջին մասնագիտական (ոստիկանական կրթությամբ մասնագետների պատրաստումը) և լրացուցիչ կրթական ծրագրեր: Առաքելությունից բխող կրթական գործունեությունը տարածվում է ՈԱՇ-ի 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակներում: Կրթահամալիրը շնորհում է հետևյալ որակավորումները՝ ոստիկան (նախնական մասնագիտական կրթություն), ոստիկանության սպա (միջին մասնագիտական կրթություն), իրավագիտության բակալավր և իրավագիտության մագիստրոս (բարձրագույն կրթություն): Կրթահամալիրի առաքելությանը համահունչ՝ ռազմավարական պլանով նախատեսվել են հետևյալ ռազմավարական առաջնահերթությունները (ուղղությունները)՝ 1.բարձրորակ կրթության նորագույն մոտեցումներ, 2. մարդկային ռեսուրսների կառավարում, 3.արդիական հետազոտություն, մրցունակ գիտություն և նորարարություն, 4.հանրային ներգրավում, սոցիալական համագործակցություն և ծառայություններ, 5. արտաքին կապեր և միջազգային գործունեության ընդլայնում: ՌՊ-ում յուրաքանչյուր խնդրի համար սահմանված են առաջընթացի գնահատման ցուցիչներ:

ՌՊ-ին կից մշակված է գործողությունների իրականացման ժամանակացույց, որտեղ ներկայացված են ռազմավարական խնդիրների իրագործման համար պլանավորված քայլերը, կատարման ժամանակահատվածն ըստ տարիների, պատասխանատու ստորաբաժանումը, անհրաժեշտ ռեսուրսները (մարդկային, նյութական, ֆինանսական), վերջնարդյունքը և գործունեության առանցքային ցուցիչները (ԳԱՑ): ՌՊ-ում ներկայացված առաջընթացի գնահատման ցուցիչները չնայած ամբողջությամբ չեն կրկնում ԳԱՑ-երը, բայց, ըստ էության, նույն ցուցիչներն են: Ժամանակացույցի անհրաժեշտ ռեսուրսների սյունակում միայն մարդկային ռեսուրսներ և/կամ ստորաբաժանումներ են նշված. քայլերի իրականացման համար նյութական և ֆինանսական ռեսուրսներ չեն պլանավորում: Կրթահամալիրի բյուջեն փոխկապակցված չէ ռազմավարական պլանի հետ:

Չնայած հաստատված ՌՊ-ի առկայությանը՝ 2017թ.ՀՀ Ոստիկանության շտաբից պահանջվել է ներկայացնել 2018-2022թթ. կրթահամալիրի գործունեության զարգացմանն ուղղված միջոցառումների ծրագիր՝ ըստ շտաբի ձևաչափի: Ձևաչափը նույնպես ներառում է միջոցառման անվանումը, ակնկալվող արդյունքը, պատասխանատու կատարողը, կատարման ժամկետը, ֆինանսավորման աղբյուրը: Շտաբ ուղարկված ծրագիրը պարունակում է ՌՊ-ում նկարագրված միջոցառումների փոքր մասը միայն:

1.2. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Կրթահամալիրի որակի ապահովման հայեցակարգի 5-րդ կետով սահմանված են հետևյալ շահակիցները՝ պետությունը, հասարակությունը, դիմորդներն (սովորողներ) ու վերջիներիս ծնողները, շրջանավարտները, անձնակազմը, գործընկերները, ՀՀ Ոստիկանությունը և այլ գործատուները:

Կրթահամալիրի ՌՊ-ի մշակումն իրականացվել է հաստատության տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչներից ձևավորված խմբի կողմից՝ առանց հրամանով հաստատված կազմի: Գիտխորհրդին կից Ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողովը ևս չի մասնակցել մշակումներին, քանի որ ձևավորվել է դրանից հետո: Այդ հանձնաժողովի 2019թ. աշխատանքային պլանը ներառում է ընդամենը 3 կետ. սովորողի ուղեցույցի մշակում, սովորողների կրթական կարիքների վերհանման քաղաքականության մշակում, հանձնաժողովի գործունեության կանոնակարգի վերանայում:

ՌՊ-ի մշակմանը արտաքին շահակիցները գործուն մասնակցություն չեն ունեցել: Ներքին շահակիցների ներգրավվածությունը ՌՊ քննարկման գործընթացում իրականացվել է Կրթահամալիրի խորհրդի և գիտխորհրդի աշխատանքներին նրանց մասնակցությամբ: Նշված խորհուրդների կազմերում ՀՀ Ոստիկանության կադրերի վարչության պետի տեղակալի ներգրավման շնորհիվ ընդունվող որոշումներում արտահայտվում են նաև ՀՀ Ոստիկանության՝ որպես Կրթահամալիրի հիմնական գործատուի դիրքորոշումները: Ակադեմիայի և քոլեջի ՌՊ-ները ուղարկվել են համաձայնեցման ՀՀ Ոստիկանության շտաբին և շահագրգիռ վարչություններին: Առարկություններ և առաջարկություններ չեն ներկայացվել: Ըստ ինքնավերլուծության՝ Կրթահամալիրը դեռևս պասիվ է համարում արտաքին շահակիցների հետ հարցումների և հանդիպումների կազմակերպումը:

2018թ. Կրթահամալիրի պետի հրամանով հաստատվել է ռազմավարական պլանավորման ընթացակարգ, որով սահմանված են գործընթացի 16 հիմնական փուլեր, այդ թվում՝ ներկա իրավիճակի վերլուծություն, արդյունքների քննարկում, կրթահամալիրի զարգացման քաղաքականության ճշգրտում և այլն: Այդ ընթացակարգով ռազմավարական պլանավորում դեռևս չի իրականացվել:

1.3. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Առաքելության և նպատակների իրականացման գնահատումը կրթահամալիրն իրականացնում է խորհրդում և գիտխորհրդում կառուցվածքային ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունների քննարկմամբ: Որոշ նիստերում հաշվետությունների քննարկման ժամանակ հրավիրվում է ՀՀ Ոստիկանության պետի՝ Կրթահամալիրը

համակարգող տեղակալը, ով գնահատում է կատարված աշխատանքները՝ նշելով առկա խնդիրները և բարելավման ուղղությունները:

Կրթահամալիրի ամբողջական գործունեության գնահատումն իրականացվում է պետի հաշվետվության միջոցով՝ կազմված ստորաբաժանումների հաշվետվությունների հիման վրա: Այն ներկայացվում է ինչպես ՀՀ Ոստիկանության վերադաս մարմիններին, այնպես էլ ներքին անձնակազմին խորհուրդների նիստերի ժամանակ:

Կրթահամալիրի պետի 2018թ. հրամանով հաստատվել է «ՌՊ կատարման վերաբերյալ հաշվետվությանը ներկայացվող պահանջների և ներկայացման կարգը, հաշվետվության ձևը»: 2019թ. պետի նոր հրամանով կատարվել են փոփոխություններ և լրացումներ, համաձայն որի՝ ստեղծված աշխատանքային խումբը պետք է վերլուծի ստորաբաժանումների կողմից ըստ ձևաչափի ներկայացված հաշվետվությունները և կազմի ամբողջական տարբերակ գիտխորհրդին ներկայացնելու համար: Ըստ կարգի ամենամյա հաշվետվությունը պետք է ներառի 4 կետ. հաշվետու ժամանակահատվածում ՌՊ ժամանակացույցով նախատեսված գործողության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն, քայլերի նկարագիրը, քայլերի իրագործման արդյունքները, ՌՊ-ում և պլան-ժամանակացույցում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ (անհրաժեշտության դեպքում): Ըստ այդ ձևաչափի 2017-2021թթ. ՌՊ կատարման հաշվետվություն կազմվել է միայն 2018թ. համար: Որոշ քայլերի իրականացման հետ կապված ի հայտ են եկել խնդիրներ, քայլերի մի մասն առաջարկվել է ընդհանրապես հանել (իրավասություններից դուրս և հավակնոտ լինելու պատճառով), մի մասն էլ վերաձևակերպել՝ ավելի իրատեսական դարձնելու համար: Արդյունքում միայն փորձագիտական այցին ընդառաջ Կրթահամալիրի պետը հանձնարարել է կազմակերպել քննարկումներ ՌՊ վերանայման նպատակով:

ՌՊ կատարման հաշվետվության մեջ չկան ԳԱՑ-երի միջոցով առաջընթացը գնահատելու վերլուծություններ: Մինչ այժմ չի գնահատվել և վերլուծվել, թե ՌՊ-ով ամրագրված առաքելության և նպատակների իրականացումը որ փուլում է: Դեռևս չեն գործում գնահատման հիման վրա բարելավման մեխանիզմներ և ընթացակարգեր:

Դատողություններ: Կրթահամալիրի ՌՊ-ում սահմանված առաքելությունը ընդհանուր առմամբ հստակ է և համապատասխանում է ՈԱՇ-ին: ՀՀ Ոստիկանության համակարգի համար կադրերի պատրաստման միակ կրթական հաստատությունը լինելը նպաստում է նաև Կրթահամալիրի նպատակների և խնդիրների հստակ ձևակերպմանը, որոնք արտացոլված են 2017-2021թթ. ՌՊ-ում: Սակայն դրանց ավելացվել են նաև այնպիսի հավակնոտ նպատակներ (անցումը հետազոտական կարգավիճակին, կրթական ծրագրերի միջազգայնացումը, ներգրավումը եվրոպական հետազոտական տարածքին և այլն), որոնց իրագործումը առկա մարդկային և տեխնիկական ռեսուրսների պայմաններում իրատեսական չէ: ՌՊ վերանայման համար պետի հանձնարարականը փաստում է, որ Կրթահամալիրն ինքն էլ է գնահատել իր պլանի իրականացման դժվարությունները:

ՌՊ-ի կատարման ժամանակացույցը, չնայած որոշ թերությունների, հիմք է հանդիսացել առաքելության և նպատակների հիման վրա հետագա գործունեության պլանավորման համար: Այդուհանդերձ, պլան-ժամանակացույցը դեռևս հստակեցման կարիք ունի՝ անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսների հատկացման և դրանով

գործողություններն իրագործելի դարձնելու համար: Կրթահամալիրում իրականացվող ստորաբաժանումների տարեկան պլանավորումները ընդհանուր առմամբ համադրելի են պլան-ժամանակացույցի հետ, սակայն պլանի հետ անմիջական կապը ժամանակացույցի և վերջնարդյունքների իմաստով հստակ չի ապահովված: Այն, որ բյուջեի բաշխումը չի իրականացվում ըստ ռազմավարական նպատակների և խնդիրների, խաթարում է բյուջե-ՌՊ փոխկապակցվածությունը և ռիսկային է դարձնում պլանի պատշաճ իրականացումը՝ առավել ևս հավակնոտ նպատակների դեպքում:

Չնայած, որ արտաքին շահակիցները ակտիվ ներգրավված չեն եղել ՌՊ-ի մշակմանը, գլխավոր շահակից հանդիսացող ՀՀ Ոստիկանության ներկայացուցիչների մասնակցությունը պլանի քննարկման աշխատանքներին փաստում է վերջինիս համաձայնեցված լինելու մասին: Փորձագիտական խումբը գտնում է, որ ՀՀ Ոստիկանության վերադաս մարմինների մասնակցությունը, որպես հիմնական գործատու, կարող էր նպաստել Կրթահամալիրի ռազմավարության առավել հստակ և նպատակային պլանավորմանը:

Առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման համար հաստատված կարգով 2019թ. իրականացված գնահատման արդյունքում վեր հանված ՌՊ-ի հստակեցման և վերանայման անհրաժեշտությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ՌՊ-ն, որպես գործունեության պլանավորման հիմք, արդյունավետ չի գործել մինչ այժմ: Սահմանված ԳԱՑ-երը վերլուծությունների համար փաստացի չեն կիրառվել, իսկ կատարված աշխատանքների հաշվետվությունները, չպարունակելով որակական վերլուծություններ, արդյունավետության գնահատման և հետագա բարելավման հիմք չեն հանդիսացել: Գնահատման փաստացի գործող մեխանիզմը եղել է Կրթահամալիրի պետի տարեկան հաշվետվությունները, որոնք էլ անմիջական չեն համապատասխանեցված ՌՊ նպատակներին և դրանց իրականացման պլան-ժամանակացույցին: Գործող մեխանիզմների (հաշվետվություններ, ԳԱՑ) արդյունավետության վերլուծությունները հաստատությանը թույլ կտային գնահատել դրանց գործունակությունը և ազդեցությունը ռազմավարական պլանավորման և իրականացման վրա:

Եզրահանգում: Հաշվի առնելով Կրթահամալիրի առաքելության և նպատակների ՈԱԾ-ին համապատասխան հստակ ձևակերպումը, ռազմավարական նպատակների և խնդիրների համապատասխանությունը այդ առաքելությանը, գործունեության հիմքում ՀՀ Ոստիկանության կարիքների դիտարկումը որպես հիմնական արտաքին շահակից, ինչպես նաև կատարողականի գնահատման հաշվետվողականության հստակ մեխանիզմի կիրառումը, կարելի է փաստել, որ Կրթահամալիրի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը և ՀՀ Ոստիկանության կարիքներին:

Եզրակացություն: ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝ սահմանված էթիկայի կանոններին համապատասխան և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Կրթահամալիրի կառավարումն, ըստ կանոնադրության, իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած մարմինը՝ ՀՀ Ոստիկանությունը, գործադիր մարմինը՝ կրթահամալիրի պետը: Կրթահամալիրի խորհուրդը պետին առընթեր խորհրդակցական մարմին է, որի աշխատանքները կազմակերպում և ղեկավարում է պետը: Գիտական խորհուրդը (50 անդամից ոչ ավել, 5 տարի ժամկետով) լուծում է Կրթահամալիրի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման և կառավարման հիմնահարցերը: Խորհուրդների գործունեությունը կանոնակարգվում է հաստատված կարգերով: 2018թ. գիտխորհրդին կից ձևավորվել է Ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողով, որի խնդիրներն, ըստ կանոնակարգի՝ ստրատեգիական պլանավորմանը և որակի ապահովմանը վերաբերող հարցերի ուսումնասիրումն ու իրավիճակի վերլուծությունն է, խնդիրների հայտնաբերումն ու դրանց լուծման առաջարկությունների, ներքին իրավական ակտերի նախագծերի մշակումը և այլն: Սակայն մինչ այժմ հանձնաժողովը Կրթահամալիրում մշակվող իրավանորմատիվային փաստաթղթերի քննարկում է միայն իրականացրել:

Կրթահամալիրի կազմակերպական կառուցվածքը և դրա փոփոխությունները հաստատվում են ՀՀ Ոստիկանության պետի հրամանով: Կառուցվածքում հորիզոնական կապն ապահովվում է գիտխորհրդի միջոցով, որտեղ ներգրավված է ղեկավար կազմը, իսկ ուղղահայաց կապերը՝ հաշվետվությունների միջոցով: Որոշ բաժինների մոտ առկա է գործառույթների փոխծածկում: Մասնավորապես, Ծառայության բաժնի ու Կադրերի և ԱՀՏԱ բաժնի գործառույթները անձնակազմի հետ տարվող աշխատանքների մասով նույնական են ըստ կանոնադրությունների, Գիտական աշխատանքների բաժնի ու Միջազգային համագործակցության և SS ներդրման բաժնի մոտ միջազգային համագործակցության շրջանակներում գործառույթների հստակ տարանջատում չկա: Միջազգային համագործակցության և SS ներդրման գործառույթները համատեղված են մեկ բաժնում: Կառուցվածքում չկա պրակտիկայի կազմակերպման համար պատասխանատու ստորաբաժանում:

Կրթահամալիրը կառավարչական որոշումներ կայացնելիս կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համար 2018թ. հաստատել է Կրթահամալիրի հակակոռուպցիոն քաղաքականության ծրագիրը: Էթիկայի նորմեր առանձին փաստաթղթով սահմանված չեն:

Կրթական և այլ գործընթացների իրականացման համար Կրթահամալիրը տրամադրում է մարդկային և նյութական ռեսուրսներ՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով պայմանագրային հիմունքներով դասախոսների և այլ աշխատակիցների: Ստորաբաժանումներին անհրաժեշտ միջոցների վերհանումը իրականացվում է ստորաբաժանումների պետերի կողմից համապատասխան հայտեր ներկայացնելով: Կրթահամալիրի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը Կրթահամալիրի պետի ներկայացմամբ հաստատում է ՀՀ Ոստիկանության պետը:

Կրթահամալիրում առկա մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների բավարարվածության վերաբերյալ ամբողջական վերլուծություններ չկան: Կառավարման համակարգի արդյունավետության գնահատման վերլուծություններ նույնպես չեն իրականացվում:

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Կրթահամալիրի խորհրդի կարգի համաձայն՝ դասախոսների և ուսանողների պարտադիր ներգրավում խորհրդի կազմում նախատեսված չէ: Կազմը հաստատում է պետը: Ընդգրկված են ղեկավար պաշտոն զբաղեցնող անձինք և ՀՀ Ոստիկանության կադրային քաղաքականության վարչության պետը: Կրթահամալիրի պետի որոշմամբ մշտապես 1 ուսանող-ներկայացուցիչ է ընդգրկված, որի թեկնածությունն առաջադրվում է ՈՒԽ միջնորդությամբ: Գիտխորհրդի կանոնակարգի համաձայն՝ անդամների 25%-ը կազմում են Կրթահամալիրի սովորողները: Գիտխորհրդի 46 հոգանոց կազմում ներկայումս ընդգրկված են 12 սովորող և 2 դասախոս: Սովորողների թեկնածուներին ներկայացնում է ՈՒԽ-ն: Սովորողներ են ընդգրկված ակադեմիայից և քոլեջից, անվճար և վճարովի: Սակայն, ինչպես նշվում է ԻՎ-ում, սովորողների և դասախոսների նախաձեռնողականությունը կառավարման մարմիններում իրենց առնչվող որոշումների կայացման ժամանակ թույլ է:

Խորհուրդների որոշումները վերաբերող մասով ներկայացվում են դասախոսներին ու սովորողներին ժողովների և հանդիպումների ժամանակ: Քննարկում է կազմակերպվում նաև ամբիոնային նիստերի ընթացքում: Անհրաժեշտության դեպքում ամբիոնի պետը առաջարկություններ է ներկայացնում զեկուցագրի տեսքով: Կրթահամալիրում գործընթացների օպերատիվությունը և թափանցիկությունը ապահովելու նկատառումներից ելնելով ընդունվող ներքին իրավական ակտերի նախագծերը տեղադրվում են ներքին համակարգչային ցանցում:

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Կրթահամալիրը պլանավորումն իրականացնում է 2 մակարդակում: Որպես երկարաժամկետ պլանավորում դիտարկվում է ՌՊ գործողությունների կատարման պլան-ժամանակացույցը: Միջնաժամկետ պլանավորում չի իրականացվում: Կրթահամալիրի ստորաբաժանումների գործողությունների կարճաժամկետ ծրագրերը արտացոլում են իրենց տարեկան աշխատանքային պլաններում, որոնց հիմքում, սակայն, չի դրվում ՌՊ-ն: Պլանների իրականացումն արտահայտվում է հաշվետվությունների մեջ, որոնցում չի վերլուծվում ՌՊ-ի ԳԱՑ-երը, ռազմավարական նպատակների և խնդիրների իրականացումը: 2017-21թթ. ՌՊ-ից բխեցված Կրթահամալիրը կազմել է միայն 2018-2019 ուստարվա կարճաժամկետ պլան՝ ՌՊ-ից այդ տարվա միջոցառումների առանձնացմամբ:

2019թ. հուլիսին գիտխորհրդի նիստով հաստատվել է Կրթահամալիրի կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվողականության միասնական կարգ, որով նախատեսվում են հաշվետվությունների մեջ պարտադիր վերլուծություններ՝ աշխատանքների վրա ազդող գործոնների, թերացման պատճառների, նախորդ տարվա

ցուցանիշների դինամիկայի համեմատության վերաբերյալ: Փորձագիտական այցի ժամանակ կարգը դեռևս ներդրված չէր: Կրթահամալիրում պլանների մշտադիտարկումն իրականացվում է ըստ հաշվետվությունների, որոնք դեռևս վերլուծական բաղադրիչ չեն պարունակում:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Կրթահամալիրի տեղեկատվական-վերլուծական աշխատանքների իրականացման և հաշվետվողականության 2019թ. հաստատված կարգի համաձայն՝ կարևորվում է ստորաբաժանումների խնդիրների և գործառույթների վրա ազդող գործոնների վերլուծումը: Սակայն դեռևս մշակված չէ գործոնների այն ցանկը, ըստ որի ստորաբաժանումները պետք է իրականացնեն վերլուծություններ: Արտաքին և ներքին գործոնների միասնական համակարգված ուսումնասիրություն Կրթահամալիրում դեռ չի իրականացվել, չի հստակեցված դրա համար պատասխանատու ստորաբաժանումը: Չնայած դրան, ԻՎ-ում առանձնացված են որոշ գործոններ, որոնց ուսումնասիրությունը ՀՀ Ոստիկանության հետ համատեղ հանգեցրել է Կրթահամալիրում համապատասխան որոշումների կայացման, այդ թվում՝ ՀՀ ոստիկանության շտաբ օրենսդրական փոփոխությունների առաջարկով հանդես գալուն: Փորձագիտական այցի ժամանակ հանդիպումների մասնակիցները նշեցին, որ Կրթահամալիրում արտաքին և ներքին գործոնների ուսումնասիրությունը հիմնականում իրականացվում է անձնական կապերի, շփումների միջոցով տեղեկատվության հայթայթման հիման վրա: Հիմնական գործոնների ուսումնասիրությունն իրականացվում է Ոստիկանության կողմից, որի արդյունքում ուղարկված հանձնարարականները ազդում են Կրթահամալիրում որոշումների կայացման վրա:

Կրթահամալիրում ուսուցման որակի վրա ազդող գործոնների բացահայտման նպատակով իրականացվել են հարցումներ ներքին և արտաքին շահակիցների որոշ խմբերի շրջանում: Գործոնների ուսումնասիրություններ չեն դրվել ՌՊ-ի կամ միջազգայնացման ռազմավարության մշակման հիմքում:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Կրթահամալիրի մասնագիտական կրթության որակի ապահովման հայեցակարգում ամրագրված է որակի կառավարման սկզբունքի (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում) կիրառման կարևորությունը: ԻՎ-ում ՄՈՒՀ-ը հայտարարում է, որ իր քաղաքականության և ընթացակարգերի վարչարարությունն իրականացնում է հետևյալ ուղղություններով՝ ռազմավարական պլանավորում, պլանավորում ըստ գործընթացների, գործընթացների փաստաթղթավորում, կրթության որակի մշտադիտարկում, ուսումնական պարապմունքների որակի վերահսկում, ստորաբաժանումների՝ ՌՊ-ից բխող միջոցառումների կատարման վերլուծություն հաշվետվությունների ձևաչափով: Սակայն փաստաթղթերի ուսումնասիրությունն ու փորձագիտական այցի ընթացքում իրականացված դիտարկումները փաստեցին, որ Կրթահամալիրում ՊԻԳԲ սկզբունքը գործունեության մեջ չի արմատավորված: Գործընթացները հիմնականում գտնվում են պլանավորման փուլում: Պլանավորված գործընթացների զգալի մասը (օրինակ ՌՊ-ով, Միջազգայնացման ՌԾ-ով,

Որակի ներքին ապահովման հայեցակարգով և քաղաքականությամբ նախատեսված) դեռ ամբողջությամբ իրականացման փուլ չի մտել: Կանոնակարգված գնահատում և մշտադիտարկում իրականացված չէ, եզակի են գնահատումների վրա հիմնված բարելավումները:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

2019թ. հաստատվել է Կրթահամալիրի կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգ, որը դեռ չի գործարկվել: Հաստատությունում կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության մասին տեղեկատվության հիմնական աղբյուր են դիտարկվում հարցումները, գիտխորհրդի նիստերում քննարկվող հաշվետվությունները և ինստիտուցիոնալ կարողությունների ԻՎ գործընթացը:

Սակայն հարցման մեխանիզմը նոր է ներդրվել և թիրախային չի գործում: Հարցումների արդյունքների բովանդակային և համակարգային վերլուծություններ չեն իրականացվում: Առավել ևս չեն ներդրվել հարցումների արդյունավետության գնահատման մեխանիզմներ: Հաշվետվությունների արդյունավետության գնահատում նույնպես չի իրականացվում: ԻՎ-ն դեռևս վերլուծական բնույթ չի կրում, կան չափորոշիչներ, որոնց վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը չի անդրադառնում պահանջված ոլորտին: ԻՎ գործընթացի իրականացման մասնագիտական փորձի պակաս կա:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ:

Կրթահամալիրում գործող ՄԿԾ-ների և շնորհվող որակավորումների մասին տեղեկատվությունը տարածելու հիմնական գործիքը Կրթահամալիրի կայքն է, որտեղ հնարավոր է մուտք գործել նաև ՀՀ Ոստիկանության պաշտոնական կայքում առկա համապատասխան հղմամբ: Սակայն ՄԿԾ և շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվություն կայքէջում դրված չէ: Չեն հրապարակվում ԿՈԱԲ վերլուծության արդյունքները: Կրթահամալիրն էլ ԻՎ-ում փաստում է տեղեկատվության հրապարակումների արդյունավետության գնահատման մեխանիզմների անկատարության մասին: Դիտարկումները ցույց տվեցին, որ ըստ էության, նման մեխանիզմներ չկան:

Անհրաժեշտ է նշել, որ 2019թ. պետի հրամանով որոշակի կարգավորվել և ակտիվացել է Կրթահամալիրի կայքի գործունեությունը:

Դատողություններ: Կառավարման մարմինների և ստորաբաժանումների գործունեության համար առկա իրավական ակտերը, կանոնակարգային և ընթացակարգային բազան ապահովում են Կրթահամալիրի կառավարման համակարգի հստակ գործունեությունը: Կառավարման համակարգի կանոնակարգվածությանը նպաստում է նաև ոստիկանական ստորաբաժանման կարգավիճակը, ինչն իր հերթին ապահովում է որոշումների կայացման և ենթակայության հստակ աստիճանակարգում: Իր հերթին կոլեգիալ մարմինների առկայությունն ապահովում է որոշումների կայացման մասնակցողական գործընթաց՝ կոլեգիալության սկզբունքի պահպանմամբ: Կոլեգիալ կառամարման մարմիններում ՀՀ Ոստիկանության ներկայացուցչի անմիջական ներգրավումը և առանձնահատուկ

կարևորության փաստաթղթերի համաձայնեցումը ստեղծում է անմիջական կապ լիազոր մարմնի և Կրթահամալիրի միջև, ինչը նպաստում է հիմնական պատվիրատուի կարիքների և Կրթահամալիրի գործունեության համապատասխանությունը: Կազմակերպական կառուցվածքի և դրա փոփոխությունների հաստատումը ՀՀ Ոստիկանության պետի կողմից դիտվում է որպես կառուցվածքի կայունության երաշխիք, սակայն որոշ կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների հստակ տարանջատումը, պարտականությունների հստակ բաշխումը կնպաստեր դրանց արդյունավետության բարձրացմանը:

Քանի որ կառավարման համակարգի և դրա առանձին օղակների գործունեության արդյունավետության գնահատման կանոնակարգված գործընթաց չի իրականացվում՝ դրանով Կրթահամալիրը չի գնահատում նաև իր ռազմավարական նպատակներին համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներով ապահովվածությունը՝ վտանգելով նպատակների իրականացումը և ծախսերի նպատակայնությունը: Մյուս կողմից, նյութական ռեսուրսների տրամադրումը ստորաբաժանումներին ըստ պարբերական զեկուցագրերի և բյուջեի հնարավորությունների որոշ չափով ապահովում է անհրաժեշտ նյութական ռեսուրսների առկայությունը, սակայն չի երաշխավորում կայունությունը:

Կառավարման համակարգն ապահովված է անհրաժեշտ մարդկային ռեսուրսներով, չնայած փորձագիտական խումբը գտնում է, որ մասնագիտական առանձնահատկություններից ելնելով խիստ կարևորվող պրակտիկայի համակարգման համար առանձին ստորաբաժանման ստեղծումը անհրաժեշտություն է: Կրթահամալիրի բյուջեի տարանջատումը ՌՊ-ից ռիսկային է դարձնում ռազմավարական նպատակների իրականացումը, առավել ևս այնպիսի հավակնությունների դեպքում (գիտահետազոտական, միջազգայնացում), որոնք պահանջնում են ֆինանսական մեծ ներդրումներ:

Կրթահամալիրի կառավարման համակարգը ֆորմալ առումով հնարավորություն տալիս է դասախոսներին և ուսանողներին մասնակցել որոշումների կայացմանը: Կարևորագույն դեր է հատկացված գիտխորհրդին, որտեղ քննարկվում և կայացվում են բոլոր կարևոր որոշումները: Սակայն դիտարկումները ցույց տվեցին, որ ուսանողների փաստացի մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին բավական պասիվ է՝ թերևս պայմանավորված նաև ոստիկանական ծառայությանը բնորոշ ենթակայության հանգամանքով: Ուսանողների ձայնի ոչ լիարժեք արտահայտումը կարող է վտանգել ընդունած որոշումների ուղղվածությանը նրանց կարիքներին և ուսանողակենտրոնությանն, ընդհանրապես: Մյուս կողմից, փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ի ղեկավարության ջանքերն ուսանողների հետ անմիջական կապերի հաստատման և բաց քննարկման դաշտ բերելու ուղղությամբ:

Կրթահամալիրում գործող պլանավորման գործընթացը կանոնակարգված է և համապատասխանեցված լիազոր մարմնի պլաններին: Սակայն ՌՊ-ի և կարճաժամկետ պլանների միջև ոչ հստակ կապը, ՌՊ-ի ցուցիչների միջոցով Կրթահամալիրի առաջընթացի վերլուծման բացակայությունը ցույց են տալիս, որ ՌՊ-ն դեռևս չի հանդիսանում գործունեության ուղղորդող հիմնական փաստաթուղթ: Ստորաբաժանումների համար ՌՊ-ն դեռևս որպես ռազմավարական զարգացման փաստաթուղթ չի ընկալվում: Վերջիններիս հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի բացակայությունը խոչընդոտում է արդյունավետության գնահատմանը:

Չնայած Կրթահամալիրը դեռևս չի իրականացնում իր վրա ազդող ներքին և արտաքին գործոնների ամբողջական համակարգված ուսումնասիրություններ, սակայն ՀՀ Ոստիկանության դերն այդ առումով բավականին մեծ է և որոշ չափով լրացնում է պակասը: Կրթահամալիրի ղեկավարության անձնական ջանքերը նպաստում են ծառացած մարտահրավերների վերաբերյալ հավաստի տվյալների հայթայթմանը, սակայն փորձագիտական խումբը կարծում է, որ ինստիտուցիոնալ առումով այս գործընթացները թիրախավորման և կանոնակարգման կարիք ունեն:

Որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքը Կրթահամալիրի քաղաքականության և ընթացակարգերի վարչարարության մեջ դեռևս չի արմատավորվել՝ պայմանավորված այդ սկզբունքի իրականացման պահանջները պարունակող փաստաթղթային հիմքերի ներդրված չլինելու հետ: Գնահատման և բարելավման փուլերը համարյա բոլոր ընթացակարգերում տեսանելի չեն, ինչը թույլ չի տալիս հաստատությանը հիմնավորել, որ կառավարման որոշումները կայացվում են բավարար և հավաստի տվյալների վերլուծության հիման վրա, և առկա են շարունակական բարելավման գործընթացներ:

Կրթահամալիրը մինչ այժմ չի իրականացրել կանոնակարգված գործընթաց՝ կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծման և կիրառման գնահատման ուղղությամբ: Որոշ մեխանիզմներ մշակվել են միայն վերջերս և արդյունավետության գնահատում չեն անցել:

Կրթահամալիրը, գիտակցելով կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվության հավաքագրման և վերլուծության մեխանիզմների անկատարությունը, դեռևս գործուն քայլեր չի նախաձեռնում այդ ուղղությամբ: ՄԿԾ և շնորհվող որակավորումների որակի մասին օբյեկտիվ և հիմնավոր տեղեկատվության հրապարակումները կնպաստեին հասարակական վստահության և Կրթահամալիրի վարկանիշի աճին:

Եզրահանգում: Հաշվի առնելով Կրթահամալիրի առաքելության իրականացմանը միտված կառավարման համակարգի առկայությունը, հիմնական նպատակներից և խնդիրներից բխող կազմակերպական կառուցվածքի կայունությունը, կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կանոնակարգվածությունը, պլանավորման և հաշվետվողականության հստակ մեխանիզմների գործումը, շահակիցների՝ իրենց առնչվող որոշումների կայացմանը մասնակից լինելու հնարավորությունները, որոշումներ կայացնելիս պատվիրատուի պահանջների և ուսումնասիրությունների վրա հիմնվելը՝ կարելի է փաստել, որ Կրթահամալիրի կառավարումն ու վարչարարությունը նպաստում են առաքելության և նպատակների իրագործմանը:

Եզրակացություն: ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Կրթահամալիրը բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցման ձևերով իրականացնում է «Իրավագիտություն» մասնագիտության կրթական ծրագիր՝ վճարովի և անվճար հիմունքներով: Վերջիններս տարբերվում են ինչպես կրթության բովանդակությամբ, այնպես էլ ուսանողներին տրվող արտոնություններով: Այդ մասնագիտությունների համար չկան հաստատված պետական կրթական չափորոշիչներ: Որպես ՄԿԾ-ի մշակման հիմք Կրթահամալիրը դիտարկում է իր առաքելությունը, ՀՀ Ոստիկանության պահանջներն ու ՈԱԾ-ին համապատասխանությունը: Բացի բարձրագույն կրթությունից Կրթահամալիրում իրականացվում է նաև իրավագիտության մասնագիտությամբ հետբուհական մասնագիտական, ինչպես նաև նախնական, միջին մասնագիտական (ոստիկանական կրթությամբ մասնագետների պատրաստում) և լրացուցիչ կրթական ծրագրեր: «Ոստիկան-սպա» որակավորման միջին մասնագիտական կրթական ծրագիրը հաստատված մոդուլային կառուցվածք ունի՝ մշակված պետական կրթական չափորոշչի հիման վրա: Հաստատված է Կրթահամալիրի ակադեմիայում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ, որտեղ առկա է կրեդիտային համակարգի ընդհանուր նկարագիր: Փորձագիտական այցի ժամանակ հանդիպումներին մասնակցած ՊԴ կազմը և ուսանողները տեղյակ չէին կրեդիտային համակարգի դրույթներից:

Կրթահամալիրն իր կրթական ծրագրերի հիմնական նպատակն է համարում այնպիսի կադրերի պատրաստումը, որոնք կկարողանան առավելագույնս նպաստել ՀՀ իրավական և հասարակական անվտանգության ամրապնդմանը, կկարողանան նախականխել, կանխել և խափանել հանցագործություններն ու վարչական իրավախախտումները, հայտնաբերել և բացահայտել դրանք, մատուցել որակյալ իրավաբանական օգնություն հանրային ծառայություններ:

Կրթահամալիրի կրթական ծրագրերը կազմվել են վերջնարդյունքահեն մոտեցմամբ միայն 2019թ.՝ առաջնորդվելով նույն թվականին հաստատված «ՀՀ Ոստիկանության կրթահամալիրում կրթական ծրագրերի մշակման կարգով»: Չնայած դեռևս 2017թ. վերջնարդյունքներով մշակված էին առարկայական նկարագրերը: ՄԿԾ մշակման հիմքում չեն դրվել աշխատաշուկայի վերլուծություններ՝ չնայած հաստատության ծրագրերի մասնագրերի պահանջներում նման մոտեցումը պարտադիր է: ՄԿԾ-ների հաստատված մասնագրերը համաձայնեցվել են ՀՀ Ոստիկանության շտաբի հետ, որտեղից հիմնականում առաջարկություններ և դիտողություններ չեն ստացվել: Մասնագիրը ներառում է կրթական ծրագրերի ընդունված կառուցվածքի հիմնական բաժինները: Չնայած ԻՎ-ում նշվում է, որ ՄԿԾ-ների մասնագրերում հատկապես մեծ ուշադրություն է դարձվել ուսումնառության ակնկալվող արդյունքների չափելիությանը, սակայն վերջնարդյունքների գիտելիք և հմտությունների մասը ձևակերպված չէ Բլյումի տաքսոնոմիայի կիրառմամբ: ՄԿԾ-ների վերջնարդյունքները քարտեզագրվել են առարկաների հետ: Դասընթացների մեծ մասը

վերաբերում է այնպիսի հմտություններին, որոնք ուղղակիորեն կոչված են հենց ոստիկանի նեղ ոլորտային իմացության ձևավորմանը:

Այցի ժամանակ պարզվեց, որ Կրթահամալիրի կրթական ծրագրերի բովանդակությունը միշտ էլ եղել է ՀՀ Ոստիկանության ուշադրության կենտրոնում և արտացոլել է վերջինիս պահանջները՝ որպես հիմնական պատվիրատու: Արդյունքում առարկաների և դրանցում թեմաների վերանայումները կրել են պարբերական և հիմնավորված բնույթ:

Դիտարկումների ժամանակ պարզվեց, որ Կրթահամալիրի ակադեմիայի և քոլեջի կրթական ծրագրերն ըստ էության միայն բարդության աստիճանով են տարբերվում և առարկաների ժամաքանակներով, նաև ոչ մասնագիտական որոշ առարկաներ են ավելացված բակալավրիատում: Այդ ծրագրերի միջև էական բովանդակային տարբերություն չեն տեսնում նաև ուսանողները: Նույն դասախոսական կազմը դասավանդում է և՛ ակադեմիայում, և՛ քոլեջում: Հանդիպումներին մասնակցած դասախոսները նշեցին, որ «ըստ էության ակադեմիայի ուսանողները նույն առարկաների շրջանակներում ավելի խորը գիտելիքներ են ստանում և ավելի բարդ խնդիրներ լուծում»:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացման գործընթացը դիտարկվում է Կրթահամալիրի ռազմավարական խնդրի շրջանակներում՝ կարևորելով ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման ինովացիոն նախաձեռնությունները, «ոչ ստանդարտ» արդյունավետ մեթոդները:

ՄԿԾ-ների մասնագրերը պարունակում են վերջնարդյունքների և դասավանդման, ուսումնառության մեթոդների համապատասխանության մատրիցներ: Մատրիցներում յուրաքանչյուր բաժնում (գիտելիք, հմտություն, կարողություն) մեթոդների ցանկը բացարձակապես նույնական է: Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականությունը և հիմնավորումները ձևակերպված չեն: Մեթոդներն ընտրում են դասախոսները՝ ելնելով առարկայի յուրահատկություններից: ԻՎ-ում նշվում է, որ ինտերակտիվ մեթոդների կողքին Կրթահամալիրում գերակշռում է հատկապես ավանդական դասախոսության ձևաչափը: Կրթահամալիրն աշխատանքներ է տանում դասավանդման մեթոդներում SS կիրառումն ընդլայնելու ուղղությամբ՝ այն համարելով ուսանողակենտրոն ուսուցման նախադրյալ: Դիտարկումների արդյունքում պարզվեց, որ վերջին տարիներին գրեթե բոլոր լսարանները համալրվել են պրոյեկտորներով: Կրթահամալիրի ՈՒՄ և Ջ վարչությունը, ՊԴ կազմին մեթոդական օժանդակություն ցուցաբերելու իր գործառույթի շրջանակներում 2018թ. մշակել է մեթոդական ձեռնարկ՝ ուսումնական պարապմունքների կազմակերպման և անցկացման համար:

Հանդիպումների ժամանակ բոլոր շահակիցները խիստ կարևորեցին պրակտիկան: Առկա ուսուցմամբ ուսանողների կարծիքով պրակտիկան ավելացման կարիք ունի, քանի որ մասնագիտական հմտություններ ձեռք են բերում հենց այնտեղ: Դրա հետ մեկտեղ փաստեցին, որ մեծամասամբ պրակտիկայի ժամանակ ուսանողներին կցված ոստիկանության ծառայողները զբաղվածության պատճառով չեն կարողանում պատշաճ ժամանակ հատկացնել և պրակտիկ փորձը փոխանցել: Մյուս կողմից, փաստաթղթավարման

հմտության պակասը զգացվում է ինչպես պրակտիկայի, այնպես էլ ավարտելուց հետո ծառայության անցնելիս: Հատկանշական է, որ հեռակա ուսուցման դեպքում պրակտիկա նախատեսված չէ՝ բացառությամբ ոստիկանության կրտսեր պաշտոն զբաղեցնող ուսանողների: Այն հիմնավորմամբ, որ հեռակայի ուսանողները արդեն իսկ ոստիկանության ծառայողներ են և պրակտիկայի կարիք չունեն:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը գնահատվում է դասալսումների միջոցով, որոնք իրականացնում են ղեկավար կազմը և ամբիոնի պետերը: Արդյունքները լրացվում են ըստ հաստատված ձևաչափի մատյաններում: Բացի այդ, մեթոդների արդյունավետության գնահատմանն անդրադառնում են նաև անցկացված հարցումներում: Դրանց արդյունքում վերհանված խնդիրների հիման վրա մեթոդական բարելավումներ չեն իրականացվել: Այցի ժամանակ պարզ դարձավ, որ ուսանողներն ընդհանուր առմամբ գոհ են ՊԴ կազմի կիրառած մեթոդներից:

3.3 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Կրթահամալիրում սովորողների գնահատումը կազմակերպվում է «Կրթահամալիրի սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման կանոնակարգ»-ի և ըստ կրթական ծրագրերի մշակված ուսումնական գործընթացի կազմակերպման կարգերով: Կիրառվում է 20 միավորանոց սանդղակ (անցողիկը՝ 8 միավորն է), որը ներառում է՝ 2 ընթացիկ /4 միավոր/ և եզրափակիչ /12 միավոր/ քննություն: Հատկանշական է, որ ֆակուլտետներ կատարած այցի ընթացքում պարզվեց, որ ընթացիկ քննություններում 4-ական միավոր ստանալու և եզրափակիչին մասնակցելու և 0 միավոր ստանալու դեպքում ուսանողը ստանում է 4+4+0=8 բավարար գնահատական: Առարկայական նկարագրում ներկայացված են ոչ միայն ուսումնառության արդյունքներին համապատասխան գնահատման մեթոդները, այլև հարցման ձևերը և կատարման չափանիշները: ՄԿԾ-ներում կատարված է գնահատման ձևերի և վերջնարդյունքների քարտեզագրում:

Փորձագիտական խմբին ներկայացված քննական տոմսերի օրինակները հիմնականում ներառում են տեսական հարցադրումներ: Կարողության կամ հմտության գնահատման համար տոմսերում ներառված է հիմնականում մեկ հարց: Այնինչ ոստիկանական ուղղվածության բարձրագույն կրթության, առավել ևս նախնական և միջին մասնագիտական կրթության ծրագրերի վերջնարդյունքներում գերակշռում են մասնագիտական կարողություններն ու հմտությունները:

Հաստատված են կուրսային աշխատանքների պատրաստման ու պաշտպանության, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ընտրության, պատրաստման և պաշտպանության կարգեր: Կրթահամալիրում ավարտական աշխատանքներ վերջին 2 տարում չեն իրականացվել: Բակալավրի որակավորումը շնորհվում է ավարտական քննությունների արդյունքում, չնայած առանձին դեպքերում ուսանողներին ավարտական գրելու հնարավորություն կարող է տրվել: Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված մագիստրոսական թեզերն աչքի են ընկնում ինչպես քննարկված նյութի համընդգրկուն բնույթով, այնպես էլ ուսումնասիրված իրավական ակտերի և գրականության ծավալով: Ընտրված թեմաները մեծամասամբ համապատասխանում են դրանց բովանդակությանը: Աշխատանքներում, որպես կանոն, ուսումնասիրված են ՀՀ Վճռաբեկ և Սահմանադրական

դատարանների անհրաժեշտ վերաբերելի որոշումները: Այնուհանդերձ, նկատվում է ռուսալեզու աղբյուրներից զատ օտարալեզու այլ աղբյուրների օգտագործման պակաս: Աշխատանքներում թույլ է ուսանողների հետազոտության ինքնուրույն վերլուծական բաղադրիչը:

2018թ. հաստատվել է Կրթահամալիրի սովորողների գիտելիքների գնահատման ընթացակարգը և արդյունքների բողոքարկման կարգը: Փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ բողոքարկման դեպքերը համարյա բացակայում են: Քննաշրջանի ընթացքում ակադեմիական ազնվության պահպանման և քննական գործընթացի պատշաճ կազմակերպման համար Կրթահամալիրի պետի 2017թ. հրամանով քննաշրջանների ընթացքում ներգրավվել են ընթերականեր, որոնք քննություններից հետո զեկուցագրեր են ներկայացրել պետին: Ներկայումս այդ մեխանիզմը չի գործում:

Հաստատված է «Ցիտման նորմերի պահպանման և գրագողությանը հակազդման մասին կանոնակարգ»-ը: Կարգում նշված չեն գրագողության բացահայտման մեխանիզմները՝ հստակ գործիքակազմ, համակարգչային ծրագրեր կամ այլ մեթոդներ:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը:

Կրթահամալիրը փորձում է ապահովել իրականացվող ծրագրերի համահունչություն նմանատիպ այլ ճանաչված ՄԿԾ-ների հետ՝ դրա համար հաստատելով «Կրթահամալիրի բենչմարքինգի քաղաքականությունը և ընթացակարգերը» փաստաթուղթը: Սակայն այդ փաստաթղթում նկարագրված հստակ ընթացակարգեր չկան: ՄՈՒՀ-ը դեռևս չունի ծրագրերի համադրման հիման վրա ՊԴ կազմի և ուսանողների փոխանակումն ու շարժունությունն ապահովող գործող համաձայնագրեր: Ուսանողների և դասախոսների շարժունության փաստեր առկա չեն:

Ըստ ինքնավերլուծության՝ ՄԿԾ-ների մշակման ընթացքում վերլուծվել է ՌԴ ՆԳՆ Օմսկի ակադեմիայի իրավագիտության բակալավրի կրթական ծրագիրը և փորձ է արվել հնարավորինս մոտեցնել կրթական ծրագրերի վերջնարդյունքներն ու իրականացման չափանիշները՝ հետագայում երկու հաստատությունների միջև ուսանողների փոխանակումներ իրականացնելու ակնկալիքով: Նշված վերլուծության փաստաթղթային հիմք փորձագիտական խմբին չի տրամադրվել: ՄՈՒՀ-ի գործընկերներից ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել բենչմարքինգ սկսելու վերաբերյալ, սակայն համալսարան կատարած այցից հետո էլ այն չի իրականացվել: Դեռևս չկան եվրոպական կրթական տարածքի համանման ծրագրերի հետ Կրթահամալիրի կողմից իրականացված համեմատական վերլուծություններ:

Կրթահամալիրը ԻՎ-ում նշում է, որ «սովորողների և դասախոսների շարժունության ընդլայնմանը և միջազգայնացմանը խոչընդոտում են ֆինանսական միջոցների սղությունը և օտար լեզուների ոչ բավարար իմացությունը»: Սակայն այս խնդիրների լուծման համար Կրթահամալիրը գործուն քայլեր դեռ չի ձեռնարկել:

3.5 ՄՈՒՀ-ը որդեգրել է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ՄԿԾ-երի վերանայման գործընթացը կազմակերպելու և համակարգելու համար 2019թ. հաստատվել է «Կրթահամալիրում կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգը»: Կարգով նախատեսվում է կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգն իրականացնել՝ երկամյա պարբերականությամբ, իսկ կրթական ծրագրերի պարբերական վերանայումը՝ հնգամյա պարբերականությամբ: Կարգի համաձայն կատարված մշտադիտարկում դեռ չի իրականացվել, քանի որ ՄԿԾ-ները ընթացիկ տարում են հաստատվել: Ուստիկանական միջին մասնագիտական կրթական ծրագիրը արդեն վերանայվել է՝ հիմք ընդունելով նոր հաստատված պետական կրթական չափորոշիչը:

ԻՎ-ում նշվում է, որ ՄԿԾ-ների մշտադիտարկման գործընթացում թույլ է արտաքին շահակիցների մասնակցության մոտիվացիան: Ներքին շահակիցների կարիքները վերհանելու նպատակով սովորողների և ՊԴ կազմի շրջանում կատարվել են հարցումներ: Արդյունքների հիման վրա վերանայումներ դեռ չկան: ՄԿԾ-ների մշտադիտարկման, բարելավումների համար փորձագիտական կարծիքների հիմքեր նույնպես չեն ներկայացվել՝ չնայած կարգով նախատեսվում էր նման գնահատում: Կրթական ծրագրերի վերաբերյալ ընթացիկ արդյունքները պարբերաբար քննարկվում են գիտխորհրդում և ամբիոնների նիստերում: Առարկայական ծրագրերը վերանայվում են ըստ բացահայտված անհրաժեշտության կամ ՀՀ Ուստիկանության պահանջների:

Կրթահամալիրը չի իրականացրել վճարովի համակարգում սովորող ուսանողների հետագա զբաղվածության վերաբերյալ ուսումնասիրություններ և վերլուծություն՝ միտված ՄԿԾ-ի բարելավմանը:

Դատողություններ: ՄԿԾ-ների վերջնարդյունքահեն մշակումն իրականացվել է կանոնակարգված՝ առաջնորդվելով կրթական ծրագրերի մշակման կարգով և մասնագրի հաստատված կառուցվածքով: ՄԿԾ-ների մշակման հիմքում աշխատաշուկայի վերլուծություններ չկան, սակայն ՄԿԾ-ների և առարկայական ծրագրերի անմիջական համաձայնեցումը ՀՀ Ուստիկանության հետ նպաստել է վերջնարդյունքների սահմանմանը (չնայած դրանք կարիք ունեն չափելիության հստակեցման) և ծրագրի կառուցվածքի կազմմանը: Կրեդիտային համակարգի վերաբերյալ անձնակազմի ունեցած թույլ պատկերացումները ռիսկի տակ են դնում դրա ամբողջական ներդրումը կրթական գործընթացում և ուսանողակենտրոն ուսուցման կազմակերպումը:

Փորձագիտական խումբը հատկապես խնդրահարույց է համարում այն, որ ակադեմիայի և քոլեջի կրթական ծրագրերի բովանդակային նմանությունները վտանգում են ՈԱԾ-ի տարբեր մակարդակներին համապատասխան որակավորումների արժանահավատ շնորհումը:

Դրական է դասավանդման ավանդական մեթոդների հետ մեկտեղ ուսանողակենտրոն ուսուցմանն ուղղված մեթոդների ու SS կիրառումը, և ուսանողների գոհ լինելը մեթոդներից: Փորձագիտական խումբը գտնում է, որ պրակտիկայի անցկացման և գնահատման գործընթացները կանոնակարգման և հստակեցման կարիք ունեն: Մասնավորապես, պրակտիկայի բացակայությունը ակադեմիայի հեռակա բաժնի ուսուցման մեջ չի կարող լրացվել ուսանողների զուգահեռ ծառայությամբ, քանի որ պրակտիկան հստակ վերջնարդյունքներ ձևավորող հաստատված ծրագրերով պետք է իրականացվի, իսկ կոնկրետ ծառայության վայրում ուսանողները միայն իրենց նեղ ոլորտի պրակտիկային են

ծանոթ: Առավել ևս, որ ոլորտի պրակտիկ մասնագետների պատրաստման հարցում գործնական պարապմունքների և պրակտիկայի կազմակերպման արդյունավետության բարձրացման կարիքի մասին են նշում շահակիցները:

Հանդիպումների և ամբիոնային այցերի ընթացքում պարզվեց, որ Կրթահամալիրում գնահատման համակարգը կարիք ունի որոշակի հստակեցման և հիմնավորման, առավել ևս՝ հաշվի առնելով ավարտելուց հետո անմիջապես ոստիկանության ծառայության անցնող ուսանողների կարողությունների գնահատման օբյեկտիվությունը: Գնահատման մեթոդների և վերջնարդյունքների համապատասխանության հիմնավորման բացակայությունը մասամբ նաև հետևանք է վերջնարդյունքների ոչ չափելի ձևակերպման: Հաշվի առնելով նաև պրակտիկայի գնահատման հստակեցման կարիքը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ գնահատման գործող համակարգը չի երաշխավորում կարողությունների և հմտությունների պատշաճ գնահատումը: Ցիտման նորմերի և գրագողության հակազդմանն ուղղված նոր մեխանիզմների ստեղծումը կարող է նպաստել ակադեմիական ազնվության ապահովմանը:

Մագիստրոսական թեզերի համար ընտրված թեմաները, դրանցում դատարանների որոշումների ուսումնասիրությունն էականորեն ավելացնում է դրանց գիտագործնական արժեքը: Սակայն հիմնականում ռուսալեզու գրականության օգտագործումը սահմանափակում է թեզերի ընդգրկվածությունը միջազգային հետազոտական հարթակում: Միաժամանակ, պետք է ներդրվեն գործիքներ աշխատանքներում ինքնուրույն վերլուծական բաղադրիչի զարգացումն ապահովելու նպատակով:

Չնայած բենչմարքինգի հաստատված քաղաքականության՝ Կրթահամալիրը նոր է սկսում քայլեր ձեռնարկել ՄԿԾ-ների համեմատական վերլուծությունների ուղղությամբ: Որևէ կրթական ծրագրի հետ ամբողջական համեմատական վերլուծության բացակայությունը թույլ չի տալիս Կրթահամալիրին համահունչություն ստեղծել այլ ծրագրերի հետ և շարժունության հնարավորություններ ուսանողների համար: Արդյունքում Կրթահամալիրի ՄԿԾ-ները մեկուսացված են իրականացվում՝ չհետևելով ոլորտի առաջավոր կրթական ծրագրերի զարգացումներին: Կրթահամալիրը փորձում է արդիականացնել իր ՄԿԾ-ները՝ անձնակազմի գործուղումների միջոցով ծանոթանալով այլ երկրների փորձին, սակայն դրանց ազդեցությունը ՄԿԾ-ների բարելավման վրա թույլ է և ոչ համակարգված:

ՄԿԾ-ների մշտադիտարկման և վերանայման գործում փորձագիտական խումբը դրական է գնահատում ՀՀ Ոստիկանության ցուցաբերած անմիջական ազդեցությունն ու աջակցությունը: Մյուս կողմից, Կրթահամալիրի ներքին մշտադիտարկումն ըստ նոր հաստատված կարգի կարող է նպաստել ներքին խնդիրների բացահայտմանն ու ՄԿԾ-ների բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով ակնկալվող ուսումնառության արդյունքներով ձևակերպված ՄԿԾ-ների համապատասխանությունը ՈԱԾ-ին, Կրթահամալիրի առաքելությանն ու ՀՀ Ոստիկանության պահանջներին, ուսանողակենտրոն ուսուցմանն ուղղված դասավանդման և ուսումնառության մեթոդների կիրառումը, սովորողների գնահատման և որակավորումների շնորհման ձևավորված համակարգի առկայությունը, ակադեմիական ազնվությանն ուղղված մեխանիզմների ստեղծումը, ՄԿԾ-ների բարելավմանը նպաստող ՀՀ Ոստիկանության ցուցաբերած անմիջական ազդեցությունն ու աջակցությունը՝ կարելի է եզրակացնել, որ Կրթահամալիրի ՄԿԾ-ներն ընդհանուր առմամբ բավարարում են չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

Դիմորդների հավաքագրման համար Կրթահամալիրը կիրառում է տեղեկատվության տարածման մի շարք մեխանիզմներ. տպագիր մամուլ, հեռուստատեսություն («Հերթապահ մաս» հաղորդաշար), ինտերնետային կայք (edupolice.am), ֆեյսբուքյան էջ, ինչպես նաև իրականացվում է իրազեկման և մասնագիտական կողմնորոշման այցեր դպրոցներ: Այցերին մասնակցել են նաև ՈՒԽ անդամները: Հաստատության կողմից դպրոցներ կատարված այցերի վերաբերյալ փորձագիտական խմբին տրամադրված հաշվետվությունները ցույց տվեցին, որ այցերը հիմնականում կատարվել են 2016 և 2018թթ., առավել ակտիվ՝ 2018-ին: Դիմորդների հավաքագրման մեխանիզմների արդյունավետության վերլուծություն չի իրականացվել:

Դիմորդներին ներգրավելու նպատակով Կրթահամալիրը կիրառում է զեղչերի համակարգ վճարովիների համար՝ օրենքով նախատեսված դեպքերում, և անվճար սովորողների համար ՀՀ նվազագույն աշխատավարձի չափով կրթաթոշակ: Առանձին դեպքերում՝ սոցիալական խմբերում ներգրավված և բարձր ՄՈԳ-ով ուսանողների համար հնարավոր է մինչև 90% զեղչ՝ ՄՈՒՀ-ի արտաբյուջետային միջոցների հաշվին: Կրթահամալիրը բացարձակ գերազանցիկ ուսանողներին պետի հրամանով տրամադրում է նաև անվանական կրթաթոշակ՝ հաստատված կարգի համաձայն:

Կրթահամալիրը դիմորդների ընդունելություն իրականացնում է ըստ գիտխորհրդի կողմից 2015թ. հաստատված «Կրթահամալիրում դիմորդների ընտրության և ընդունելության» կարգի՝ ձևավորված մանդատային հանձնաժողովով: Կրթահամալիրում պետպատվերի շրջանակներում դիմորդների ընտրության կանոնները և ՀՀ Ոստիկանության ծառայողներին ուսման թույլտվություն տալու գործընթացը սահմանվում են ՀՀ Ոստիկանության պետի հրամանով հաստատված կարգերով:

Բակալավրատի ընդունելությունը չի կազմակերպվում ՀՀ բուհերի միասնական ընդունելության քննությունների ձևաչափով և ծրագրերով. դրանք անցկացվում են թեստերի միջոցով, հատուկ կահավորված համակարգչային լսարանում, որտեղ դիմորդները համակարգչային տեխնիկայի օգնությամբ հանձնում են համապատասխան քննությունը:

Պետպատվերով դիմորդները լրացնում են նաև անկախ կազմակերպության կողմից մշակված հատուկ թեստեր, որոնք ստուգում են դիմորդի բարոյահոգեբանական վիճակը: ՄՈՒՀ-ը դիմորդների ընդունելության գործընթացում դիտորդի կարգավիճակով ներգրավում է հասարակական կազմակերպությունների, որոնք կարծիք են ներկայացնում քննությունների անցկացման վերաբերյալ: Այցի արդյունքում պարզվեց, որ ՀԿ-ների ներգրավումը չի

իրականացվում հրապարակային կերպով, նախապես ՀԿ-ների համար հայտարարություն չի տրվում, այլ հրավիրվում են կոնկրետ ՀԿ-ներ:

4.2 ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Կրթահամալիրն իր ուսանողների կարիքների վերհանումն իրականացնում է ՊԴ և ղեկավար անձնակազմի կողմից անցկացվող պարբերական հանդիպումների, հարցումների և գիտխորհրդում ընդգրկված ուսանողների միջոցով: Փորձագիտական խմբի հետ հանդիպած ուսանողները նշեցին, որ հարցաթերթիկներում և հանդիպումների ժամանակ իրենց կողմից բարձրաձայնված որոշ խնդիրներ լուծվել են:

Կրթահամալիրի պետի հրամանի համաձայն յուրաքանչյուր կուրսի կցված է ծառայության բաժնի սպա՝ որպես կուրսի պետ: Կուրսի պետի գործառույթները նկարագրող փաստաթղթերի ուսումնասիրության և նրանց հետ հանդիպումների արդյունքում պարզվեց, որ կուրսի պետերը զբաղվում են ոչ թե ուսումնական, այլ ծառայության հարցերով: Ըստ այդմ, վերհանված կարիքները կրթական բնույթի չեն:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու ուղղությամբ Կրթահամալիրի քաղաքականությունն ամրագրված է Կրթահամալիրի պետի 2019թ. հրամանով հաստատված "Լրացուցիչ խորհրդատվական գործունեության իրականացման կարգով": Այն ներառում է ուսումնական և ուսումնաօժանդակ ստորաբաժանումների, գիտական բաժնի, Կրթահամալիրի ղեկավարության և ՈՒԽ-ի կողմից իրականացվող լրացուցիչ խորհրդատվական գործունեություն:

Ռեսուրսների դիտարկման այցերի արդյունքում պարզվեց, որ ամբիոնները, բացի նախաքննական խորհրդատվություններից, չունեն այլ խորհրդատվական գործունեության իրականացման ֆիքսված ժամանակացույց: Հանդիպման մասնակից ուսանողները փաստեցին, որ դասախոսները հասանելի են խորհրդատվություն տրամադրելու համար, որը նախապես համաձայնեցվում է նրանց հետ:

Ըստ Կրթահամալիրի պետի 2017թ. հրամանի՝ լրացուցիչ պարապմունքներն ուղղված են սեմինար /գործնական/ պարապմունքներից անբավարար ստացած սովորողներին մեթոդական և գործնական օգնություն ցուցաբերելուն, ինչի համար հրամանով կցվում են դասախոսներ: Իրականացվել են նաև լեզվի լրացուցիչ դասընթացներ: Մասնավորապես, ուսանողների հավաստմամբ, Հայոց լեզու առարկայի շրջանակներում կազմակերպված լրացուցիչ դասընթացները արդյունավետ էին, իսկ օտար լեզվի խմբակներ նրանք ավելի քիչ են հաճախել:

Առարկաների շրջանակներում տրված խորհրդատվությունները արձանագրվում են ամբիոնների համապատասխան կնքված մատյաններում: Սակայն ամբիոններ կատարած այցերի արդյունքում պարզվեց, որ նշված մատյանների լրացումը որոշ դեպքում սկսվել է միայն վերջերս, օրինակ՝ փորձագիտական խմբին ներկայացված օրինակելի ամբիոններից մեկի խորհրդատվությունների մատյանը բացվել է 2016թ., սակայն խորհրդատվությունները արձանագրված են 2019թ.-ից միայն:

Չի իրականացվել վերլուծություն, թե որքանով են կազմակերպվող խորհրդատվությունները և լրացուցիչ պարապմունքները նպաստում ուսանողների արդյունավետ ուսումնառությանը:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց՝ ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով:

Կրթահամալիրը չունի սովորողների՝ վարչական կազմին դիմելու կանոնակարգ և ընթացակարգեր, սակայն, ինչպես նշված է ԻՎ-ում, նախատեսում է մշակել: Չկա նաև վարչակազմին դիմելու հաստատված ժամանակացույց: Ինչպես պարզվեց հանդիպումների ընթացքում՝ օժանդակության և ուղղորդման նպատակով ուսանողները դիմում են կուրսի պետերին, ֆակուլտետների և ամբիոնների պետերին, կրթահամալիրի ղեկավար կազմին անմիջական հանդիպումների ընթացքում, առանց ֆիքսված ժամանակացույցի: Փորձագիտական խմբի հետ հանդիպած ուսանողները բավարարված էին վարչական աշխատակազմի օժանդակությունից՝ շեշտադրելով Կրթահամալիրում ստեղծված անմիջական մթնոլորտը:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Սովորողների կարիերային նպաստող հիմնական ծառայությունները Կրթահամալիրում իրականացնում է կադրերի և ԱՀՏԱ բաժինը անվճար համակարգում սովորողների համար՝ վարելով նրանց փաստաթղթերը: Անվճար ուսուցման շրջանավարտների կարիերայի հարցը կարգավորվում է նրանց հետ կնքվող պայմանագրով, ըստ որի ավարտելուց հետո «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի համաձայն շրջանավարտները պարտադիր կերպով նշանակվում են ծառայության ոստիկանությունում: Հեռակա սովորող ուսանողները արդեն իսկ ոստիկանության ծառայողներ են, ովքեր համատեղում են ծառայությունը ուսման հետ:

Վճարովի համակարգի շրջանավարտները նույն օրենքի համաձայն, առաջնահերթություն ունեն ոստիկանությունում պաշտոնի նշանակվելու հարցում՝ այլ բուհերի շրջանավարտների համեմատությամբ: Վճարովի ուսուցման լավագույն շրջանավարտներին ընտրելու նպատակով նրանց ամփոփիչ պետական ատեստավորմանը մասնակցում է ոստիկանության կենտրոնական ապարատի ներկայացուցիչ, որի առաջարկությունների հիման վրա լավագույն շրջանավարտները կարող են նշանակվել ոստիկանությունում ծառայության: Ըստ ներկայացված տվյալների՝ 2014թ. վճարովի համակարգում ընդունվել է 54 ուսանող (20 աղջիկ), որից ոստիկանություն ծառայության է անցել 8 ուսանող (1 աղջիկ): Վճարովի ուսուցման մյուս շրջանավարտների վերաբերյալ Կրթահամալիրը տվյալների բազա չունի և չի օժանդակում նրանց աշխատանքի տեղավորմանը՝ չդիտարկելով դա որպես խնդիր:

Հանդիպումների ժամանակ պետպատվերով սովորողները նշեցին, որ հիմնականում կարիերայի նախադրյալներից ելնելով են ընտրել հենց այս ՄՈՒՀ-ը:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Կրթահամալիրն իր ՌՊ-ում կարևորում է կրթական ծրագրերում հետազոտական գործունեության իրականացման, գնահատման և արդյունքների վավերացման համակարգերի բարելավումը: Սակայն ըստ ԻՎ-ում ներկայացված աղյուսակների՝ 2012-

2018թթ. չեն եղել ՄՈՒՀ-ի համար գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողներ, ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրեր չեն եղել, ուսանողների հեղինակությամբ կամ համահեղինակությամբ չեն հրատարակվել հոդվածներ: Այցի ժամանակ պարզվեց, որ 2019թ. 2 ուսանող իրականացնում են հետազոտական աշխատանք ղեկավար-դասախոսների հետ համատեղ, որը տպագրվելու է առաջիկայում:

Որպես սովորողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելու հիմնական մեխանիզմ, Կրթահամալիրը նշում է ուսանողական գիտական խմբակների գործունեությունը: Կրթահամալիրում գործում են թվով 5 գիտական խմբակներ, որոնցից յուրաքանչյուրին անդամակցում է նվազագույնը 10 ուսանող: Խմբակներին անդամակցելը կամավոր է՝ ելնելով ուսանողների մասնագիտական հետաքրքրությունների շրջանակից: Ուսանողները նշեցին, որ գիտական խմբակները ավելի մատչելի, ըմբռնելի և հետաքրքիր են դարձնում առարկայի շրջանակներում մատուցվող թեմաները: Օրինակ, քրեական իրավունքի գիտական խմբակի շրջանակներում դասից դուրս ավելի բարդ խնդիրներ են ուսումնասիրում, քաղաքացիական իրավունքի խմբակի շրջանակներում ուսանողները ուսումնասիրում են օրենսդրական բացերը և իրավական բացթողումները, խորացնում են իրենց գործնական հմտությունները՝ կատարում են կեղծ դրամների և անձնագրերի ուսումնասիրում: Այսինքն, խմբակների աշխատանքների համար գիտահետազոտական կամ գիտական նորույթի բաղադրիչի պահանջ չի դրված:

Գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավումը խթանելու մեխանիզմներ դեռևս չեն ներդրվել:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

Կրթահամալիրի պետի 2019թ. հրամանով հաստատվել է Կրթահամալիրի սովորողների իրավունքներն ու պարտականությունները ամրագրող ուղեցույց, որը ներառում է գործող պետական և Կրթահամալիրի իրավական ակտերից քաղվածքներ: Բացի այդ այցի ժամանակ արդեն տպագրվել էր սովորողի ձեռնարկը:

Ուսանողների իրավունքների պաշտպանության հարցերով հիմնականում զբաղվում է ուսանողական խորհուրդը (ՈՒԽ)՝ ընտրովի ներկայացուցչական մարմինը, որում ընդգրկված են ուսանողների մոտ 4,5%-ը: Այն արդեն 5 տարի գործում է: ՈՒԽ-ին կցված է Կրթահամալիրից սպա, որն, ըստ ուսանողների, նրանց աջակցում, խորհրդատվություն է տրամադրում, բայց չունի քվեարկության ձայնի իրավունք: Ուսանողների կողմից բարձրաձայնված խնդիրները ՈՒԽ-ն քննարկում է Կրթահամալիրի պետի հետ հանդիպումների ժամանակ, որոնք կրում են պարբերական բնույթ: Քոլեջի, բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների խմբերի հետ հանդիպումների ժամանակ պարզ դարձավ, որ նրանք գոհ են ՈՒԽ-ի աշխատանքներից: Ուսանողներն իրենց իրավունքների պաշտպանության հարցերով կարող են դիմել նաև կուրսի պետին:

ԻՎ-ում նշվում է, որ սովորողների բողոքների և դրանց հիման վրա վերհանված խնդիրների լուծման տվյալները վերլուծության չեն ենթարկվել:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Կրթահամալիրում դեռևս չեն գործում ուսանողներին մատուցվող կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման հստակ մշակված մեխանիզմներ: Կրթական ծառայությունների որոշ բաղադրիչների գնահատումն իրականացվում է ուսանողական հարցումների միջոցով, սակայն որակի ապահովման և արդյունքների բարելավման մեխանիզմներ ներդրված չեն: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ հարցումներին ուսանողների համընդհանուր մասնակցություն չի եղել, իսկ արդյունքները և դրանց վերլուծությունները նրանց շրջանում չեն հրապարակվել:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում Կրթահամալիրի կողմից իրականացվող դիմորդների հավաքագրման տարբեր մեխանիզմների կիրառումը, ընդունելության կազմակերպումը հատուկ մանդատային հանձնաժողովի ձևավորմամբ և հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ: Չնայած դրան, փորձագիտական խումբը ընդունելության քննությունները ներբուհական եղանակով կազմակերպման պայմաններում թափանցիկության ավելացման կարիք է տեսնում: Միևնույն ժամանակ, փորձագիտական խմբի կարծիքով վտանգ կարող է լինել, որ իջեցվում է կրթական ծրագրերի ընդունելության ներքևի շեմը, և, ցածր միավորներով ընդունվածների նկատմամբ որոշակի քաղաքականության բացակայության դեպքում նրանք չեն հասցնի ձեռք բերել որակավորման համար անհրաժեշտ վերջնարդյունքները:

Հատկանշական է Կրթահամալիրի ՊԴ և ղեկավար անձնակազմի անմիջական կապը ուսանողների հետ, նրանց հուզող հարցերն ու խնդիրները լսելու և լուծում տալու պատրաստակամությունը: Կրթահամալիրում առկա ՈւԽ-ն և կուրսի պետերը իրենց հերթին ևս նպաստում են ուսանողների կողմից բարձրաձայնված խնդիրների լուծմանը, ուսանողների իրավունքների պաշտպանությանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում Կրթահամալիրի կողմից ուսանողներին տրամադրվող խորհրդատվությունների և լրացուցիչ պարապմունքների պրակտիկան, որը հնարավորություն է տալիս նրանց վատ յուրացրած թեմաները, բացթողումները լրացնել հավելյալ պարապմունքների միջոցով: Միևնույն ժամանակ, նախորդ տարիների խորհրդատվությունների փաստաթղթավարման բացթողումները վկայում է մինչ այժմ դրանց ոչ պատշաճ իրականացման մասին:

Դրական գնահատելով վարչակազմին դիմելու համար ստեղծված անմիջական մթնոլորտը, այնուամենայնիվ, փորձագիտական խումբը անհրաժեշտ է համարում գործընթացի կանոնակարգումը և հաստատված ժամանակացույցերի առկայությունը, ինչը կմեծացնի վարչական անձնակազմի պատասխանատվությունը և կնպաստի սովորողների տարատեսակ հարցերով ընդունելու գործընթացի հստակեցմանը:

Կրթահամալիրի թերևս ամենաուժեղ կողմերից է պետպատվերով սովորողների կարիերային նպաստող ծառայության առկայությունը, որը թույլ է տալիս շրջանավարտների 100% զբաղվածություն ապահովել: Սակայն վճարովի համակարգի շրջանավարտների (բացի առաջադիմությամբ աչքի ընկնող մի քանի ընտրվածներից) վերաբերյալ տվյալների բազայի ստեղծման և հետագա կարիերային աջակցելու գործընթացների բացակայությունը բացասաբար է ազդում նրանց հետ կապի պահպանման և որակավորման շնորհման պատասխանատվության վրա:

Գիտահետազոտական աշխատանքներում ուսումնառողների ներգրավման ոլորտում ցուցանիշները մտահոգիչ պետք է լինեն ուսումնական հաստատության համար: Այս

նպատակով ստեղծված գիտական խմբակները դեռևս գիտահետազոտական գործունեությանը չեն առնչվում: Իսկ ԳՀ աշխատանքներում ուսանողների ներգրավումը խթանելու մեխանիզմների բացակայությունը հանգեցնում է նրանց մոտ մոտիվացիայի անկման:

Ուսանողների իրավունքների համար պատասխանատու մարմնի՝ ուսանողական խորհրդի գործունեությունը և վերջին տարում մշակված ուղեցույցները նպաստել են իրավական պաշտպանվածության մթնոլորտի ստեղծմանը ուսանողների մոտ: Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ ՈՒԽ-ի նիստերին մասնակցող սպայի ներկայությունը կարող է վատ անդրադառնալ ուսանողների անկաշկանդ քննարկումների և հարցեր բարձրացնելու վրա:

Ուսանողներին մատուցվող տարատեսակ ծառայությունների գնահատման համար ներկայումս կիրառվող հարցումները դեռևս բավարար արդյունավետ չեն: Դրանց հուսալիության գնահատման և ծառայությունների վրա արդյունքների ազդեցության բացակայությունը ռիսկային է դարձնում մեխանիզմի գործունակությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով դիմորդների հավաքագրման, ընտրության և ընդունելության համար գործող մեխանիզմների առկայությունը, սովորողների կրթական կարիքների վերհանման, տրամադրվող խորհրդատվության և լրացուցիչ պարապմունքների կազմակերպումը, վարչակազմին դիմելու և նրա հետ անմիջական կապի առկա հնարավորությունները, շրջանավարտների կարիերայի ապահովումը ոստիկանական ծառայությունում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Կրթահամալիրն ընդհանուր առմամբ տրամադրում է համապատասխան աջակցություն՝ ուսանողների համար ապահովելով արդյունավետ կրթական միջավայր:

Եզրակացություն: ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Կրթահամալիրն իր ՌԾ-ով ամրագրում է, որ ՊԴ և ՈՒՕ կազմի համալրումը պայմանավորված է Կրթահամալիրի առաքելության, ռազմավարական և կրթական ծրագրերի նպատակները պատշաճ իրականացնելու անհրաժեշտությամբ: Կրթահամալիրում ծառայության անցնելը, այլ ծառայության տեղափոխվելը, ծառայությունից ազատվելը կարգավորվում է «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով, աշխատանքային

օրենսդրությամբ, աշխատանքային պայմանագրերով և իրավական այլ ակտերով: Բացի ոստիկանության ծառայող հիմնական դասախոսներից, հրավիրվում են նաև պայմանագրային հիմունքներով քաղաքացիական անձինք: Դասավանդող կազմի մրցութային կարգով ընտրություն չի իրականացվում: Թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարություններ չեն տրվում, թեկնածուներին գտնում են անձնական կապերի միջոցով: Կրթահամալիրի պետի 2018թ. հրամանի համաձայն՝ պայմանագրային հիմունքներով դասավանդելու համար դասախոսի մասնագիտական կարողությունների և մանկավարժական հմտությունների վերաբերյալ ամբիոնի պետը տալիս է համապատասխան կարծիք: Կրթական ծրագրին անհրաժեշտ որակավորումներին համապատասխանությունը ստուգվում է ամբիոններում ըստ ներկայացված փաստաթղթերի, իսկ փաստաթղթավորումն իրականացվում է կադրերի և ԱՀՏԱ բաժնում: Ինչպես նշված է ԻՎ-ում՝ Կրթահամալիրում չեն գործում ՊԴ և ՈՒՕ կազմի ընտրության միասնական քաղաքականություն և ընթացակարգեր:

Կրթահամալիրի հիմնական ՊԴ կազմից 45% ունեն ոստիկանության տարբեր ստորաբաժանումներում ծառայողական փորձ: 2018թ.-ից ուսումնական գործընթացում ներգրավված են նաև ՀՀ Ոստիկանության տարբեր ստորաբաժանումների և իրավապահ համակարգի գործող ծառայողներ:

ՊԴ և ՈՒՕ կազմի ընտրության կիրառվող մոտեցումների արդյունավետությունը գնահատված չէ: Փորձագիտական այցի հանդիպումներին մասնակից սովորողները գոհ էին առկա դասախոսական կազմից:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

2015թ. Կրթահամալիրի պետի հրամանով հաստատվել է ՊԴ կազմին ներկայացվող ընդհանուր պահանջներն ըստ տարակարգերի (ուսումնական ասիստենտ, դասախոս, ավագ դասախոս, դոցենտ, պրոֆեսոր, ամբիոնի (կրթաճյուղի) և ֆակուլտետի պետեր, նրանց տեղակալներ): ՄԿԾ մասնագրերում առանձին բաժնով ներկայացված են ՊԴ կազմին վերաբերող պահանջները՝ մասնագիտական, անձնային, մանկավարժական, գիտահետազոտական, կազմակերպչական, հաղորդակցական որակների մասին: Սակայն ներկայացված պահանջները անմիջապես չեն բխում ՄԿԾ առանձնահատկություններից: ԻՎ-ում Կրթահամալիրի պնդմամբ՝ կրթական ծրագրերը սպասարկող դասախոսների մասնագիտական գիտելիքներին և կարողություններին ներկայացվող հստակ պահանջներ, հիմնված ծրագրի վերջնարդյունքների վրա, դեռ չկան՝ չնայած ՌՊ-ում նախատեսվում է այն մշակել: Մյուս կողմից նշվում է, որ ՄԿԾ-ների կարիքների հիման վրա ՊԴ կազմի ընտրության չափանիշներն ու չափորոշիչները առավել խորը հիմնավորման կարիք ունեն:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Կրթահամալիրն իր ՌԾ-ով նախատեսում է ներդնել դասախոսների գիտամանկավարժական գործունեության արդյունավետության գնահատման և վարկանիշավորման ցուցանիշների գործուն համակարգ և ճշգրիտ գնահատման ընթացակարգ: Փաստացի գնահատումն իրականացվում է անհատական (ամբիոնի պետի գնահատում՝ դասախոսի անհատական աշխատանքային պլանի կատարման արդյունքների

և դասալսումների հիման վրա) և կոլեկտիվ (Կրթահամալիրի ղեկավար կազմի կողմից իրականացվող հսկողական դասալսումներ և ակտերի կազմում) գնահատման եղանակներով: Ամբիոնների պետերի հաշվետվություններում, սակայն, չկա ՊԴ կազմի գնահատման արդյունքների վերլուծություն: Իսկ այցի ընթացքում ուսումնասիրված վերահսկողական ակտերում որևէ խնդիր դուրս չի բերված, չկան առաջարկություններ հետագա բարելավման համար: Ակտը նկարագրում է դասի անցկացման պրոցեսը և վերլուծական փաստաթուղթ կամ դրա հիմք չի հանդիսանում:

Կրթահամալիրում դասախոսական կազմի մասնագիտական կարողությունները և մանկավարժական հմտությունները գնահատելու համար ԿՈԱԲ-ի կողմից 2019թ. անցկացվել է «Դասախոսն ուսանողի աչքերով հարցում»: Հարցմանը մասնակցել են միայն 4-րդ և 5-րդ դասակի ուսանողները: Արդյունքները հիմնականում 100% են, ինչը խոսում է կամ հարցերի կազմման անարդյունավետության, կամ հարցման արդյունքների անարժանահավատության մասին:

Դասախոսական կազմի գնահատման գործող տարբեր մեխանիզմները փոխկապակցված չեն. արդյունքները խաչաձև վերլուծությունների չեն ենթարկվում: Արտաքին գնահատումներ նույնպես չեն իրականացվում: ՊԴ կազմը համապատասխանության ամբողջական գնահատում չի անցել ըստ ՄԿԾ-ում ներկայացված որակների: Գնահատման ստացված արդյունքները դիտարկվում են ՊԴ կազմի խրախուսման ժամանակ: Գնահատման մեխանիզմների արդյունավետությունը հաստատության կողմից վերլուծված չէ:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Կրթահամալիրի ՌԾ-ի խնդիրներից է. <<ներգրավել մասնագիտական բարձր կարողություններով օժտված ՊԴ կազմ՝ նրանց տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ և ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայր>>:

2018-2019 ուստարվա ընթացքում Կրթահամալիրի առավել փորձառու դասախոսների կողմից անց են կացվել մանկավարժական հմտությունների կատարելագործմանն ուղղված պարապմունքներ՝ հաստատված ժամանակացույցով: ՊԴ կազմը մասնակցել է միջազգային փորձագետների կողմից Կրթահամալիրում և այլ բուհերում կազմակերպվող վերապատրաստումների: Բացի այդ, դասախոսական կազմը մասնակցում է միջբուհական, հանրապետական և միջազգային գիտաժողովների ու սեմինարների: Ճանաչողական այցով, փորձի փոխանակման, գիտագործնական միջոցառումների մասնակցելու նպատակով ՊԴ կազմի համար կազմակերպվում են գործուղումներ ՌԴ և արտերկրի ոստիկանական ուսումնական հաստատություններ: Կրթահամալիրում օտար լեզվի խմբակներում լրացուցիչ դասընթացներ են կազմակերպվել, որոնց, ըստ ԻՎ-ի և հանդիպումների արդյունքների, դասախոսները մեծ ծանրաբեռնվածության պատճառով չեն մասնակցել:

Դասախոսների կատարելագործման կիրառվող մեխանիզմների արդյունավետությունը գնահատված չէ:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Կրթահամալիրում կրթական ծրագրերի կադրային կայունությունը ապահովելու համար կիրառում է 2015թ. գիտխորհրդում հաստատված «ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ՊԴ կազմի աշխատանքների նորմավորման և կազմակերպման կարգը»: Կարգի համաձայն՝ ՊԴ կազմի համար սահմանված ուսումնական ծանրաբեռնվածության ծավալը գերազանցելու դեպքում տրամադրվում է մեկանգամյա հավելավճար: Բացի այդ գիտական աստիճան ունեցող ծառայող դասախոսները ստանում են ամենամսյա հավելավճար:

Կրթահամալիրի ամբիոնի 2 պետ արտաբյուջետային միջոցների և ՊԴ կազմից 1 ծառայող ՀՀ Ոստիկանության միջոցների հաշվին ապահովվել են ծառայողական բնակարաններով՝ Կրթահամալիրի խորհրդի և ծառայողների բնակարանային խնդիրներն ուսումնասիրող հանձնաժողովի որոշումների համաձայն:

ՄԿԾ մասնագրերում նշվում է, որ ՊԴ կազմի 53.1%-ն ունի գիտական աստիճան և/կամ կոչում: Ըստ ներկայացված ցանկի՝ հիմնական ՊԴ կազմից 60 հոգուց միայն 7-ն ունեն գիտական աստիճան: Գիտական աստիճան ունեցողները հիմնականում պայմանագրային հիմունքներով հրավիրված դասախոսներն են՝ 41-ից գիտական աստիճան ունեն 25-ը:

ՄՈՒՀ-ի հաստիքացուցակը հիմնականում համալրված է, սակայն որոշ ամբիոնների պետերի և դասախոսների դասաժամերով ծանրաբեռնվածությունը բավականին շատ է: Պատճառն այն է, որ մի շարք առարկաների գծով միայն մեկ դասավանդող մասնագետ կա:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Կրթահամալիրի ՊԴ կազմի մասնագիտական առաջընթացի քաղաքականությունն ու ընթացակարգերը բխում են ոստիկանության գործող օրենսդրությունից: Գործում են «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված խրախուսման և ծառայողական առաջընթացի ձևերը: Բացի ոստիկանական կոչման բարձրացմանը ներկայացնելուց՝ խրախուսման նպատակով կարող է միջնորդություն ներկայացվել վերադաս մարմիններին՝ աշխատակցին մեդալով, պատվոգրով կամ շնորհակալագրով պարգևատրելու համար: Գիտական առաջընթացի ապահովման համար ՊԴ կազմի ուսուցումը ասպիրանտուրայում կազմակերպվում է անվճար հիմունքներով: 2019թ. դրությամբ կրթահամալիրն ունի 6 ասպիրանտ, որից 5-ը ՊԴ կազմի ներկայացուցիչ են, իսկ 1-ը՝ ուսումնաօժանդակ:

Չնայած Կրթահամալիրը չունի սկսնակ դասավանդողների մենթորության հաստատված քաղաքականություն և ընթացակարգեր՝ սակայն փորձի փոխանակման համար փորձառու դասախոսներն անցկացնում են մանկավարժական հմտությունների կատարելագործմանն ուղղված պարապմունքներ:

Հետազոտական առաջընթացին է ուղղված ՀՀ ԿԳՆ ԲՈԿ-ի կողմից ընդունելի պարբերականների շարքում ընդգրկված «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիրը, որտեղ դասախոսները տպագրվում են անվճար: Այլ հրատարակչություններում ՊԴ կազմի տպագրության ծախսերը ևս Կրթահամալիրն է հոգում:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Ըստ ներկայացված կազմի՝ առկա է անհրաժեշտ վարչական կազմ ենթակա ստորաբաժանումներով: Կրթահամալիրի վարչական և ՈՒՕ կազմի հաստիքացուցակի ձևավորումը, կադրերի ընտրությունը, պաշտոնների նշանակումը, առաջխաղացումը և ատեստավորումը կարգավորվում են ՀՀ Ոստիկանության պետի և Կրթահամալիրի պետի հրամաններով, Կրթահամալիրի կանոնադրությամբ: Ներկայումս Կրթահամալիրն ունի 28 վարչական և 59 ուսումնաօժանդակ աշխատող, որոնց համար հաստատված են գործառութային պարտականություններ:

Կրթահամալիրը դեռ չի վերլուծել, թէ որքանով են նպաստում վարչական և ՈՒՕ կազմը ՌԾ-ի նպատակների իրականացմանը: Այցի ժամանակ պարզ դարձավ, որ ռազմավարության իրականացման համար վարչակազմում գործառույթների հստակեցման և օպտիմալացման խնդիր կա: Մասնավորապես, ՊԴ կազմի կադրային քաղաքականության պատասխանատվությունը դրված չէ կադրերի և ԱՀՏԱ բաժնի վրա, միջազգայնացման պատասխանատու բաժինը հիմնականում զբաղված է գործուղումների և արարողակարգային միջոցառումների կազմակերպմամբ, պրակտիկայի կազմակերպման, վճարովի ուսուցմամբ շրջանավարտների բազա կազմող և հետագա կարիերային նպաստող պատասխանատու ստորաբաժանումներ չկան:

Դատողություններ: Կրթահամալիրը կարողացել է հավաքագրել իր կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ՊԴ և ՈՒՕ կազմ՝ բացի ոստիկանության ծառայող հիմնական դասախոսներից ներգրավելով նաև պայմանագրային հիմունքներով քաղաքացիական անձանց: Սակայն մրցութային կարգի և թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարությունների տարածման բացակայությունը խոչընդոտում է նոր կադրերի ներգրավման թափանցիկությանը, սահմանափակում է թեկնածուների շրջանակը և կարող է խանգարել որակյալ կադրերի ներհոսքին: Փորձագիտական խումբը բարձր է գնահատում ոստիկանության փորձառու ծառայողների ներգրավումը դասախոսական կազմում, ինչը հնարավորություն է տվել նրանց պրակտիկ գիտելիքներն ու փորձը փոխանցել ուսանողներին: Բացի այդ Կրթահամալիրի շրջանավարտների մեծ տոկոսը ՊԴ կազմում նպաստում է սովորողների առաջադիմությանը և երիտասարդ հեռանկարային կադրերով համալրելուն:

ՊԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները ՄԿԾ-ներում ընդհանրական են և ինչպես ՄՈՒՀ-ն է նշում՝ չեն բխում ՄԿԾ առանձնահատկություններից: Այդ բացը հնարավորություն չի տալիս ուսումնական հաստատությանը, ՄԿԾ պահանջներից ելնելով, վերլուծել առկա ՊԴ կազմի որակների բավարարումը և հիմնավոր երաշխավորել ՄԿԾ վերջնարդյունքների ձեռքբերումը:

ՊԴ կազմի անհատական և կոլեկտիվ գնահատման եղանակները ապահովում են որոշակի պատկեր, սակայն ոչ ըստ ՄԿԾ-ում պահանջվող որակների: Որպես այդպիսին, գնահատումների խորքային վերլուծություններ չկան, որոնք հնարավորություն կտային պարզել դասախոսական կազմի հիմնական ձեռքբերումները և թերացումների պատճառները: Կիրառվող հարցումները արժանահավատության գնահատում չեն անցել, ինչը կարող է ազդել գնահատականի օբյեկտիվության վրա:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Կրթահամալիրի ջանքերը ՄՈՒՀ-ի ներսում և արտերկրում ՊԴ կազմի վերապատրաստումների ու դասընթացների մասնակցություն ապահովելու ուղղությամբ: Սակայն հիմնված չլինելով ներքին և արտաքին գնահատումների վրա, վտանգվում է այդ վերապատրաստումների նպատակայնությունը և ծախսերի արդյունավետությունը:

Կրթահամալիրը կարողացել է ապահովել իր ՄԿԾ-ների ՊԴ կազմով ապահովման կայությունը՝ չնայած պայմանագրային համատեղողներից էական կախվածությանը: Սակայն ՊԴ կազմի ծանրաբեռնվածությունը և նեղ մասնագետների սակավությունը կարող են վտանգել կրթական գործընթացի բնականոն ընթացքը՝ նրանց փոխարինման անհրաժեշտության առաջացման դեպքում:

ՊԴ կազմի մասնագիտական առաջընթացը Կրթահամալիրը կարողանում է ապահովել պաշտոնային (ըստ այդմ նաև կոչման) առաջխաղացմամբ և կիրառվող խրախուսման քաղաքականությամբ: Բացի այդ, գիտահետազոտական առաջընթացի արդյունավետ մեխանիզմ է գիտական և գիտամեթոդական հոդվածների անվճար տպագրելու հնարավորությունը:

Կրթահամալիրում առկա վարչական և ՈՒՀ կազմը նպաստում են առաքելության և կրթական ծրագրերի նպատակների իրականացմանը, սակայն որոշ ուղղություններով զարգացման արդյունավետությունը բարձրացնելու համար փորձագիտական խումբը վարչական գործառույթների հստակեցումների անհրաժեշտություն է տեսնում :

Եզրահանգում: Հաշվի առնելով կրթական ծրագրերի նպատակներին համապատասխան ՊԴ և ՈՒՀ կազմով ապահովվածությունը, պրակտիկ ոլորտի հարուստ փորձ ունեցող մասնագետների անմիջական ներգրավումը կրթական գործընթացում, ՊԴ կազմի խրախուսման սահմանված մեխանիզմների, առաջընթացին ուղղված քաղաքականության և ընթացակարգերի առկայությունը, իր լավագույն շրջանավարտներով ՊԴ կազմի կայունության ապահովումը և խրախուսումը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Կրթահամալիրն ապահովված է իր առաքելության և ՄԿԾ համապատասխան անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող ՊԴ և ՈՒՀ կազմով:

Եզրակացություն: ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

2017-2021թթ. ՌՊ-ում որպես առանձին նպատակ Կրթահամալիրը սահմանել է. <<Զարգացնել Կրթահամալիրի գիտահետազոտական գործունեությունը, ձևավորել մրցունակ գիտական և նորարարական ներուժ, աստիճանաբար անցում կատարել

Կրթահամալիրի հետազոտական կարգավիճակին>>: Սակայն պետք է նշել, որ պլանավորած միջոցառումների գերակշիռ մասը դեռ պետք է իրականացվեն: Մինչ այդ 2016թ. Կրթահամալիրում իրականացվող գիտահետազոտական գործունեության թեմատիկ առաջնահերթություններ են հաստատվել՝ հրատարակությունների տեսակների, դրանց գրախոսմանը և տպագրության երաշխավորմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ ուղեցույցի համաձայն: Որպես ոլորտներ են առանձնացվել. ՀՀ Ոստիկանության միջազգային համագործակցություն, օպերատիվ-հետախուզական, հանցագործությունների և այլ իրավախախտումների կանխարգելման ուղղված գործունեություն, Ոստիկանության թույլատվության և լիցենզավորման, աշխատանքների պլանավորման, որոշումների կայացման, ՀՀ Ոստիկանության պատմության վերաբերյալ ոլորտները: Թվարկված ոլորտներում գիտական հրատարակումների ցանկ չի ներկայացվել փորձագիտական խմբին: Ըստ ոլորտների գիտական արդյունքների վերաբերյալ տվյալներ Կրթահամալիրում չեն հավաքագրվել:

2019թ. գիտխորհրդը հաստատել է Կրթահամալիրի գիտահետազոտական ոլորտի ուղենիշները և զարգացման տեսլականը 2019-2023թթ. համար, որում ձևակերպվել է 4 խնդիր՝ իրականացման քայլերով և պլան-ժամանակացույցով: Գիտահետազոտական ոլորտի ուղենիշները և զարգացման տեսլականը նոր է և իրականացման արդյունքներ ըստ ժամանակացույցի դեռ չկան: ԻՎ-ում նշվում է, որ գիտական հետազոտություններում ոստիկանության հետաքրքրությունները արտահայտող ուղղությունների որոշման գործընթացը համակարգված չի իրականացվել, մասնակցել են միայն ներքին շահակիցները:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Գիտահետազոտական գործունեության երկարաժամկետ ռազմավարություն է դիտարկվում ՌՊ-ն՝ սահմանված առանձին նպատակով և 2019թ. հաստատված «ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի գիտահետազոտական ոլորտի ուղենիշները և զարգացման տեսլականը: Վերջիններս հասանելի են ներքին ցանցում՝ անձնակազմի համար:

Միջնաժամկետ ծրագրեր չկան: 2018թ.-ից գիտական աշխատանքների բաժինը կազմում է կարճաժամկետ տարեկան գործողությունների պլան, որը բխեցվում է ՌՊ-ից: Բացի այդ ամբիոնները կազմում են տարեկան աշխատանքային պլաններ, որտեղ առանձին բաժնով ներկայացնում են ԳՀ աշխատանքները, կամ ամբիոնի ԳՀ առաջնահերթությունները: Աշխատանքային պլանները ներառում են գիտական հոդվածների պատրաստում, թեզերի, ատենախոսությունների գրախոսում, մասնակցություն գիտաժողովների և սեմինարների: Սակայն գիտական աշխատանքների բաժնի և ամբիոնների տարեկան պլանները չեն պարունակում քանակական կամ որակական ցուցիչներ, որոնք հնարավորություն կտան գնահատել ԳՀ ռազմավարության իրականացումը և դինամիկան: Հաշվետվություններում ներկայացված է զուտ կատարված գիտական աշխատանքների ցանկը՝ առանց վերլուծելու դրանց համապատասխանությունը ՌՊ վերջնարդյունքներին:

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Կրթահամալիրում հետազոտական աշխատանքները համակարգում են պետի ուսումնական և գիտական աշխատանքների գծով տեղակալը և գիտական աշխատանքների բաժինը:

Իր հետազոտությունների իրականացման և զարգացման քաղաքականությունը Կրթահամալիրը ձևակերպել է ԳՀ ոլորտի ռազմավարության մեջ, սակայն դրա իրատեսականությունն ապահովող ընթացակարգեր դեռ չկան: Ոլորտային գիտական հետազոտություններ չեն իրականացվում համակարգված ձևով: Չնայած նախորդ տարվա համեմատ գիտական և գիտամեթոդական աշխատանքների ցուցանիշը մոտ 76%-ով աճել է, սակայն դիտարկումները ցույց տվեցին, որ ձեռքբերումները հիմնականում ՊԴ կազմի անձնական ջանքերն են: Այլ ուսումնական և գիտական հաստատությունների հետ համատեղ գիտական հետազոտություններ չեն իրականացվում: Տեղական այլ բուհերի հետ գիտահետազոտական համագործակցությունը սահմանափակվում է գրախոսումներով, ուսանողների դերային խաղերի կազմակերպմամբ, կոնֆերանսներին մասնակցությամբ:

2016թ.-ից տպագրվում է «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիրը, որը 2018թ. ընդգրկվել է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունելի գիտական հրատարակությունների ցանկում: 3 տարվա ընթացքում հրապարակվել է ամսագրի 6 համար, որտեղ ընդգրկվել են 37 հայրենական և 75 արտասահմանյան հեղինակների մոտ 88 գիտական հոդված: Կրթահամալիրի անձնակազմը իր ԳՀ աշխատանքներն ամսագրում տպագրում է անվճար: Տպագրվող հոդվածների համար ՄՈՒՀ-ն ունի մշակված ուղեցույց՝ հրատարակությունների տեսակների, գրախոսման և տպագրության երաշխավորման վերաբերյալ, որը տրամադրվում է ամբիոններին: Դասախոսների կողմից իրականացվող գիտական աշխատանքները քննության են առնվում մասնագիտական ամբիոնների նիստերում: Ամբիոնային քննարկումից հետո աշխատանքների վերաբերյալ երաշխավորություն է ներկայացնում նաև գիտական աշխատանքների բաժինը: Բաժնի կողմից ստեղծվել է էլեկտրոնային մասնագիտական գրադարան՝ ՀՀ և արտասահմանյան հեղինակների գիտական աշխատությունների էլեկտրոնային տարբերակներով:

Գործում է ամբիոնների գիտական գործունեության գնահատման կարգ, որով նախատեսվում է տարբեր գիտական աշխատանքների համար 10 միավորանոց գնահատման սանդղակ: Իրականացված գիտական աշխատանքների վերաբերյալ ամբիոնները ներկայացնում են հաշվետվություններ, որոնց հիման վրա ամփոփվում և գիտխորհրդի նիստում հրապարակվում են արդյունքները: Ամենաշատ միավորներ հավաքած ամբիոնը խրախուսվում է «Գիտական գործունեության լավագույն արդյունքները ապահովելու համար» շնորհակալագրով և փոխանցիկ խորհրդանիշ-արձանիկով: ԳՀ աշխատանքների համար ՊԴ կազմի խրախուսման մեխանիզմներ չկան նախատեսված:

Ֆինանսական բաշխումը կատարվում է տարեկան գնումների պլանով, որի մեջ ընդգրկվում են նախատեսված գիտական միջոցառումների և հրատարակչությունների ծախսերը: Հիմնական ծախսերն ուղղվում են գիտաժողովների անցկացմանը, գործուղումներին և հրատարակչությանը: ՄՈՒՀ-ն ինքն էլ է նշում, որ ԳՀ աշխատանքների առևտրայնացման մեխանիզմները բացակայում են: ՄՈՒՀ-ը հետազոտությունը չի դիտարկում որպես եկամտի աղբյուր: Թեպետ, ինչպես Կրթահամալիրի պետը նշեց, ԳՀ ոլորտում ձեռքբերումները ավելի շոշափելի դարձնելու համար ՄՈՒՀ-ը դեռևս չունի մեծ ֆինանսական միջոցներ:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Կրթահամալիրի 2017-2021թթ. արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ՌԾ-ում առանձին խնդիր է դիտարկվում հետազոտությունների միջազգայնացումը: ՄՈՒՀ-ն ունի մի շարք համագործակցության պայմանագրեր, փոխըմբռնման հուշագրեր և համաձայնագրեր շուրջ 13 օտարերկրյա կրթական հաստատությունների հետ: Համագործակցությունը սահմանափակվում է գիտաժողովներին մասնակցությամբ և փոխադարձ այցելություններով: Վերջին 5 տարիներին Կրթահամալիրում կազմակերպվել են 4 միջազգային գիտագործնական կոնֆերանս, որոնց մասնակցել են ՊԴ կազմը և ուսանողները: Կոնֆերանսներին ներկայացված նյութերը խմբագրվում և հրատակվում են «Օրենքի պատվար» ամսագրում: Ըստ ԻՎ-ի՝ միջազգային հեղինակավոր ամսագրերում տպագրվող դասախոսների թիվը փոքր է:

ՄՈՒՀ-ն անդամակցում է միջազգային կազմակերպությունների, այդ թվում. ԱՊՀ մասնակից երկրների ՆԳՆ բուհերի ասոցիացիայի անդամ /2009թ./, ՍԻՊՈԼ-ի հետ կնքված աշխատանքային պայմանագիր /2017թ./ Եվրոպական ոստիկանական քոլեջների ասոցիացիայի անդամ (AEPC) /2017թ./: Հանդիպումների ժամանակ պարզ դարձավ, որ ամբիոնները չեն իրականացրել որևէ համատեղ միջազգային գիտահետազոտական աշխատանք: Ասոցիացիաներին անդամակցության արդյունքում ԳՀ արդյունքները չեն բարելավվել: Չկան համատեղ իրականացվող ԳՀ ծրագրեր՝ չնայած նախատեսվում են համաձայնագրերով:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

2015թ-ից գործում է Կրթահամալիրի ակադեմիայի սովորողներին ԳՀ աշխատանքներում ընդգրկելու և գիտական խմբակների գործունեության կարգը, որի համաձայն ձևավորվել է 5 ուսանողական գիտական խմբակ: Դրանք են. «Հանցագործության և պատժի հիմնահարցերի հետազոտության», «Հանցագործությունների բացահայտման և քննության հիմնահարցերի հետազոտության», «Պետահիրավական առարկաների», «Մասնավոր և քաղաքացիական դատավարության իրավունքի», «Հասարակագիտական առարկաների» գիտական խմբակները, որոնք հաստատված պլանի համաձայն ուսումնական տարվա ընթացքում կազմակերպում են թեմատիկ կլոր սեղան քննարկումներ: Խմբակները ներկայացնում են կիսամյակային և տարեկան հաշվետվություններ: Դիտարկումների արդյունքում պարզվեց, որ ուսանողական գիտական խմբակները ավելի շատ ուսումնական խմբեր են, այլ ոչ թե գիտական: Միտված են առանձնացված թեմաների շուրջ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելուն, ունեն ինտերակտիվ ուսուցման ձևաչափ:

ՄՈՒՀ-ն ուսումնական գործընթացի և հետազոտական գործունեության փոխկապակցման մեխանիզմ է համարում դասախոսների կողմից իրականացվող մեթոդական և հետազոտական աշխատանքները, թեզերի ղեկավարումը: Դասախոսների հետ համատեղ ուսանողների գիտական աշխատանքները եզակի դեպքեր են միայն: Կրթահամալիրում չեն իրականացվում ուսանողների մոտ հետազոտական հմտությունների ձեռքբերմանը միտված լրացուցիչ դասընթացներ:

Բավարարվածությունը հետազոտական և ուսումնական գործընթացի փոխկապակցումից հաստատության դասախոսական և սովորող կազմի կողմից գնահատված չէ:

Դատողություններ: Կրթահամալիրը ձևակերպել է ԳՀ ոլորտի իր ռազմավարությունը՝ հիմքում դնելով այնպիսի հավակնոտ նպատակներ, որոնց իրագործումը ներկա իրադրության, առկա ՊԴ կազմի և ֆինանսական նոր հատկացումների բացակայության պայմաններում վտանգված է: ՀՀ այլ ուսումնական և գիտահետազոտական հաստատությունների հետ այս ոլորտում համագործակցության բացակայությունը հանգեցնում է հետազոտական աշխատանքների առաջընթացի դանդաղ աճին, համատեղ հետազոտական ծրագրերի բացակայությանը: Չնայած թեմատիկ առաջնահերթությունների հաստատմանը՝ դրանք չեն դրվել Կրթահամալիրի ԳՀ աշխատանքների առանցքում, և արդյունքները շոշափելի չեն: ԳՀ ռազմավարության մշակման աշխատանքներում արտաքին շահակիցների (այդ թվում՝ Ուսումնական և այլ գործատուների) չներգրավելը կարող է հանգեցնել սահմանված առաջնահերթությունների և արդի կարիքների միջև կապի խզմանը: Ինչն իր հերթին խոչընդոտում է հետազոտական աշխատանքների շարունակական զարգացմանը և դրա հիման վրա արդյունքների առևտրայնացմանը:

ԳՀ ոլորտի սահմանված տեսլականի իրականացման համար ՄՈՒՀ-ի զարգացման իրատեսական քաղաքականության և համապատասխան ընթացակարգերի բացակայությունը չի ապահովում նպատակների և փաստացի գործունեության միջև կապը:

Չնայած գիտամեթոդական աշխատանքների ցուցանիշների աճին և անվճար տպագրման հնարավորությանը՝ Կրթահամալիրի հետազոտական կարգավիճակի անցումը դեռ հստակ քաղաքականությամբ չի իրականացվում: Հետազոտական աշխատանքների համար համապատասխան անձնակազմի և ֆինանսական խրախուսման մեխանիզմների բացակայությունը, ՊԴ կազմի առկա ծանրաբեռնվածությունը չեն նպաստում մոտիվացիաի աճին և ԳՀ ոլորտի արդյունավետության բարձացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է հետազոտության միջազգայնացման ուղղությամբ Կրթահամալիրի գործադրած ջանքերը՝ կնքված համաձայնագրերն ու միջազգային կոնֆերանսների մասնակցությունը: Սակայն համաձայնագրերի հիման վրա համատեղ հետազոտական ծրագրերի բացակայությունը և միջազգային հեղինակավոր ամսագրերում տպագրումների փոքր թիվը խոսում են համաձայնագրերի նպատակային չգործելու մասին: Կոնֆերասներին և կլոր սեղաններին մասնակցությունը դեռևս չի ապահովում հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Կրթահամալիրում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման հստակ մեխանիզմների բացակայությունն ազդում է ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչի զարգացման վրա: Գործող ուսանողական գիտական խմբակները իրենց ուսումնական բնույթով չեն նպաստում ուսանողների մոտ քննական մտածողության ձևավորմանը և հետազոտական կարողությունների զարգացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ում առկա չեն գիտահետազոտական ռազմավարության իրականացման իրատեսական քաղաքականություն և ընթացակարգեր, չկան այդ ոլորտում այլ ուսումնական հաստատությունների հետ համագործակցության գործող ծրագրեր, հետազոտական գործունեություն իրականացնելու համար բավարար ֆինանսավորում և խրախուսման մեխանիզմներ, չկան միջազգային հետազոտական ծրագրեր, ցածր է ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում, սակավաթիվ են արտասահմանյան ամսագրերում տպագրված հոդվածները, բացակայում են

հետազոտական և ուսումնական գործընթացների միջև փոխկապակցվածության հստակ մեխանիզմները՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Կրթահամալիրը բավարար չափով չի ապահովում հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Եզրակացություն: ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

Կրթահամալիրի ՄԿԾ-ների մասնագրերում սահմանված են ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները՝ ՊԴ կազմ, նյութատեխնիկական և ուսումնաօժանդակ միջոցներ: Կրթահամալիրում դասընթացները կազմակերպվում են 5 մասնաշենքերի 56 լսարաններում: Կրթահամալիրում գործում են ուսումնական 11 կաբինետ, համակարգչային 5 սրահ, ինտերակտիվ ուսուցման 1 կաբինետ: Մասնագիտական հմտությունները զարգացնելու համար կրթահամալիրում գործում են կրիմինալիստիկայի կաբինետ՝ համակարգիչներով, սխեմաներով, զենքերի ցուցանմուշներով և կրիմինալիստիկայի լաբորատորիա՝ դեպքի վայրի զննման դեկորացիայով, հրաձգարան (լազերային և մարտական), իրավաբանական կլինիկա: Կլինիկան ստեղծվել է 2018թ-ի վերջում, որի նպատակն է բարձր կուրսի սովորողների կողմից իրավաբանական խորհրդատվություն տրամադրել հասարակությանը: Մինչ այժմ կլինիկան ունեցել է ընդամենը 4 այցելու: Կազմակերպվել է նաև 12 ուսանողի վերապատրաստման դասընթաց, որի արդյունքում տրվել են հավաստագրեր:

Կրթահամալիրն առաջիկայում վերազինելու է կրիմինալիստիկայի լաբորատորիան, որի համար արդեն իսկ ՀՀ Ոստիկանության հետ պայմանավորվածություն կա մոտ 30մլն դրամի նորագույն սարքավորումների ձեռքբերման համար: Առկա են գրադարան, դահլիճներ (հագեցած տեխնիկական միջոցներով՝ գիտաժողովների, տարբեր բնույթի միջոցառումների համար), ճաշարան, 2 մարզադահլիճ, որոնցից մեկը գտնվում է վերանորոգման փուլում, իսկ մյուսը համալրված է սպորտային վարժասարքերով, ֆիթնես սրահ՝ աղջիկների համար:

Գրադարանային ֆոնդում առկա մասնագիտական գրականության մեծ մասի հեղինակները Կրթահամալիրի ՊԴ կազմից են, հասանելի են նաև թեզերի օրինակները: Գրադարանի գրքերի ընդհանուր թիվը 25393 է, այդ թվում՝ մասնագիտական՝ 16269, գեղարվեստական՝ 9764: 2018թ.-ի դրությամբ գրադարանի հաճախումների թիվը կազմել է շուրջ 1430: Ինչպես ԻՎ-ում, այնպես էլ հանդիպումների ժամանակ ՊԴ կազմը և սովորողները նշեցին, որ մասնագիտական գրականության քանակն անբավարար է, իսկ էլեկտրոնային գրադարանի ռեսուրսները թերի են: Չկա գրադարանային ֆոնդի ամբողջական թվայնացված տարբերակ: Համագործակցության պայմանագրերի համաձայն Կրթահամալիրի ուսանողները հնարավորություն ունեն օգտվելու ՀՀ ազգային գրադարանից:

Կրթահամալիրում գործում է 40 հոգու համար նախատեսված հանրակացարան, որտեղ կարող են բնակվել Կրթահամալիրից առնվազն 60կմ հեռու ապրող սովորողները: Ներկայումս հանրակացարանից օգտվում է 27 սովորող:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Կրթահամալիրի ֆինանսական ռեսուրսների կառավարման քաղաքականության հիմնական ուղղություններն են. ֆինանսական ռեսուրսների պլանավորում՝ ֆինանսական նախահաշվի կազմում, ֆինանսական ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխում, ֆինանսական ռիսկերի կանխատեսում և վերահսկում, այլընտրանքային ֆինանսական հոսքերի ապահովում:

Կրթահամալիրում ֆինանսական հոսքերի կառավարումն իրականացնելու նպատակով կազմվում է բյուջետային մուտքերի և ելքերի տարեկան նախահաշիվ, իսկ ֆինանսական տարվա ավարտից հետո, փաստացի տվյալների վերլուծության հիման վրա, ՀՀ Ոստիկանություն է ներկայացվում տարեկան բյուջեի կատարողականը: Կրթահամալիրի 2018թ. բյուջեի հիմնական եկամտային հոդվածներն ունեն հետևյալ բաշխվածությունը. ուսման վարձավճարները կազմում են բյուջեի մուտքային մասի շուրջ 9.3%-ը, պետական ֆինանսավորումը 90%-ը, այլ եկամուտները՝ 0.7%-ը: Վերջին տարիների ֆինանսական հոսքերի փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարեց-տարի աճել են ինչպես Կրթահամալիրի եկամուտները, որը հիմնականում պայմանավորված է եղել սովորողների թվի և պետական ֆինանսավորման չափաբաժնի ավելացմամբ, այնպես էլ ծախսերը՝ ձեռք բերվող ռեսուրսների և ուսումնական միջավայրի շարունակական բարելավման հետ կապված:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Կրթահամալիրի բյուջեի նախագիծը կազմվում է Կրթահամալիրի պետի, պետի տեղակալի և ֆինանսական բաժնի կողմից, քննարկվում է խորհրդի նիստում և հավանության արժանանալու դեպքում ներկայացվում ՀՀ Ոստիկանության պետի հաստատմանը: Հաշվետու տարվա սկզբին լիազոր մարմին է ներկայացվում գնումների պլանը, որի համաձայն կատարվում են գնումները:

Ուստարվա սկզբին ֆակուլտետների և ստորաբաժանումների պետերը Կրթահամալիրի տնտեսական բաժին են ներկայացնում անհրաժեշտ նյութատեխնիկական և ուսումնաօժանդակ միջոցների վերաբերյալ տեղեկանք:

ՄՈՒՀ-ի իրավական կարգավիճակից ելնելով՝ իրականացվում է ֆինանսական աուդիտ ՀՀ Ոստիկանության ներքին աուդիտի վարչության կողմից: Ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ ամեն տարի տրվում են աուդիտորական եզրակացություններ, որոնց արդյունքների հիման վրա տրվում են առաջարկություններ և իրականացվում բարելավման քայլեր:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Կրթահամալիրի ՄԿԾ-ներում և ՌՊ-ում կա անդրադարձ գործողությունների իրականացման համար պահանջվող ռեսուրսներին: Սակայն ՌՊ-ում առանձին սյունակով պահանջվող մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներից նշված են միայն մարդկային ռեսուրսները:

Թեպետ պետք է նշել, որ ՄՈՒՀ-ը դեռևս չի իրականացրել ռեսուրսային բազայի համապատասխանության ամբողջական վերլուծություն ՌՊ և ՄԿԾ արդյունավետ իրականացման տեսանկյունից, սակայն ռեսուրսներով ապահովվածության խնդիրները ներքին շահակիցների շրջանում վեր են հանվում հարցումների միջոցով՝ առանձին հարցերով անդրադարձ կատարելով: Արդյունքում, լսարանների բարելավման առանձին դեպքեր են արձանագրվել. վերջին տարում իրականացվել է լսարանների վերազինում պրոյեկտորներով և օդորակիչներով: Բացի այդ կրիմինալիստիկայի լաբորատորիայի վերազինման համար գործուն քայլեր են ձեռնարկվում ՄԿԾ պահանջներին բավարարելու համար: Ըստ ֆակուլտետներից ներկայացված կարիքների՝ Կրթահամալիրը ռեսուրսային բազայի համալրման հայտ է ներկայացնում Ոստիկանություն: Կրթահամալիրում առկա ռեսուրսային բազայի հետ մեկտեղ պրակտիկ հմտությունների զարգացման համար օգտագործում է նաև ՀՀ Ոստիկանության բազան՝ ուսանողներին պրակտիկա ուղարկելով գործող ստորաբաժանումներ:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության ներքին ու արտաքին փաստաթղթերի շարժն իրականացվում է գործավարության կարգին համապատասխան: Կրթահամալիրում ներդրվել է փաստաթղթավարման էլեկտրոնային (Mulberry) համակարգը, որն ապահովում է տվյալների փոխանցման և ստացման ուղիղ կապ ՀՀ Ոստիկանության հետ: Կրթահամալիրում փաստաթղթաշրջանառությունը կատարվում է միասնական ներքին ցանցով, որին միացված են շուրջ 300 համակարգիչ և կառավարվում է Կրթահամալիրի միջազգային համագործակցության և SS ներդրման բաժնի կողմից: Սակայն, ինչպես նշված է ԻՎ-ում, Կրթահամալիրի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը դեռևս վերջնականապես ներդրված չէ:

ՄՈՒՀ-ի վերաբերյալ տեղեկատվության տարածումը իրականացվում է հայտարարությունների, տպագիր և էլեկտրոնային մամուլի, ՀՀ Ոստիկանության ինտերնետային պաշտոնական www.police.am կայքի, տեղեկատվական ձեռնարկների, բուկլետների (գրքույկների), 02 շաբաթաթերթի միջոցով:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Կրթահամալիրն, ունենալով զորամասային կարգավիճակ, տարածքների անվտանգությունն ապահովում է շուրջօրյա հերթապահության միջոցով, որը կազմակերպում է ծառայության բաժինը՝ այդ գործընթացում ընդգրկելով նաև սովորողներին:

Դիտարկումները ցույց տվեցին, որ հերթապահություն իրականացնող անձանց համար ստեղծված են բոլոր պայմանները արդյունավետ ծառայության համար:

Ներքին հակահրդեհային անվտանգության ապահովման նպատակով Կրթահամալիրի բոլոր հարկաբաժինների տեսանելի վայրերում փակցված են տարհանման պլան-սխեմա ցուցանակներ և անհրաժեշտ կրակմարիչներ: Սովորողների իրազեկության բարձրացման և արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվելու կարողությունների ձևավորման նպատակով դասավանդվում են «Քաղաքացիական պաշտպանություն» և «Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն» առարկաները (մոդուլները): ՄՈՒՀ-ում գործում է բուժական մաս՝ 1 բժիշկ և 2 բուժքույրով: Բուժական մասի տարածքում տեղակայված են սանհանգույցներ, լոգարաններ, վիրակապարաններ և 2 լազարեթ 12 հիվանդի համար: Բուժական մասն ապահովված է անհրաժեշտ դեղորայքով և բուժսարքերով:

ՄՈՒՀ-ում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված քաղաքականություն և ընթացակարգեր մշակված չեն, համապատասխան ծառայություններ չկան: Կրթահամալիրի շենքային պայմանները հարմարեցված չեն հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Ուսանողներին և դասախոսներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներն են դասավանդողների և սովորողների ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ անցկացվող հարցումները, կազմակերպվող քննարկումներն ու հանդիպումները: Կիրառվող մեխանիզմների արդյունավետության գնահատում ՄՈՒՀ-ը չի իրականացրել:

Սովորողները հնարավորություն ունեն տրամադրվող ռեսուրսների վերաբերյալ իրենց հուզող հարցերը բարձրացնել և ստանալ պատասխաններ նաև ղեկավար կազմի հետ հանդիպումների ժամանակ: ՄՈՒՀ-ում գործող գրեթե բոլոր խորհուրդներում առկա են ՈՒԽ-ից անդամներ, ֆակուլտետներից առկա է մեկական ուսանող ՈՒԽ-ում: Քննարկվող հարցերը ներկայացվում են կուրսերում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ի ռեսուրսները ներկայումս բավարար չափով ապահովում են կրթական ծրագրերի նպատակների իրականացումը: Միաժամանակ, մասնագիտական կաբինետները, լաբորատորիան և լսարանները արդիական տեխնիկական միջոցներով վերազինման անհրաժեշտություն ունեն, ինչի մասին փաստեցին նաև փորձագիտական խմբի հետ հանդիպումների մասնակիցները: Հատկանշական է այն, որ արդեն իսկ միջոցներ են ձեռնարկվել նորացնելու ու վերազինելու մարզական գույքը և Կրիմինալիստիկայի լաբորատորիան: ՄՈՒՀ-ում կատարված հարցումները և հանդիպումների արդյունքները վկայում են, որ սովորողները և ՊԴ կազմը գրադարանային ռեսուրսների բարելավման կարիք է տեսնում՝ մասնավորապես մասնագիտական գրականության, ինչը մտահոգիչ է ՄԿԾ-ների իրականացման և վերջնարդյունքների ձեռքբերման տեսանկյունից:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ում կա ֆինանսական միջոցների բաշխման և վերահսկման կենտրոնացված համակարգ: Տարեկան բյուջեում նախատեսված ծախսերն ուղղված են ՄՈՒՀ-ի նպատակների իրականացմանը, սակայն դրանք մանրամասնեցված չեն ըստ ռազմավարական նպատակների և կրթական ծրագրերի, որն առավել հասցեական և արդյունավետ կդարձներ կատարվող ֆինանսական ներդրումները: Մի շարք առանցքային ոլորտներում (օրինակ՝ հետազոտություն, միջազգայնացում, գրադարանային ռեսուրսներ) սահմանափակ ներդրումները կարող են թուլացնել ռազմավարական պլանի իրականացման արդյունավետությունը:

Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման ոլորտում Կրթահամալիրը որոշակի ձեռքբերումներ ունի: Դրան են նպաստում ներդրված փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության կառավարման համակարգերը, որոնք բավականին հստակեցրել և դյուրինացրել են այդ գործընթացները: Դրանք ապահովում են կարճ ժամանակում տվյալների փոխանցման և ստացման ուղիղ կապ ՀՀ Ոստիկանության և Կրթահամալիրի ստորաբաժանումների միջև:

Կրթահամալիրն ստեղծել է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով: Դրան է նպաստել զորամասային կարգավիճակը և ապահովվածությունը անհրաժեշտ սարքավորումներով և համակարգերով: Բուժական մասն առկա դեղորայքով և սարքավորումներով կարող է ապահովել առողջապահական ծառայության պատշաճ որակ:

ՄՈՒՀ-ում ներդրվել է կրթական միջավայրի գնահատման հարցումների մեխանիզմը՝ կարիքների վերհանման և կրթական միջավայրի կատարելագործման նպատակով: Սակայն հարցումների նպատակային իրականացումը և դրա հիման վրա խնդիրների վերհանման ու լուծման ընթացակարգերը դեռ համակարգված չեն գործում: Հարցումների արդյունավետության գնահատման բացակայությունը կարող է անդրադառնալ արժանահավատ տեղեկատվության հավաքագրման վրա:

Եզրահանգում: Հաշվի առնելով լսարանային և կաբինետային ֆոնդով, նյութատեխնիկական ռեսուրսներով, մասնագիտական սարքավորումներով ապահովված կրթական միջավայրը, ֆինանսական հստակ քաղաքականությունը և դրա հաշվետու իրականացումը, ուսումնական գործընթացի կազմակերպման, հաղորդակցման և փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգերի ներդրումը, անվտանգության և առողջապահական ծառայությունների արդյունավետ իրականացումը, փորձագիտական խումբը գտնում է, որ Կրթահամալիրն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների իրականացման համար:

Եզրակացություն: ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

Կրթահամալիրն իր ռազմավարական նպատակներից է համարում հաշվետվողականությունը, այն է՝ «Կրթական գործընթացի անընդհատության, թափանցիկության և հրապարակայնության ապահովումը»:

Կրթահամալիրում գործում է աստիճանակարգային հաշվետվողականության սկզբունքը, որը սահմանված է ստորաբաժանումների կարգերում: Այն սկսում է ՊԴ կազմից, այնուհետև ամբիոնի և ֆակուլտետի պետերի կողմից ներկայացվող հաշվետվությունները, առանձին բաժինների և ստորաբաժանումների կողմից ներկայացվող եռամսյա, կիսամյակային, իննամսյա և տարեկան հաշվետվությունները: Սակայն ամբիոնների և ստորաբաժանումների ուսումնասիրված հաշվետվությունները վերլուծական բնույթ չեն կրում: Թվարկվում են կատարված աշխատանքները առանց նշելու խնդիրների կամ դրանց հաղթահարման ուղիների մասին:

Կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվությունների հիման վրա Կրթահամալիրի պետը տարեկան հաշվետվություն է ներկայացնում Կրթահամալիրի խորհրդի տարեկան ամփոփիչ ընդլայնված նիստում, որին մասնակցում է նաև ՀՀ Ոստիկանության պետի տեղակալ-կուրատորը: Այնուհետև սահմանված կարգի համաձայն՝ ՀՀ Ոստիկանության շտաբ է ներկայացվում Կրթահամալիրի տվյալ տարվա կատարած աշխատանքների հաշվետվությունը: Տարեկան հաշվետվության քննարկում ևս մեկ անգամ տեղի է ունենում Կրթահամալիրի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ անցկացված ժողովում: Ամփոփիչ հաշվետվությունը իրենից ներկայացնում է ստորաբաժանումների ներկայացրած հաշվետվությունների համախումբը: Այն նույնպես վերլուծական բնույթ չունի: Ինչպես ՄՈՒՀ-ն է նշում իր ԻՎ-ում՝ հաշվետվողականության և հետադարձ կապի գործընթացները սակավ թիրախային են և առավել չափելի գնահատման ցուցիչների կարիք ունեն:

Միայն 2019թ. կազմվել է ռազմավարական պլանի կատարողականի վերաբերյալ 2018թ. հաշվետվություն, որտեղ ներկայացված են կատարված բացթողումներն ու թերացումները, դրանց ուղղությամբ առաջարկություններ: Սակայն այդ հաշվետվությունը ոչ թե հասարակությանը ներկայացնելու, այլ ներքին օգտագործման փաստաթուղթ է: 2019թ. հուլիսին գիտխորհրդի նիստով հաստատվել է Կրթահամալիրի տեղեկատվական-վերլուծական աշխատանքների իրականացման և հաշվետվողականության կարգ, որը դեռ չի կիրառվել:

8.2. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

Որպես ռազմավարական խնդիր սահմանված է հասարակայնության հետ կապերի զարգացումը: Կրթահամալիրի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը հասարակությանը հասցնելու նպատակով օգտագործվում են պաշտոնական կայքը, ֆեյսբուքյան էջը, «Պատիվ ունեմ» ամսաթերթը և այլ զանգվածային լրատվամիջոցներ:

2019թ. կազմվել է Կրթահամալիրի պետի հրաման՝ պաշտոնական կայքէջում տեղեկությունների լուսաբանման գործընթացը կազմակերպելու մասին: Որպես պատասխանատու ստորաբաժանում նշանակվել է միջազգային համագործակցության և SS

ներդրման բաժինը: Կայքում առկա բազմաթիվ փաստաթղթեր և նյութեր միայն վերջերս են ներբեռնվել: Օտար լեզուներով (ռուսերեն, անգլերեն) կայքում ներբեռնումներ չկան: Չնայած դրան՝ ուսանողները և ՊԴ կազմը բավարարված են կայքի գործունեությունից:

ՄՈՒՀ-ն իրականացնում է նաև տարաբնույթ հանդիպումներ և ճանաչողական այցեր դպրոցականների, լրատվամիջոցների, հասարակական և մշակութային կազմակերպությունների հետ: Տարբեր հեռուստաալիքներով կազմակերպվում են հաղորդումներ՝ նվիրված Կրթահամալիրի ուսումնական գործընթացի կազմակերպմանը, առօրյային և դիմորդների ընդունելությանը:

8.3. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

2018թ. հաստատվել է Կրթահամալիրի հանրային կապերի զարգացման հայեցակարգը, որի հիման վրա կազմվել է Կրթահամալիրի վարկանիշի բարձրացման 2019թ. միջոցառումների պլան:

Կրթահամալիրի և հասարակության հետ կապն իրականացվում է տարբեր գործիքներով. ծնողների հետ հանդիպումներ, այցեր դպրոցներ, ներգրավում հասարակական գործընթացներում, EXPO ցուցահանդեսներին: Կիրառվում է նաև համացանցը, մասնավորապես կայքէջում շահակիցները կարող են նաև իրենց հուզող հարցերն ուղղել անձնական նամակի միջոցով «կապը մեզ հետ» հղմամբ: Սակայն ինչպես ՄՈՒՀ-ն է նշում իր զեկույցում՝ այդ գործիքների կիրառումը բավարար համակարգված չէ: Չկան արդյունքների վերլուծություններ:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Կրթահամալիրի հիմնական խնդիրներից է քաղաքացիական հասարակության անվտանգության, հասարակական կարգի պատշաճ պահպանման, ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերի պաշտպանության ոլորտում կրթական, գիտական, մեթոդական, փորձագիտական ծառայությունների մատուցումը:

Տարածաշրջանի ապօրինությունների դեմ պայքարի, թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի, հասարակություն և ոստիկանություն կապի ամրապնդման գործընթացում Կրթահամալիրն ունի իր ներդրումը՝ որպես ՀՀ Ոստիկանության ստորաբաժանում:

Կրթահամալիրը պարբերաբար աշխատանքներ է իրականացնում հանրակրթական դպրոցների աշակերտների և դիմորդների հետ՝ մատուցելով ուսումնատեղեկատվական ծառայություններ, այդ թվում՝ նրանց մասնագիտական կողմնորոշման նպատակով ներգրավելով նաև ՈՒԽ-ին: Կրթահամալիրն իրականացնում է լրացուցիչ կրթական ծրագրեր ՀՀ Ոստիկանության և այլ կառույցների մասնագետներին վերապատրաստելու և թույլտվություն տալու համար՝ «Պահնորդ», «Թիկնապահ» և այլ կարճաժամկետ կրթական ծրագրերով: Բացի դրանցից իրականացվում են տարաբնույթ միջոցառումներ, գիտաժողովներ և հետազոտական աշխատանքներ:

Հասարակության գիտելիքների (արժեքների) փոխանցման նոր մեխանիզմ է «Իրավաբանական կլինիկայի» գործունեությունը, որի նպատակն է հանրությանը տրամադրել

իրավաբանական անվճար խորհրդատվություն՝ միաժամանակ զարգացնելով սովորողների պրակտիկ հմտությունները:

Դատողություններ: Կրթահամալիրը, լինելով ուժային կառույցի մի մաս, ստանձնում է պարտականություն գործող օրենսդրության հիման վրա իր գործունեության մասին ամենամյա հաշվետվության հրապարակման համար: Այդ նպատակին հասնում է՝ կիրառելով աստիճանակարգային հաշվետվողականության սկզբունքը, ինչը նպաստում է հաշվետվողականության ամբողջական և փոխկապակցված իրականացմանը: Պետի ՀՀ Ոստիկանության շտաբ ներկայացվող հաշվետվությունները նպաստում են հիմնական պատվիրատուի և կրթօջախի միջև կապի ապահովմանը: Սակայն հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի բացակայությունը խոչընդոտում է հիմնական խնդիրների և դրանց պատճառների դուրսբերմանը:

Կրթահամալիրի գործունեության մասին տեղեկատվության հրապարակումը տարբեր մեխանիզմների կիրառմամբ հնարավորություն է տալիս ապահովել բավարար թափանցիկություն և հրապարակայնություն հասարակության շրջանում՝ բնականաբար անհրաժեշտության դեպքում գաղտնիության ռեժիմի պահպանմամբ: Կայքի միայն ընթացիկ տարում անհրաժեշտ ներբեռնումներով հարստացումը և օտար լեզուներով տեղեկատվության բացակայությունը ազդում է տեղեկատվության տարածման արդյունավետության վրա, սակայն այս ուղղությամբ ՄՈՒՀ-ի սկսած քայլերը որոշակի բարելավման հիմքեր են տալիս:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող քաղաքականության հստակեցմանը միտված հայեցակարգի և Կրթահամալիրի վարկանիշի բարձրացման պլանի հաստատումը: Չնայած տարբեր մեխանիզմների առկայությանը, դրանց կայունության ապահովումն ու համակարգված կիրառումը դեռ պատշաճ մակարդակի վրա չեն: Իսկ վերլուծությունների բացակայությունը փորձագիտական խմբին թույլ չի տալիս գնահատել դրանց հետազդեցությունը Կրթահամալիրի գործունեության վրա:

Փորձագիտական խումբը բարձր է գնահատում Կրթահամալիրի մեծ ավանդը հասարակությանը գիտելիքի և արժեքների փոխանցման գործում: Անվտանգության, հասարակական կարգի պահպանման, ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերի պաշտպանության ոլորտում հասարակությանը մատուցած ծառայությունները Կրթահամալիրին հնարավորություն են տալիս ստանձնել առանձնահատուկ դեր հայաստանյան բուհական համակարգում՝ լրացուցիչ ոլորտային լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացմամբ:

Եզրահանգում: Հաշվի առնելով Կրթահամալիրում հաշվետվողականության հստակ գործող համակարգը ներքին և արտաքին շահակիցների համար, իրականացվող ընթացակարգերի, գործընթացների թափանցիկության ու հասանելիության համար կիրառվող մեխանիզմները, հանրային կապերի զարգացմանն ուղղված քաղաքականությունը, հասարակությանը ոլորտին առնչվող գիտելիքների (արժեքների) փոխանցման բնագավառում ունեցած առանձնահատուկ դերը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը համապատասխանում է չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 8-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում են արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

Կրթահամալիրի 2017-2021թթ. ՌՊ-ում 9-րդ ռազմավարական ուղղությունը սահմանում է արտաքին կապերի և միջազգային գործունեության ընդլայնում: Նախատեսվում է ընդլայնել և բազմազանեցնել Կրթահամալիրի միջազգային կապերը, խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում, ընդլայնել Կրթահամալիրի միջազգային գիտական համագործակցությունը, ձգտել հաստատության ներգրավմանը եվրոպական հետազոտական տարածքին:

Բացի այդ հաստատվել են «արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման 2017-2021թթ. ռազմավարական ծրագիրը» և դրա իրականացման պլան-ժամանակացույցը: Կրթահամալիրի զարգացման ուղղությունների շարքում կարևորվում է մերձեցումը ԵԲԿՏ-ին՝ միաժամանակ պահպանելով և զարգացնելով ավանդական համագործակցային կապերը ԱՊՀ, հատկապես ՌԴ ՆԳՆ, ինչպես նաև Չինաստանի բուհերի հետ:

Պլան-ժամանակացույցում մի շարք միջոցառումներ՝ նախատեսված 2017-2019թթ. համար, դեռևս իրականացված չեն: Օրինակ, օտար լեզուներով ՄԿԾ-ների մշակում, օտարերկրյա ուսանողների համար խորհրդատվական հարթակի ստեղծում, օտարերկրյա ուսանողներին վերաբերող ընթացակարգերի մշակում, նրանց հետ մշտական կապի պահպանում տեղեկատվական էլեկտրոնային ցանցի միջոցով և այլն:

ՌՊ-ն և միջազգայնացման ՌԾ-ն մշակվել են նույն 2017-2021թթ. համար, սակայն դրանց միջև կապը հստակ չէ: Մասնավորապես, ՌՊ-ում սահմանված որոշ քայլեր ՄՌԾ-ում բացակայում են. միջազգային ամառային դպրոցի ներդրում և աշխարհագրության ընդլայնում, նպաստում ուսանողական կազմակերպությունների ներգրավմանը միջազգային ծրագրերում, անձնակազմի մասնակցության խթանում շարժունության ծրագրերին և այլն:

Արտաքին կապերի ու միջազգայնացման քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ չի իրականացվել: Միջազգայնացման համար ՄՈՒՀ-ի կայքում տեղադրված փաստաթղթերը չեն պարունակում օտար լեզվով թարգմանություններ:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

Կրթահամալիրի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման գործընթացները համակարգում է Միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժինը, որն ունի 8 հաստիք:

Բաժնի կանոնադրական խնդիրներում կան. միջազգային համագործակցության շրջանակներում կրթական նորագույն մոդելների, ուսուցման տեխնոլոգիաների ուսումնասիրություն և ներդրում, որակյալ կադրերի պատրաստման գործում կրթական գործընթացների առաջավոր միջազգային փորձի ուսումնասիրում: Սակայն բաժնի տարեկան հաշվետվությունների ուսումնասիրությունը վկայում է, որ գործընթացների գերակշռող մասը արարողակարգային և SS ապահովման բնույթ է կրում: Կրթական գործընթացի վրա անմիջական ազդեցության, միջազգային փորձի ուսումնասիրման, տեղայնացման և ներդրման աշխատանքները, միջազգային կրթական և հետազոտական ծրագրերի փնտրման և հայտերի ներկայացման աշխատանքների մասին հիմքեր չկան: Բաժնի պետի հետ հանդիպման ժամանակ պարզվեց, որ նմանատիպ գործընթացներ չեն էլ սկսվել: Միջազգայնացման պատասխանատու բաժնի հաշվետվությունները հիմնված չեն հաստատված ռազմավարության վրա, չեն դիտարկվում առանցքային ցուցիչները, նպատակների իրականացման դինամիկան, այլ փոխարենը կատարված միջոցառումների թվարկում են: Այսինքն, բաժնի ընթացակարգերը չեն հիմնվում ՄՈԾ պլան-ժամանակացույցի վրա և չեն ապահովում վերջինիս իրականացումը:

Բաժնի պետը նշանակվել է CEPOL-ի ցանցային մենեջեր և ԵԱՀԿ տարածաշրջանում իրավապահ մարմինների կրթական հաստատությունների միջև տեղեկատվության և փորձի փոխանակման առցանց հարթակի (Ոստիկանության ակադեմիաների ցանց/PAN) ազգային պատասխանատու, սակայն հանդիպումների ժամանակ պարզվեց, որ Կրթահամալիրի անձնակազմի մեծամասնությունը տեղյակ չէ CEPOL-ից և դրա ընձեռած հնարավորություններից: Բաժնի աշխատակիցներն անցել են վերապատրաստման մասնագիտացված դասընթացներ (վերապատրաստման երկամյա ծրագիր ՀՀ դիվանագիտական դպրոցում, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում «Darknet» համակարգի ուսուցման), ունեն հավաստագրեր, տիրապետում են օտար լեզուների:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Կրթահամալիրը համագործակցության պայմանագրեր, արձանագրություններ, փոխըմբռնման հուշագրեր և համաձայնագրեր է կնքել 19 օտարերկրյա կրթական հաստատությունների հետ, այդ թվում անդամակցում է մի քանի միջազգային ոստիկանական կրթական հաստատությունների ասոցիացիաների: Սակայն այդ համաձայնագրերից քչերն են գործնականում կիրառվում: Իսկ գործող համաձայնագրերից, ինչպես ԻՎ-ում էլ նշվում է, նախատեսված ոչ բոլոր կետերն են իրականացվում: Օրինակ, այցի ժամանակ պարզվեց, որ Լեհաստանի հետ կնքված համաձայնագրի շրջանակներում միայն 1 միջոցառում է իրականացվել, CEPOL-ի ընձեռած հնարավորությունները չեն օգտագործվում ամբողջությամբ:

Համագործակցության փաստացի արդյունքը անձնակազմի գործուղումներն են, այդ թվում արտերկրում դասընթացների մասնակցությունը և միջազգային կոնֆերանսները: Այսպես, վերջին 3 տարիների ընթացքում Կրթահամալիրի 83 ծառայող (որից 42-ը ՊԴ կազմից) գործուղվել են աշխարհի շուրջ 12 երկրներ, իսկ 10 սովորող՝ Վրաստան և ՌԴ: Միջազգային համագործակցության շրջանակներում Կրթահամալիրի 55 աշխատակից մասնակցել է տարբեր, այդ թվում՝ միջազգային, ծրագրերի շրջանակներում կազմակերպված դասընթացների: Բացի այդ, Կրթահամալիրում կազմակերպվել են 4 միջազգային

գիտագործնական համաժողով և 1 միջազգային ոստիկանական ասոցիացիայի (ԵՈՔԱ) գործադիր կոմիտեի նիստ: 2016թ. կազմակերպվել է ՆԳՆ (ոստիկանության) ղեկավար կազմի պատրաստման, մասնակից պետությունների ՆԳՆ (ոստիկանության) բուհերի ասոցիացիայի ամենամյա սպարտակիադան:

Տեղական բուհերի և գիտակրթական կենտրոնների հետ կնքված համագործակցության պայմանագրեր չեն ներկայացվել փորձագիտական խմբին: Որևէ այլ բուհի հետ համատեղ կրթական և հետազոտական ծրագրեր չեն իրականացվում: Միջազգային փոխանակման ծրագրերում սովորողների և դասախոսների ներգրավվածություն, շարժունության դեպքեր չկան՝ չնայած որոշ համաձայնագրեր նման հնարավորություն ստեղծում են: Վերջին 3 տարիների ընթացքում օտարերկրյա ուսումնառողներ, օտար լեզուներով դասավանդվող դասընթացներ Կրթահամալիրում չեն եղել, բայց նախատեսված են եղել ռազմավարությամբ: Քիչ են հրապարակումները միջազգային ամսագրերում:

Միջազգային համագործակցության շնորհիվ Կրթահամալիրի ՄԿԾ-ների և այլ գործընթացների բարելավման հիմքեր ներկայացված չեն: Համագործակցության արդյունավետության գնահատման համար մեխանիզմներ չկան:

ԻՎ-ում նշվում է, որ արդյունավետ համագործակցությանը խոչընդոտում են Կրթահամալիրի ծառայողների և սովորողների շրջանում անգլերենի իմացության ոչ բավարար մակարդակը, ինչպես նաև ոչ ժամանակակից նյութատեխնիկական հագեցվածությունը և ֆինանսական միջոցները:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Կրթահամալիրի վարչակազմի, ՊԴ և ՈՒՕ անձնակազմի համար 2012թ.-ից կազմակերպվել են անվճար անգլերեն լեզվի դասընթացներ, իսկ ուսանողների համար 2015թ.-ից ձևավորվել են լեզուների ամբիոնին կից գործող անգլերենի և ֆրանսերենի ակումբները և 2017թ.-ից՝ պարսկերենի ուսուցման խմբակը: Սակայն այդ պարապմունքներին մասնակցությունը ակտիվ չի եղել: Մասնավորապես, հանդիպումների ժամանակ արձանագրվեց, որ դասախոսները մեծամասամբ ծանրաբեռնվածության պատճառով չեն կարողացել մասնակցել, իսկ ուսանողների մոտ եղել է մոտիվացիայի պակաս: Արդյունքում, ներկայումս Կրթահամալիրում օտար լեզվի իմացության մակարդակը անձնակազմի և ուսանողների մոտ բավական ցածր է, ինչը ՄՈՒՀ-ն առանձնացնում է, որպես միջազգայնացման գործընթացների հիմնական խոչընդոտներից մեկը: Չկան մշակված հստակ ընթացակարգեր, որոնք կնպաստեն օտար լեզվի իմացության բարձրացմանը ներքին շահակիցների շրջանում, չնայած ՄՈՒՀ-ն այդ խնդիրը վերհանել է: Չեն ուսումնասիրվել նաև կազմակերպված դասընթացների արդյունավետությունը լեզվի իմացության մակարդակի բարելավման տեսանկյունից:

Դատողություններ: Չնայած նրան, որ Կրթահամալիրն իր ռազմավարական փաստաթղթերով պլանավորում է ընդլայնել արտաքին կապերը և զարգացնել միջազգայնացման գործընթացները, սակայն գործող ընթացակարգերը չեն համապատասխանեցվել դրանց պլան-ժամանակացույցներում պլանավորված միջոցառումներին և ժամկետներին: Արդյունքում առաջացել է խզում փաստացի իրավիճակի

և ռազմավարության միջև: Իրականացվող գործընթացների և ըստ էության միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու համար ներկայացված ծրագրի անհամապատասխանությունը վտանգի տակ է դնում ռազմավարությամբ որդեգրած քաղաքականության իրականացումը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում միջազգայնացման գործընթացների համար պատասխանատու առանձին բաժնի առկայությունը, սակայն բաժնի կանոնադրության կարևոր գործառույթներ, որոնք ըստ էության պիտի նպաստեին միջազգայնացման միջավայրի ստեղծմանը, դեռ չեն իրականացվում: Արդյունքում, միջազգային համագործակցության ազդեցությունը Կրթահամալիրի ՄԿԾ-ների և այլ գործընթացների վրա գրեթե բացակայում է: Կազմակերպված գործուղումներն, իհարկե, նպաստում են անձնակազմի զարգացմանը, սակայն ՄԿԾ-ների բարելավման վրա ազդեցություն չունենալով, չխթանելով համատեղ կրթական կամ հետազոտական ծրագրերի ստեղծմանը, միջազգային պարբերականներում հրատարակությունների աճին, նպատակայնության տեսանկյունից դառնում են ոչ արդյունավետ:

Տեղական և միջազգային բուհերի, գիտակրթական կենտրոնների հետ թույլ համագործակցությունը հանգեցնում է Կրթահամալիրի մեկուսացված զարգացմանը և առաջավոր կրթական ու գիտական հաստատությունների հետ փորձի փոխանակման պակասին:

Կրթահամալիրի միջազգային համագործակցության պայմանագրերը նպաստում են միջազգային ասպարեզում վերջինիս ճանաչմանը: Սակայն պայմանագրերի ամբողջական գործելու դեպքում հնարավոր կլիներ ապահովել միջազգային մակարդակում ՄՈՒՀ-ի զարգացումը և ռազմավարական նպատակներին հասնելը: Փորձագիտական խումբը գտնում է, որ Կրթահամալիրը լիարժեքորեն չի օգտագործում ստեղծված արտաքին կապերն իր ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման, կրթական և հետազոտական ծրագրերի զարգացման համար: ՌՊ-ում ամրագրված միջազգային հավակնությունները համակարգված ձևով չեն իրականացվում: Ընդհանուր առմամբ, կնքված հուշագրերը և պայմանագրերն ամբողջությամբ կյանքի կոչված չեն:

Անձնակազմի և ուսանողների շրջանում օտար լեզվի (անգլերենի) իմացության աստիճանը բարձրացնելու նպատակով Կրթահամալիրի կազմակերպած դասընթացները էական ազդեցություն չեն ունեցել խնդրի լուծման համար: Օտար լեզուների տիրապետման ցուցանիշները դեռևս ցածր են և շարունակում են մնալ միջազգայնացման հիմնական խոչընդոտներից մեկը: Մյուս կողմից Կրթահամալիրն այս խնդրի լուծման համար նպատակաուղղված քաղաքականություն չի իրականացնում: Կայքէջում միջազգային ծրագրերի և համագործակցության վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը, առավել ևս ռուսերեն և անգլերեն լեզուներով տեղեկատվության անհասանելիությունը խոչընդոտում են միջազգայնացմանը և Կրթահամալիրի ճանաչելիությանը միջազգային ոստիկանական ակադեմիական հարթակում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Կրթահամալիրում միջազգայնացման գործընթացները չեն ապահովում ոլորտի համար մշակված ռազմավարության իրականացումը, կրթական և հետազոտական փոխանակման ծրագրերը, ուսանողների և ՊԴ կազմի շարժունությունը բացակայում են, բուն ուսուցման գործընթացի վրա միջազգային համագործակցության ազդեցությունը բացակայում է, ՌՊ-ում ամրագրված միջազգային հավակնությունների

իրականացման ուղղությամբ համակարգված գործողություններ չեն իրականացվում, իսկ անգլերեն լեզվի իմացությունը լուրջ խնդիր է միջազգայնացման գործընթացների զարգացման տեսանկյունից, կարելի է եզրակացնել, որ արտաքին կապերը դեռևս բավարար չափով չեն նպաստում փորձի փոխանակմանը և զարգացմանը, ինչպես նաև հաստատության միջազգայնացմանը:

Եզրակացություն: Կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 9-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

2017թ. հաստատված են «Կրթահամալիրի որակի ներքին ապահովման քաղաքականությունը» և «Կրթահամալիրի մասնագիտական կրթության որակի ապահովման հայեցակարգը»: Կրթահամալիրի ՈԱ քաղաքականությունը միտված է սահմանելու կրթության որակի ապահովման սկզբունքները, մոտեցումները և ուղղությունները: Սակայն ՈԱ ուղղությունները առանձնացված են հայեցակարգի որակի ապահովման գործընթացներ բաժնում, որը ներառում է. որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի իրացում, կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների հաստատում, մշտադիտարկում և կրթական ծրագրերի պարբերական վերանայում, սովորողների գնահատում, ՊԴ համակազմի որակի ապահովում, ուսումնական ռեսուրսների և աջակցության ապահովում, տեղեկատվական համակարգերի ներդրում, հանրային իրազեկվածության ապահովում:

2018թ. մշակվել է Կրթահամալիրի կրթության որակի ապահովման ձեռնարկը, որում նույնությամբ տեղադրվել են քաղաքականությունը և հայեցակարգը: Ավելացվել են Կրթահամալիրում հաստատված կարգերը և ռազմավարական ծրագրերը, ուսանողների և շրջանավարտների սոցիարցման հարցաթերթերը: Հստակեցված չեն որակի ապահովման քաղաքականության առաջնահերթությունները և նախատեսվող քայլերը: Քաղաքականության հիման վրա հաստատված ընթացակարգեր չկան՝ բացառությամբ հարցումների անցկացման 2018թ. հաստատված կարգի: Սակայն հարցումների մեխանիզմն էլ դեռ նոր է ներդրվում և կարգի պահանջի համաձայն՝ համակարգված չի իրականացվում: Հարցումների արդյունքում որակական և համեմատական վերլուծություններ չկան: Գնահատված չէ մեխանիզմի արդյունավետությունը:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

2017թ-ից որակի ապահովման գործընթացների կառավարումը Կրթահամալիրում իրականացնում է կրթության որակի ապահովման բաժանմունքը (ԿՈԱԲ), որն ունի պետ և 3

աշխատակից: Աշխատակիցներից 2-ը կես դրույքով են աշխատում: Մինչ այդ, 2016թ. ձևավորվել էր որակի ապահովման խումբ: Բաժանմունքի գործառույթները կանոնակարգված են: ԿՈԱԲ-ը ինքնակառավարվող մարմին է, որը հաշվետու է Կրթահամալիրի պետին: Բաժինը հաշվետվությունները ներկայացնում է նաև գիտխորհրդի նիստերի ժամանակ:

ԿՈԱԲ-ի նախաձեռնությամբ ստեղծվել է Ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողով, որը քննարկում է Կրթահամալիրում մշակվող իրավանորմատիվային փաստաթղթերը: ՈԱ գործընթացներն արդյունավետ կերպով իրականացնելու նպատակով Կրթահամալիրում 2017թ. ստեղծվել են Ֆակուլտետների և ամբիոնների ՈԱ մշտական պատասխանատուներ, որոնց մասնակցությունը ՈԱ գործընթացներին դեռ թույլ է: ՈԱ համակարգը Կրթահամալիրում դեռ ներդրման փուլում է: Փորձագիտական դիտարկումները ցույց տվեցին, որ ՈԱ գործընթացների համակարգված և նպատակային իրականացնելու համար ԿՈԱԲ անձնակազմը և ՈԱ պատասխանատուները մասնագիտական վերապատրաստումների խիստ կարիք ունեն:

Բաժանմունքին հատկացված է 2 աշխատասենյակ՝ համապատասխան նյութատեխնիկական ռեսուրսներով և կահավորմամբ: Ելնելով ՄՈՒՀ-ի իրավակազմակերպչական ձևի և ֆինանսների կառավարման առանձնահատկությունից, կրթության որակի ապահովման գործընթացների համար առանձնացված բյուջե չի հատկացվում, իսկ նյութական միջոցների հատկացումն իրականացվում է զեկուցագրերի հիման վրա:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

Կրթահամալիրն իր ՈԱ քաղաքականության սկզբունքներից է համարում ընդգրկվածությունը, համաձայն որի՝ կարևորում է շահառուների, այդ թվում՝ ՈՒԽ ներկայացուցիչների ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում, որակի ապահովման հանձնաժողովներում և գործընթացի մշտադիտարկմանը: 2017թ. հաստատվել է ՈՒԽ որակի ապահովման հանձնաժողովի կանոնակարգը, սակայն մինչ օրս նման հանձնաժողով չի ստեղծվել:

Ներքին շահակիցների մասով անմիջական ներգրավվածությունը սահմանափակվում է հարցումների մասնակցությամբ և փաստաթղթերի քննարկումով: Հարցումներ են արվել առկա սովորող ուսանողների և դասախոսների հետ: ՈԱ գործընթացներին արտաքին շահակիցների ներգրավվածության հիմքեր չկան: Իրականացվել է միայն շրջանավարտների հարցում 2017-2018 ուստարում: Ինչպես Կրթահամալիրն է նշում ԻՎ-ում՝ արտաքին շահակիցներին որակի ապահովման գործընթացներին ներգրավելու մեխանիզմների պակաս կա: Բացի այդ, Կրթահամալիրի բնորոշմամբ՝ առկա է արտաքին շահակիցների կողմից որակի ապահովման գործընթացների ոչ միանշանակ ընկալում և գործընթացներին մասնակցելու մոտիվացիայի պակաս: Սակայն այս խնդիրների լուծմանն ուղղված հստակ քայլեր ԿՈԱԲ-ը դեռ չի ձեռնարկել:

Ներքին և արտաքին շահակցների կարիքների ուսումնասիրման համար հիմնական մեխանիզմ է դիտարկվում հարցումը, որի համար 2018թ. հաստատվել է անցկացման կարգը: Արդյունքների բովանդակային վերլուծություններ չկան, վերհանված խնդիրների հիման վրա բարելավման դեպքերը եզակի են: Խոշոր խնդիրների դուրսբերման և բարելավման նպատակային ուսումնասիրություններ և միջոցառումներ չկան:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

ԿՈԱԲ կանոնադրությամբ որպես խնդիր սահմանված է Կրթահամալիրի ՈԱ քաղաքականության և ռազմավարության մշակումն ու պարբերաբար վերանայումը: Որակի ապահովման համակարգի ստեղծումը Կրթահամալիրում սկսվել է 2017թ., հիմնական փաստաթղթային հիմքերը հաստատվել են վերջին տարիներին: Ըստ ներկայացված հիմքերի՝ ՈԱ գործընթացները նոր են մտնում իրականացման փուլ: ՈԱ համակարգի արդյունավետության գնահատում Կրթահամալիրը չի իրականացրել: Չկան դրա համար ստեղծված գնահատման և վերանայման մեխանիզմներ: Հետևաբար վերանայում ևս դեռ չի իրականացվել:

Որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ դեռ չի իրականացվել: Տեղական բուհերի հետ ՈԱ քաղաքականության փորձի փոխանակման և համատեղ ուսումնասիրություններ չեն արվել: Համաձայնություն է ձեռք բերվել ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի հետ որակի ապահովման համակարգի փոխադարձ ուսումնասիրման, բենչմարքինգ իրականացնելու համար: Կրթահամալիրի ներկայացուցիչները 2019թ. մայիսի 13-18-ը այցելել են համալսարան: Արդյունքում բենչմարքինգ դեռ չի իրականացվել:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Կրթահամալիրի ՈԱ քաղաքականության մեջ ամրագրված է գործընթացների՝ փաստերով հիմնավորվածության սկզբունքը, ըստ որի՝ ՈԱ գործընթացների իրականացումը և բարելավումը պետք է հիմնված լինեն տվյալների հավաքման և վերլուծման միջոցով ստացված իրական փաստերի վրա:

Կրթահամալիրը ՈԱ արտաքին գնահատման հիմք է դիտարկում ԻՎ-ն և կից փաստաթղթերը: ԻՎ-ում ներկայացված որոշ աղյուսակային տվյալներ մոտավոր թվեր են և հիմնված չեն հավաստի վերլուծությունների վրա, իսկ որոշ պահանջվող աղյուսակներ պարզապես լրացված չեն: ԻՎ-ում վերլուծական բաղադրիչը թույլ է և նկատվում է ինքնավերլուծության փորձի պակաս: Փաստաթղթերի ուսումնասիրությունը և այցի ժամանակ դիտարկումները փաստեցին, որ որակի ապահովման որոշ գործընթացների փաստաթղթավորումը հիմնված չէ իրական տվյալների վրա: Օրինակ. Կրթահամալիրը նշում է, որ գործատուների շրջանում հարցումներ են արվել, սակայն այցի ժամանակ պարզվեց, նման հիմքեր չկան: Ուսանողների մասնակցայնությունը հարցումներին նույնպես պատշաճ ապահովված չէր: Հանդիպմանը մասնակցած ուսանողներից քչերն էին տեղյակ հարցումներից: Հեռակա ուսուցման ձևի ուսանողների հետ հարցումներ չեն արվել: Հանդիպմանը մասնակցած շրջանավարտները նույնպես երբևէ հարցման չէին մասնակցել՝ չնայած Կրթահամալիրը ներկայացրել էր շրջանավարտների հարցման վերլուծություն: Հարցումների հիման վրա որակական, բովանդակային վերլուծություններ չկան: Արդյունքները տրամաբանական կապերով հիմնավորված չեն:

Ֆոկուս խմբային քննարկում է իրականացվել ԿՈԱԲ կողմից «Դասախոսական աշխատանքի բարելավում» թեմայով: Ամբիոնների հետ զրույցներ են վարվել դասախոսների կարիքների մասին: Խնդիրներ չեն ընդհանրացված և կապված չեն հարցումների

արդյունքների հետ: Ներկայացված վերլուծությունը առանց ստորագրման է և առանց նշելու, թե ում է զեկուցվում:

Օտար լեզուներով կայքում տեղեկատվություն չկա՝ չնայած նման հնարավորություն ստեղծված է: Միջազգային փորձագիտական գնահատման համար բավարար հիմքեր չկան:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

ՈԱ հայեցակարգային սկզբունքի համաձայն՝ Կրթահամալիրը հնարավորության սահմաններում կապահովի շահառուներին տրամադրվող տեղեկատվության մատչելիությունը, ճշգրտությունը և կարևորությունը:

Կրթահամալիրն իր գործընթացների որակի մասին տեղեկատվությունը ներքին և արտաքին շահակիցների հասանելի դարձնելու հիմնական մեխանիզմ դիտարկում է կայքը: Կայքում տեղեկատվությունը համակարգված սկսել է թարմացվել և հարստացվել միայն հավատարմագրմանն ընդառաջ, պետի առանձին հրամանով: ԿՈԱԲ վերլուծություններ դեռ տեղադրված չեն:

2019թ. հավատարմագրմանն ընդառաջ կազմվել է նաև Կրթահամալիրի անձնակազմի հետ «Բուհի հավատարմագրման նշանակությունը, գործընթացն ու չափանիշները» թեմայով հանդիպումների ժամանակացույց, որի համաձայն իրականացվել են հանդիպում-քննարկումներ: ՈԱ գործընթացների արդյունքների մասին անձնակազմը հիմնականում տեղեկացվել է նմանատիպ հանդիպումների և գիտխորհրդի նիստերի ժամանակ:

Հարկ է նշել, որ Կրթահամալիրը տպագրել է իր ինքնավերլուծությունը շահակիցների համար:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Կրթահամալիրի որակի ներքին ապահովման համակարգը դեռ նոր է ներդրվում, բավականաչափ ինտեգրված չէ գործընթացներում և համակարգված չի գործում: Չնայած հաստատված քաղաքականության և հայեցակարգի, իսկ հետո նաև Որակի ապահովման ձեռնարկի՝ դեռևս ՈԱ գործուն համակարգ ձևավորված չէ: ՈԱ քաղաքականության և հայեցակարգում հստակ առանձնացված ՈԱ ուղենիշների, ոլորտների և ընդհանուր մարտավարության բացակայությունը հանգեցրել է նրան, որ ԿՈԱԲ-ը համակարգված, տրամաբանական շղթայով կապված աշխատանքներ չի իրականացրել: Դրանք ավելի շատ դեկլարատիվ բնույթի ձևակերպումներ պարունակող, քան ուղենիշային փաստաթղթեր են: Չկան հստակեցված մեխանիզմներ, որոնք թույլ կտան գնահատել Կրթահամալիրի գործընթացների շարունակական բարելավումը և որակի մշակույթի ներդրումը: ԿՈԱԲ առանձին միջոցառումների իրականացումը համակարգված բնույթ չի կրում, չի նպաստում ստորաբաժանումների գործունեության արդյունավետության աճին, արդյունքները դեռևս նպատակային ազդեցություն չունեն գործընթացների վրա: Թույլ է համագործակցությունն ու փոխադարձ կապը ԿՈԱԲ-ի և այլ ստորաբաժանումների միջև, ինչը խոչընդոտում է լավագույն փորձի հայտնաբերմանն ու տարածմանը: ՈԱ գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմների և բովանդակային վերլուծությունների բացակայությունը հնարավորություն չի տալիս գնահատել ՈԱ գործընթացների ազդեցությունը ՄԿԾ-ների և Կրթահամալիրի գործունեության բարելավման վրա:

Առանձնացված ոլորտների և այդ ոլորտներում հստակեցված տվյալների հավաքագրման մեխանիզմների բացակայությունը թույլ չի տալիս իրականացնել արդյունավետության հիմնավորված գնահատում և ունենալ որակի ներքին գնահատման միասնական համակարգ:

Հաշվի առնելով Կրթահամալիրի կառուցվածքը և ուսանողների թվակազմը՝ ստեղծված ԿՈԱԲ-ը 4 աշխատակիցներով կարող է ապահովել ՈՆԱ գործընթացների կառավարումը: Սակայն գործունակ թիմ ստեղծելու համար ԿՈԱԲ-ի անձնակազմի և ՈԱ պատասխանատուների համար փորձագիտական խումբը հետագա մասնագիտական վերապատրաստումների խիստ կարիք է տեսնում: Բաժանմունքին տրամադրված նյութական և ֆինանսական ռեսուրսները բավարար են անհրաժեշտ գործունեության իրականացման համար:

Որակի ապահովման գործընթացներում Կրթահամալիրի ներքին շահակիցների ներգրավվածությունը դեռևս պասիվ է, իսկ արտաքին շահակիցներն ընդհանրապես դեռ ներգրավված չեն: Կրթահամալիրը նոր է սկսել քայլեր ձեռնարկել այս ուղղությամբ: Ներքին շահակիցների առանձին ներկայացուցիչների ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողովի կազմում ներգրավելը ամբողջական կազմի ներգրավվածություն չի ապահովում: Հաշվի առնենք նաև, որ հանձնաժողովը միայն վերջերս է ձևավորվել և աշխատանքները դեռևս չեն ծածկում կանոնակարգում նշված նպատակներն ու խնդիրները: Այս ամենը խոչընդոտում է որակի ապահովման գործընթացների հանդեպ շահակիցների վստահության ձևավորմանը:

Որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգի բացակայությունը թույլ չի տվել Կրթահամալիրին դրանց արդյունավետության համեմատական գնահատում իրականացնել և ՈԱ համակարգի վերանայման անհրաժեշտ ուղղություններ առանձնացնել:

ՈԱ համակարգի առկա մեխանիզմները դեռևս չեն ապահովում բավարար հիմքեր արտաքին գնահատման համար, ինչը ՈԱ տվյալների հավաքագրման հուսալի մեխանիզմների և վերլուծողական գործելակերպի բացակայության հետևանք է:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ԿՈԱԲ-ի քայլերն ուղղված ներքին շահակիցների հետ ՈԱ հարցերի քննարկում ստեղծելու ուղղությամբ: Սակայն դեռևս չի ապահովում Կրթահամալիրի գործընթացների որակի մասին տեղեկատվությունը արտաքին շահակիցների համար, ինչը հանգեցնում է ԿՈԱԲ-ի աշխատանքների մեկուսացման:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ: Հաշվի առնելով, որ Կրթահամալիրի որակի ներքին ապահովման համակարգը բավարար ինտեգրված չէ ՄԿԾ և այլ գործընթացներում, նրա ազդեցությունը գործընթացների վրա թույլ է, ՈԱ միջոցառումները համակարգված չեն իրականացվում, որակական վերլուծությունները և դրանց հիման վրա բարելավման քայլերը եզակի են, ինչպես նաև ամբողջական տեղեկատվության հավաքագրման և գործունեության որակական արդյունքների հրապարակման խիստ անհրաժեշտությունը՝ կարելի է փաստել, որ որակի ապահովման համակարգը դեռ բավարար չափով չի նպաստում գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇԸ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ
I. Առաքելությունը և նպատակները	**Բավարարում է**
II. Կառավարումը և վարչարարությունը	**Բավարարում է**
III. Մասնագիտության կրթական ծրագրերը	**Բավարարում է**
IV. Ուսանողները	**Բավարարում է**
V. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը	**Բավարարում է**
VI. Հետազոտությունը և զարգացումը	**Չի բավարարում**
VII. Ենթակառուցվածքը և ռեսուրսները	**Բավարարում է**
VIII. Հասարակական պատասխանատվությունը	**Բավարարում է**
IX. Արտաքին կապերը և միջազգայնացումը	**Չի բավարարում**
X. Որակի ներքին ապահովման համակարգը	**Չի բավարարում**

Գագիկ Քթրյան
Փորձագիտական խմբի ղեկավար

26 նոյեմբերի 2019թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ

Գագիկ Քթրյան – 2005թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի բակալավրիատը՝ «մաթեմատիկա» մասնագիտությամբ: 2007թ.՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրան՝ «ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտությամբ: 2010թ. շնորհվել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան «Հաշվողական մաթեմատիկա» մասնագիտությամբ՝ «Բազմաչափ բազմանդամային միջարկման և Գասքա-Մաեզթուի վարկածի վերաբերյալ» թեմայով: Հետազոտությունների ոլորտը ներառում է բազմաչափ բազմանդամային միջարկումը (ինտերպոլյացիա), սովորական և մասնական ածանցյալներով դիֆերենցիալ հավասարումները և այլն: 2008թ.-ից դասավանդում է բարձրագույն կրթության համակարգում: 2012–2015թթ. կրթական բարեփոխումների գծով պրոռեկտոր և որակի ապահովման կենտրոնի ղեկավար է եղել Մովսես Խորենացու անվան համալսարանում, 2015–2018թթ. որակի ապահովման և վերլուծության բաժնի պետ (2-րդ դասի խորհրդական)՝ ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանում: 2018թ. նոյեմբերից մինչ այժմ աշխատում է ՀՀ ՊՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունում՝ որպես հասարակայության հետ կապերի բաժնի պետ-վարչության պետի տեղակալ (1-ին դասի խորհրդական): Մասնակցել է բարձրագույն կրթության որակի բարձրացման հարցերին նվիրված մի շարք համաժողովների: 2012թ.-ին մասնակցել է «Որակի ներքին ապահովումը ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում» թեմայով վերապատրաստմանը: 2015թ.-ից փորձագետ է ՀՀ բուհերի հավատարմագրման գործընթացներում:

Եժի Կոշինսկի – 1987թ. ավարտել է Սլովակիայի տեխնոլոգիական համալսարանի ավտոմատ կառավարման համակարգերի ֆակուլտետը Գլյիցեում և ստացել Էլեկտրոնիկայի և Համակարգչային գիտությունների մագիստրոսի որակավորում: 1993թ. ընդունվել է Շչիտնոյի բարձրագույն ոստիկանական դպրոցը՝ ավագ սպաների համար: 2003թ. ընդունվել է Վարշավայի ազգային պաշտպանության ակադեմիայի ասպիրանտուրա և պաշտպանել թեկնածուական ատենախոսություն ռազմական գիտությունների ոլորտում, իսկ 2015թ. Գդինիայի ծովային ակադեմիապաշտպանել է սոցիալական գիտությունների դոկտորի ատենախոսություն անվտանգության ոլորտում:
1993-ից մինչև 2018 թվականը աշխատել է Շչիտնոյի բարձրագույն ոստիկանական դպրոցում՝ Հեռահաղորդակցման և տեղեկատվական ծառայությունների ամբիոնի SS փորձագետից հասնելով մինչև գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի պաշտոնի:
2018 թվականի մայիսից նա Գդինիայում գտնվող Լեհաստանի ռազմածովային ակադեմիայի հրամանատարական և ռազմածովային գործողությունների ֆակուլտետի պրոֆեսոր է:

Հակոբ Հովհաննիսյան – 2009թ. ավարտել է Հայաստանի Պետական Ճարտարագիտական համալսարանի «Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի» ֆակուլտետի

բակալավրիատը՝ «ԷՀՄ կոնստրուկտավորող» մասնագիտությամբ: 2011թ.՝ նույն ֆակուլտետի ճարտարագիտության մագիստրատուրան՝ «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» մասնագիտությամբ: 2009թ.-ից դասավանդում է «Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում՝ որպես ծրագրավորման դասախոս: 2015թ.-ից նույն հաստատությունում համակարգել է Որակի ապահովման ներքին կառույցը մինչև 2019թ.-ը: 2014-2018թթ. ՄԿՈՒՀԱԿ - ի կողմից երաշխավորվել է, որպես վերապատրաստող մասնագետ մոդուլային ուսուցում իրականացնող կրթական հաստատության դասավանդողների համար: 2019թ.-ից աշխատում է համատեղությամբ «Երևանի ինֆորմատիկայի քոլեջ» ՊՈԱԿ - ում որպես դասախոս: Մասնակցել է միջին մասնագիտական կրթության որակի բարձրացման հարցերին նվիրված մի շարք համաժողովների: 2017-2018թթ.-ին մասնակցել է «Որակի ներքին ապահովումը ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում» թեմայով Ֆորումին: 2018թ.-ից փորձագետ է ՀՀ միջին մասնագիտական կրթություն իրականացնող հսատատությունների հավատարմագրման գործընթացներում:

Տիգրան Խաչիկյան - 2008-2012թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում, որն ավարտել է գերազանցության դիպլոմով: 2014թ. ավարտել է նույն ֆակուլտետի մագիստրատուրան: 2014-2017թթ.սովորել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտուրայում. իրավաբանական գիտությունների թեկնածու է: 2013-2015թթ. աշխատել է որպես ՀՀ հատուկ քննչական ծառայության իրավական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, 2015-2016 թթ.՝ իրավական ապահովման բաժնի պետի տեղակալ, 2016 թ.՝ բաժնի պետ: 2019 թ. ապրիլ-հուլիս ամիսներին աշխատել է ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ: 2015 թ. առ այսօր ՀՀ արդարադատության ակադեմիայի դասախոս է: 2016 թ. առ այսօր ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս է, 2018թ. առ այսօր ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դասախոս: 2017թ. առ այսօր Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի իրավաբանական կլինիկայի տնօրենն է, 2019թ. սեպտեմբերից առ այսօր Արբիտրների բարձրագույն դպրոցի դասախոս է: 2016 թ.-ից ՀՀ դատավորների թեկնածուների որակավորման ստուգման գրավոր քննության արդյունքների բողոքարկման հանձնաժողովի անդամ է, 2016թ.–ՀՀ արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի՝ հանրային իրավունքի ոլորտի փորձագետ: Պարգևատրվել է ՀՀ Ազգային ժողովի նախագահի և ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի շնորհակալագրերով:

Ելենա Հարությունյան –2016 թ. ընդունվել է ԵՊՀ-ի Միջազգային հարաբերություններ ֆակուլտետի քաղաքագիտության բաժինը: 2017-2018 թթ. «Անկախ դիտորդ» կազմակերպության շրջանակներում իրականացրել է դիտորդական առաքելություն: 2018թ-ից առ այսօր աշխատում է «ՄԻՏՔ» Կրթական-Երիտասարդական նախաձեռնություն ՀԿ-ում:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

16.09.2019թ.-20.09.2019թ.

	16.09.2019թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում կրթահամալիրի պետի հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում պետի տեղակալների և Ակադեմիայի պետի հետ	10:30	11:20	50 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի ներկայացուցիչների հետ (10-12 մասնակից)	11:30	12:20	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե
5.	Հանդիպում կրթահամալիրի գործունեությունը համակարգող ՀՀ ոստիկանության ներկայացուցիչների հետ	13:45	14:45	60 րոպե
6.	Հանդիպում կրթահամալիրի խորհրդի ներկայացուցիչների հետ	15:00	15:45	45 րոպե
7.	Հանդիպում Ակադեմիայի շրջանավարտների ներկայացուցիչների հետ (10-12 շրջանավարտ)	16:00	16:50	50 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:00	18:00	60 րոպե

	17.09.2019թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում ֆակուլտետների պետերի հետ	09:30	10:30	45 րոպե
2.	Հանդիպում ամբիոնների պետերի հետ	10:40	11:25	45 րոպե
	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (10-12 դասախոս)	11:35	12:20	45 րոպե
3.	Այցելություն ֆակուլտետներ և փաստաթղթերի ուսումնասիրություն	12:30	13:30	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:40	14:30	60 րոպե
5.	Այցելություն ամբիոններ և փաստաթղթերի ուսումնասիրություն	14:40	15:40	60 րոպե
6.	Հանդիպում վարչությունների, բաժինների և բաժանմունքների պետերի հետ	15:50	16:35	45 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:30	18:00	90 րոպե

	18.09.2019թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում բակալավրատի ուսանողների ներկայացուցիչների հետ (10-12 ներկայացուցիչ, վճարովի, անվճար)	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում մագիստրատուրայի ուսանողների ներկայացուցիչների հետ (10-12 ներկայացուցիչ, վճարովի, անվճար)	10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում ուսանողական խորհրդի ներկայացուցիչների հետ (10-12 ներկայացուցիչ)	11:50	12:50	45 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	13:50	50 րոպե
5.	Հանդիպում գիտական խմբակների ներկայացուցիչների հետ (10-12 ներկայացուցիչ)	14:00	14:45	45 րոպե

6.	Հանդիպում գիտական խմբակների ղեկավարների հետ	14:55	15:35	45 րոպե
7.	Ռեսուրսների դիտարկում	15:45	16:45	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:50	18:00	70 րոպե

	19.09.2019թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում Ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողովի կազմի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում ԿՈԱԲ աշխատակազմի և Որակի ամբիոնային պատասխանատուների հետ	10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում քոլեջի ղեկավարության հետ	11:45	12:45	60 րոպե
4.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	12:45	13:15	30 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:15	14:15	60 րոպե
6.	Հանդիպում քոլեջի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (10-12 դասախոս)	14:30	15:20	50 րոպե
7.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների ներկայացուցիչների հետ (10-12 շրջանավարտ)	15:30	16:20	50 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:30	18:00	90 րոպե

	20.09.2019թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Ռեսուրսների դիտարկում	10:40	11:50	70 րոպե
3.	Հանդիպում քոլեջի ուսանողների ներկայացուցիչների հետ (10-12 ներկայացուցիչ)	12:00	12:50	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:10	16:50	160 րոպե
6.	Ամփոփիչ հանդիպում կրթահամալրի ղեկավարության հետ	17:00	17:30	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանումը	Չափորոշիչ
1.	Պետի հրամանով հաստատված Ռազմավարական պլանի մշակման խմբի կազմը	1.1
2.	Ռազմավարական պլանի մշակման ընթացակարգերը	1.1
3.	Խորհուրդների նիստերի արձանագրությունները/անդամացանկով/	1.2
4.	Կրթահամալիրի ստորաբաժանումների հաշվետվությունները/2016թ/	1.2
5.	Հաստատված էթիկայի նորմեր	2.1
6.	Կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվողականության միասնական կարգը	2.2
7.	ՄԿԾ մշակման աշխատանքային խմբերի ստեղծման հրամաններ, հաշվետվություններ	3.1
8.	Աշխատաշուկայի պահանջների վերլուծություն ՄԿԾ –ների վերջնարդյունքների համապատասխանեցման համար	3.1
9.	Կրթական ծրագրի փորձաքննության հանձնաժողովների արձանագրություններ կամ հաշվետվություններ	3.1
10.	Կրեդիտների բաշխման մեթոդաբանությունը, ձեռնարկը	3.1
11.	ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի 27.12.2017թ թիվ 588-Ա և 25.05.2018թ. թիվ 240-Ա հրամանները	3.1
12.	Արտասահմանյան մեթոդական վերապատրաստումների մասնակիցների ցուցակը	3.2
13.	Կուրսային աշխատանքի պատրաստման ու պաշտպանության, դիպլոմային աշխատանքի և մագիստրոսական թեզի ընտրության, պատրաստման և պաշտպանության կարգերը	3.3
14.	Ավարտական աշխատանքներ, մագիստրոսական թեզեր	3.3
15.	Ընթերակաների արձանագրությունները, վերլուծությունները	3.3
16.	Օմսկի ակադեմիայի կրթական ծրագրի վերլուծության հիմքերը, հաշվետվությունները	3.4
17.	Ուսանողների և դասախոսների փոխանակումն ու շարժունությունն ապահովող գործող համաձայնագրերը	3.4
18.	ՄԿԾ մշտադիտարկման, բարելավումների, փորձագիտական կարծիքների հիմքերը	3.5
19.	Գործատուների, շրջանավարտների, դասախոսների կլոր սեղան-քննարկումների արձանագրությունները և հաշվետվությունները	3.5
20.	Ոստիկանական միջին մասնագիտական կրթական ծրագիրը	3.5
21.	Դպրոցներ այցերի վերաբերյալ հաշվետվություններ	4.1
22.	Ընդունող հանձնաժողովի հաշվետվությունը ընդունելության վերաբերյալ և ԿՈԱԲ վերլուծությունները ընդունելության հաշվետվությունների վերաբերյալ / վերջին 5 տարիների/	4.1
23.	Ուսանողների հետ ժամանակացույցով սահմանված հանդիպումների արձանագրությունները, հանդիպումներից հետո դրանց լուծման մեխանիզմները	4.2
24.	Ուսումնական խորհրդատվությունների և լրացուցիչ պարապմունքների անցկացման ժամանակացույցը, մատյաններ	4.3
25.	Ուսանողների վարչակազմին դիմելու կանոնակարգը	4.4
26.	ՀՀ Ոստիկանությունում ծառայության անցած ուսանողների ցանկը/ վճարովիից/	4.4

27.	Գիտահետազոտական պրակտիկաների օրագրերը	4.5
28.	Ուսանողների գիտական զեկույցները, աշխատանքները, հոդվածները	4.5
29.	Ուսանողի ձեռնարկը	4.6
30.	ՊԴ և ՈՒՕ կազմի ընտրության քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետության վերլուծությունները	5.1
31.	Դասախոսների հաշվետվությունները, Ամբիոնի պետի գնահատումները դասախոսների անհատական աշխ. պլանների կատարման վերաբերյալ	5.3
32.	Կրթահամալիրի պետի, պետի 1-ին տեղակալի, ՈՒՄ և Զ վարչության պետի, ակադեմիայի պետի, պետի տեղակալի, ֆակուլտետի պետի, մագիստրատուրայի բաժանմունքի պետի հսկողական դասալսումների ակտերը	5.3
33.	ՊԴ կազմի պարգևատրումների ցանկը/ վերջին 5 տարիների/	5.3
34.	Մանկավարժական հմտությունների կատարելագործման պարապմունքին մասնակիցների ցանկը, մասնակցության մատյանները, արդյունքների գնահատման վերլուծությունները	5.4
35.	Վերապատրաստումները վկայող հիմքերը, մասնակիցների ցուցակը, օրակարգը, ներկայության թերթիկը, թեմաները	5.4
36.	Գործուղումների մասնակիցների ցանկը, այցից հետո բարելավման քայլերը	5.4
37.	Միջին մասնագիտական կրթություն իրականացնող ՊԴ կազմի վերապատրաստումների հիմքեր ցանկը, թեմաները	5.4
38.	Հավելավճարներ ստացողների ցանկը ըստ հաստիքացուցակի	5.5
39.	Սկսնակ դասավանդողների խրախուսման և մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը	5.6
40.	«Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագրերի օրինակները	5.6
41.	Պաշտոնի բարձրացում ունեցող ՊԴ, վարչական և ՈՒՕժ կազմի ցանկը/ վերջին 5 տարիների/	5.6
42.	Վարչական կազմի պաշտոնի անձնագրերը	5.7
43.	ՈՒՕ կազմի պաշտոնի անձնագրերը	5.7
44.	ՌՊ միջանկյալ արդյունքների ձեռքբերման վերլուծությունները	6.1
45.	Արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ՌԾ մշակման խմբի հաստատված կազմը	6.1
46.	Գիտաշխ. բաժնի հաշվետվություններ /2017-2019թթ/	6.1
47.	Գիտական հրատարակումների ցանկ առաջնահերթ սահմանված ոլորտներում	6.1
48.	Ամբիոնների և բաժինների տարեկան պլանները, հաշվետվությունները,	6.2
49.	Մեթոդական խորհրդի արձանագրությունները, հաշվետվությունները	6.3
50.	Ամբիոնների նիստերի արձանագրությունները, Գիտաշխ. բաժնի երաշխավորությունները	6.3
51.	Համաժողովների ժողովածուները	6.3
52.	Գիտական խմբակների աշխատանքային պլաններ, կիսամյակային և տարեկան հաշվետվություններ, գործունեության հիմքեր, արդյունավետության վերլուծությունը	6.3
53.	ՊԴ կազմի հեղինակավոր ամսագրերում տպագրության վերաբերյալ ցուցակը /վերջին 3 տարիների/	6.4
54.	Կրթահամալիրի «հետազոտողի» տարեկան վարկանիշի որոշման կարգը	6.4

55.	Միջազգային համագործակցության պայմանագրերը և հուշագրերը, Իրականացված համատեղ ԳՀ միջոցառումների հիմքերը	6.4
56.	Ասոցիացիաների շրջանակներում ՊԴ կազմի իրականացրած համատեղ հետազոտական աշխատանքների հիմքերը	6.4
57.	Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության արդյունավետությունն արտահայտող հիմքերը և վերլուծությունները	6.5
58.	Ուսումնական միջավայրի բարելավման նպատակներով բյուջեի հատկացումների վերաբերյալ վերլուծություններ	7.2
59.	Կրթաթոշակների հատկացման կարգը	7.3
60.	Գործավարության հաստատված կարգ	7.5
61.	Կրթահամալիրում հատուկ կարիքներ ունեցող ուսանողների ցուցակ	7.6
62.	Ֆակուլտետի խորհուրդի կազմը, ֆակուլտետների խորհուրդների նիստերի արձանագրություններ	7.7
63.	Ուստիկանության պետի տեղակալին կամ ոստիկանության շտաբ ներկայացվող տարեկան հաշվետվությունները պետի անունից	8.1
64.	Ըստ հրամանով հաստատված ձևաչափի ՌՊ հաշվետվությունները	8.1
65.	Հանրային կարծիքի ուսումնասիրման հաշվետվությունները	8.2
66.	Կրթահամալիրի վարկանիշի բարձրացումը ապահովող միջոցառումներ իրականացնող աշխատանքային խմբի հաստատված կազմը /ԸՍՏ ՌԾ-ի ժամանակացույցի՝ 2019 փետրվարին/ Վարկանիշի բարձրացման միջոցառումների պլանի հաշվետվություն	8.3
67.	Իրավաբանական կլինիկայի գործունեության արդյունքները, հաշվետվությունները	8.4
68.	Ըստ պլան-ժամանակացույցի կազմված տարեկան հաշվետվությունները միջազգայնացման վերաբերյալ	9.1
69.	Միջազգայնացման ՌԾ-ի մշակման խումբը՝ կազմված պետի հրամանով	9.1
70.	Դասախոսների և սովորողների շրջանում շարժունության գործընթացի կանոնակարգման ընթացակարգը	9.1
71.	Միջազգային բաժնի ուսումնասիրությունների, բենչմարքինգի փաստաթղթային հիմքեր: Ներկայացված առաջարկությունները կրթական նոր մոդելների վերաբերյալ:	9.2
72.	Միջազգային բաժնի աշխատակազմի վերապատրաստման հավաստագրերը	9.2
73.	Գործուղումների հաշվետվությունները: Կատարված բենչմարքինգի հիմքերը	9.3
74.	Օտար լեզուների ուսուցման լրացուցիչ դասընթացների անցկացման հիմքերը, ցուցակներ, մատյաններ, տոմսեր և այլն	9.4
75.	Որակի ապահովման ձեռնարկի մշակման աշխատանքային խմբի կազմը	10.1
76.	ԿՈԱԲ աշխատակիցների պաշտոնի անձնագրերը	10.2
77.	Ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողովի հաստատված կազմը, նիստերի արձանագրությունները	10.2
78.	ՈՒԽ որակի ապահովման հանձնաժողովի նիստերի արձանագրությունները	10.3
79.	ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի հետ 2019թ. փետրվարի 13-18-ը կրթության որակի մասնագետների հանդիպման արդյունքները	10.3
80.	ԿՈԱԲ վերլուծությունները՝ ֆոկուս խմբերի, հարցումների, տարբեր գործընթացների արդյունավետության	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. ՀՀ ոստիկանության պատմության թանգարան
2. Սակրավորային պատրաստության մասնագիտական լսարան
3. Կրիմինալիստիկայի լսարան
4. Կրիմինալիստիկայի լաբորատորիա
5. Լազերային հրաձգարան
6. Գրադարան
7. Համակարգչային լսարաններ
8. Ամբիոններ /Իրավագիտության ամբիոն, Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոն, Կառավարման ամբիոն/
9. Բուժական մաս
10. Դահլիճներ
11. Իրավաբանական կլինիկա
12. Ֆակուլտետներ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ԲՈԿ – բարձրագույն որակավորման կոմիտե
2. ԳՀ – գիտական հետազոտություններ
3. ԵԲԿՏ - եվրոպական բարձրագույն կրթական տարածք
4. ԵԿԿՓՀ - եվրոպական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգ
5. ԿՈԱԲ – կրթության որակի ապահովման բաժանմունք
6. ՀԿ – հասարակական կազմակերպություն
7. ՄԿԾ - մասնագիտության կրթական ծրագիր
8. ՄՈՒՀ - Մասնագիտական ուսումնական հաստատություն
9. ՆԳՆ- ներքին գործերի նախարարություն
10. ՈԱ - Որակի ապահովում
11. ՈԱԱԿ-<<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամ
12. ՈԱԵՉՈՒ - Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշեր
13. ՈԱՇ - Որակավորումների ազգային շրջանակ
14. ՈԿՀ - Որակի կառավարման համակարգ
15. ՊԴԿ - Պրոֆեսորադասախոսական կազմ
16. ՊԻԳԲ - Պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում
17. ՌԴ – Ռուսաստանի դաշնություն
18. ՌԾ - Ռազմավարական ծրագիր
19. ՌՊ - Ռազմավարական պլան
20. ՏՏ – Տեղեկատվական տեխնոլոգիաներ
21. ՈՒԽ -Ուսանողական խորհուրդ
22. ՈՒՕ – Ուսումնաօժանդակ
23. ԳԽ- Գիտական խմբակ
24. ԿՕ - Կառավարման Օղակ


ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԵՏ
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՒՍՄԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողով
Կրթահամալիրի պետի առաջին տեղակալ
Ուսումնամեթոդական և զարգացման վարչություն
Գիտական աշխատանքների բաժին
Վերապատրաստման և ատեստավորման ֆակուլտետ
Ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման բաժին
Միջազգային համագործակցության և SS ներդրման բաժին
Հատուկ գրադարան
Ընդհանուր գրադարան
Կադրերի և ԱՀՏԱ Բաժին
Ակումբ
Ծառայության բաժին
Հերթապահ ծառայություն
Տնտեսական բաժին
Կոմունալ շահագործման բաժանմունք
Հանդերձանքի, սպառազինության և հատուկ միջոցների ապահովման բաժանմունք
Ավտոծառայության խումբ
Ակադեմիա
Իրավագիտության ֆակուլտետ
Հեռակա ուսուցման ֆակուլտետ
Քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոն
Քրեական դատավարության ամբիոն
Օպերատիվ հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոն
Պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոն
Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոն
Վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոն
Մագիստրատուրայի բաժանմունք
Քոլեջ
Ոստիկանական միջին մասնագիտական կրթության Ֆակուլտետ
Հասարակագիտական առարկաների և հոգեբանության ամբիոն
Ոստիկանության տակտիկական պատրաստականության ամբիոն
Լեզուների ամբիոն
Տեխնիկական առարկաների ամբիոն
Մարտական և ֆիզիկական պատրաստական ության ամբիոն
Ուսումնական կենտրոն
Նախնական մասնագիտական պատրաստականության բաժին
Հատուկ պատրաստականության կրթաճյուղ
Ընդհանուր պատրաստականության կրթաճյուղ
Ավագ իրավախորհրդատու
ՀՀ Ոստիկանության պատմության թանգարան
Քարտուղարություն
Բժշկական մաս
Կրթության որակի ապահովման բաժանմունք
Ֆինանսական բաժին
Գնումների խումբ